



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԷԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ԵՎՐԱՍԻԱ

ԹՈՒՐԶԻԱ  
ԻՐԱՆ

ՈՒՐԵՆ ՍԱՖՐԱՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

**ZUSATZ I**

ԵՐԵՎԱՆ 2012

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

# CONTEMPORARY EURASIA

TURKEY  
IRAN

EDITOR RUBEN SAFRASYAN

VOLUME I

YEREVAN 2012

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

# СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

ТУРЦИЯ  
ИРАН

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСЯНА

ТОМ I

ЕРЕВАН 2012

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆ. **Ռուբեն Սաֆրաստյան**  
(գլխավոր խմբագիր)

պ. գ. թ., դոցենտ **Լիլիթ Հարությունյան**

պ. գ. թ., դոցենտ **Գոհար Իսկանդարյան**

պ. գ. թ., **Վահրամ Տեր-Մաթևոսյան**

**Լևոն Հովսեփյան**

**Նազելի Նավասարդյան** (պատասխանատու քարտուղար)

«Ժամանակակից Եվրասիա» ժողովածուի առաջին հատորն ընդգրկում է Թուրքիայի և Իրանի 2008–2011 թթ. քաղաքական, տարածաշրջանային առանցքային զարգացումներին և անվտանգության խնդիրներին նվիրված վերլուծական ուսումնասիրություններ: Ժողովածուում ներառված են հոդվածներ, որոնք անդրադառնում են Թուրքիայում ՆԱՏՕ-ի ՀՀՊ (Հակահրթիռային պաշտպանության) համակարգի ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման խնդրին և դրա ազդեցությանը տարածաշրջանային զարգացումների վրա:

Նախատեսված է հասարակագետների, դիվանագետների, փորձագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող այլ շրջանների համար:

**EDITORIAL BOARD:**

Prof., Dr. **Ruben Safrastyan**, Corresponding Member of NAS RA,  
(editor in chief)

Assoc. Prof. **Lilit Harutyunyan** (PhD)

Assoc. Prof. **Gohar Iskandaryan** (PhD)

**Vahram Ter-Matevosyan** (PhD)

**Levon Hovsepyan**

**Nazeli Navasardyan** (responsible secretary)

The present volume of the periodical "Contemporary Eurasia" includes analytical studies on Turkey's and Iran's political processes, developments and regional security issues from 2008 to 2011. The separate section contains articles on the deployment of NATO's missile defense system radar station in Turkey and its influence on the regional developments. The volume may be of interest for social scientists, diplomats, experts and students.



**ԹՈՒՐԻԱ**

**ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**  
Թուրքիայի 2008-2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների  
հիմնական առանձնահատկությունները ..... 11

**ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
«Հայկակա քաղաքական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ.  
խորհրդարանական ընտրությունների ընթացքում ..... 40

**ԻՐԱՆ**

**ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**  
ԻԻՀ 2008-2010 թթ. արտաքին և ներքին քաղաքական  
հիմնական խնդիրները ..... 57

**ԱՐՏՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ԻԻՀ-ն 2008-2010 թթ.: Տարեգրություն ..... 84

**ԱՐՏՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ԻԻՀ ռազմական ներուժը հավանական պատերազմի դեպքում ..... 112

**ԹՈՒՐԻԱ ԱՅՈՒՄ ՆԱՏՕ-Ի ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ ԿԱՅԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ**

**ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ**  
Թուրքիայում ՆԱՏՕ-ի միասնական ՀՀՊ համակարգի  
նադիտությունը և ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման  
նազմաքաղաքական նշանակությունը ..... 121

**ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**  
Իրանի դիրքորոշումը Թուրքիայում  
առկա ՌՏԿ-ի հարցում ..... 129

**TURKEY**

**VAHRAM TER-MATEVOSYAN**  
Turkey between 2008 and 2011: Principal Features of Political  
Transformations ..... 11

**ANUSH HOVHANNISYAN**  
The Use of the «Armenian Policy» during the 2011  
Parliament Elections in Turkey ..... 40

**IRAN**

**GOHAR ISKANDARYAN**  
Foreign and Domestic Issues of IRI between 2008-2010 ..... 57

**IRI 2008-2010: Chronology ..... 84**

**ARTSRUN HOVHANNISYAN**  
IRI Defense Capability in Possible War ..... 112

**ON THE ISSUE OF THE DEPLOYMENT OF NATO'S  
MISSILE DEFENCE RADAR SYSTEM IN TURKEY**

**LEVON HOVSEPYAN**  
Military-Political Significance of the Deployment of NATO's Missile  
Defence Radar System in Turkey ..... 121

**GOHAR ISKANDARYAN**  
Position of Iran Regarding the Deployment of Ballistic Missile Radar  
System in Turkey ..... 129

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների արդի պատմության, ներքին և արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը տասնամյակներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետազոտական աշխատանքների կարևոր ոլորտը: Ստեղծվել է պատկանելի քանակ կազմող տարաբնույթ գրականություն, ձևավորվել են հարուստ ավանդույթներ:

Այսօր էլ ինստիտուտում աշխատում են մի շարք քարձրակարգ մասնագետներ, որոնք հաջողությամբ շարունակում են ՀՀ հարակից երկրների ժամանակակից քաղաքականության համակողմանի հետազոտումը: Նրանց աշխատությունները հիմք են հանդիսանալու սույն մատենաշարի համար: Անտարակույս, կիրավիրվեն նաև մասնագետներ ինչպես Հայաստանի այլ գիտական կենտրոններից, այնպես էլ արտերկրից:

Հետագայում նախատեսվում է ընդլայնել հրատարակվող հետազոտությունների և աշխարհագրական շրջանակները, և արձարծվող խնդիրների ու թեմաների ընդգրկումը, ինչը հնարավորություն կտա դիտարկելու և վերլուծելու գործընթացները եվրասիական համատեքստում երևանակենտրոն տեսանկյունից:

# ԹՈՒՐԷՒԱ

**ԹՈՒՐՔԻԱՆ 2008–2011 ԹԹ.:**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՒՍԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ**  
**ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2008–2011 թթ. Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցան մի շարք կարևոր իրադարձություններ, որոնք զգալիորեն փոխեցին Թուրքիայի զարգացման դինամիկան և կանխորոշեցին այն գործընթացները, որոնք տեսանելի ապագայում կսահմանեն Թուրքիայի քաղաքական օրակարգը: Այս ժամանակահատվածի հիմնական առանձնահատկություններից են իշխող կուսակցության հեղինակության ու նրա նկատմամբ հանրային վստահության շարունակական աճը և ներքաղաքական գործընթացներում երկրի զինված ուժերի դերակատարության օրենսդրական սահմանափակումը: Այս ընթացքում փոփոխության ենթարկվեց նաև ներքաղաքական քննարկումների օրակարգը, աշխարհիկության և իսլամականության միջև պայքարից ու ԵՄ ինտեգրման գործընթացից այն շեղվեց դեպի տնտեսական զարգացման ու նոր սահմանադրության ստեղծման հարցերը, ինչպես նաև երկրում խոսքի ազատության սահմանափակման և էրդոզանի կողմից ավտորիտար կառավարման վերաբերյալ քննարկումները:

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ խնդրո առարկա փուլում տեղի ունեցող գործընթացների հիմնական փուլերն ու առանձնահատկությունները, վերլուծել դրանց առանձնացման պատճառները, հնարավոր հետևանքները և առաջիկա տարիների ընթացքում նախատեսվող գործընթացների հիմնական ուղեւիշները: Հոդվածի մյուս նպատակն է պարզել, թե ներքաղաքական գործընթացներն ինչպիսի ազդեցություն են թողել թուրքական հասարակության սոցիալական ու արժեհամակարգային կողմնորոշումների վրա: Հոդվածում կվերլուծվեն վերջին չորս տարիների ընթացքում Թուրքիայում տեղի ունեցած հիմնական

ներքաղաքական գործընթացները և դրանց էական առանձնահատկությունները:

### Քաղաքական գործընթացներ

2008–2011 թթ. կատարված գործընթացները հասկանալու համար կարևոր է հակիրճ անդրադարձը 2007 թ. մի քանի առաջնային իրադարձություններին: 2007 թ. Թուրքիայում տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախորդող և հաջորդող ժամանակահատվածը 2000–ականների ամենաթեժ ներքաղաքական ժամանակաշրջանն էր: 2007 թ. ապրիլին նախագահական ընտրություններում արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի թեկնածության առաջադրման կապակցությամբ ԶՈՒ–ԱԶԿ հակասությունները վերաճեցին անթաքույց հակամարտության, որի կիզակետը դարձավ ապրիլի 27–ին ԶՈՒ ԳԾ–ի ինտերնետային կայքում տեղադրված BA – 08/07 հուշագիր–հաղորդագրությունը, որով ԶՈՒ ղեկավարությունը իշխող կուսակցությանը կոչ էր անում զգուշանալու հանրապետական–աշխարհիկ կարգերը խաթարելու մտադրությունից և խոստանում հակառակ պարագայում դիտորդի դերում չմնալ<sup>1</sup>: Այս քայլն ուղղակիորեն նշանակում էր, որ բանակը վերջնագիր էր ներկայացնում իշխող կուսակցության ղեկավարությանը:

Լարված ներքաղաքական մթնոլորտում 2007 թ. հուլիսի 22–ին, նախատեսվածից 4 ամիս ավելի վաղ, անցկացվեցին խորհրդարանական արտահերթ ընտրություններ: Ընտրություններին ԱԶԿ–ն ներկայացավ այնպիսի քաղաքական ծրագրով, որով հնարավոր կլիներ լիցքաթափել աշխարհիկ–քեմալականների վրդովմունքը, որոնք Էրդողանին և Գյուլին մեղադրում էին Աթաթյուրքի աշխարհիկ ժառանգությունը նենգափոխելու համար: Ինչպես 2002 թ., այնպես էլ 2007 թ. ԱԶԿ–ի կարգախոսն էր «Ամեն ինչ Թուրքիայի համար», իսկ այս անգամ ավելացավ նաև «Կանգնել չկա. ճանապարհը շարունակվում է» կարգախոսը: Ի հեճուկս քեմալականների, հատկապես ԶՈՒ–ի ղեկավարության հարուցած աննախադեպ խոչընդոտների, 2007 թ. հուլիսյան ընտրություններում ԱԶԿ–ն 12%–ով ավելացրեց 2002 թ. ստացած քվեները՝ ստանալով 46,5% վստահության քվե (15,6 մլն քվե), որը մոտ 4,8 մլն քվեով գերազանցեց նախորդ արդյունքը: ԱԶԿ–ն խորհրդարանում ստացավ 341 ման-

<sup>1</sup> 27 Nisan Muhtirasi, [http://www.tsk.tr/10\\_AR\\_SIV/10\\_1\\_Basin\\_Yayin\\_Faaliyetleri/10\\_1\\_Basin\\_Aciklamalari/2007/BA\\_08.html](http://www.tsk.tr/10_AR_SIV/10_1_Basin_Yayin_Faaliyetleri/10_1_Basin_Aciklamalari/2007/BA_08.html)

դատ, ընդդիմադիր Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և Ազգային շարժում կուսակցությունը (ԱԾԿ) ստացան համապատասխանաբար 112 և 71 մանդատ, իսկ անկախ թեկնածուները՝ 25 մանդատ, որոնցից 20–ը խորհրդարանում ձևավորեցին քրդական «Ժողովրդավարական հասարակություն կուսակցություն (ԺՀԿ) խմբակցությունը: ԱԶԿ–ի նման հաղթանակն անակնկալ էր հենց Էրդողանի համար. վերջին 5 տասնամյակի ընթացքում այդ հաջողությունն աննախադեպ էր, և, իրոք, 1954 թ. ի վեր իշխանության ղեկին գտնվող ոչ մի կուսակցության չէր հաջողվել նախորդ ընտրության համեմատությամբ ավելացնել քվեները: «Միլիթեթի» մեկնաբան Հասան Ջեմալի խոսքերով՝ գեներալների ապրիլի 27–ի հոչակագրին «ժողովուրդը պատասխանեց իր հոչակագրով» և ԱԶԿ–ին տված վստահության քվեով ցույց տվեց, որ չի ցանկանում բևեռացում<sup>2</sup>:

2007 թ. ընտրություններից մեկ ամիս անց՝ նախագահական ընտրություններին, ԱԶԿ–ն կրկին առաջադրեց արտգործնախարար Աբդուլլահ Գյուլի թեկնածությունը: Օգոստոսի 28–ին Գյուլն ընտրվեց հանրապետության 11–րդ նախագահ: Երկու ամիս անց՝ հոկտեմբերի 21–ին անցկացված հանրաքվեի արդյունքներով փոխվեց հանրապետության նախագահի ընտրության կարգը. հաստատվեց նախագահի ուղղակի ընտրության սկզբունքը, երկու անգամ ընտրվելու իրավունքը, նախագահության պաշտոնավարման ժամկետը կրճատվեց՝ 7–ից դառնալով 5 տարի, խորհրդարանական ընտրությունները նախկինում յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ անցկացնելու փոխարեն հաստատվեց դրանք 4 տարին մեկ անցկացնելու օրենքը, նվազեց նաև խորհրդարանական քվորումի տոկոսը՝ 67–ից դառնալով 34 %<sup>3</sup>: Այսպիսով՝ 2007 թ. նշանավորվեց ներքաղաքական բուռն գործընթացներով, և ակնհայտ էր, որ աշխարհիկ–քեմալական վերնախավը պատրաստ չէր համակերպվելու ԱԶԿ–ի աճող հեղինակության հետ:

2008 թ. Էրդողանը սկսեց իր ընտրական խոստումների իրականացումը: Այդ շարքում առաջինը համայնարաններում և պետական հաստատություններում գլխաշորի արգելքը վերացնելուն ուղղված ԱԶԿ–ի, ԱԾԿ–ի և ԺՀԿ–ի օրենսդրական նախաձեռնությունն էր: Համաձայն այդ նախաձեռնության՝ փոփոխության

<sup>2</sup> Hasan Cemal, Today's Zaman, 2007, հուլիսի 23:

<sup>3</sup> Kemal Gözler, Halkoylamasina Sunulan Anayasa Degisikligi Kanunlarinda Halkoylamasindan Önce Degisiklik Yapilabilir Mi?, <http://www.anayasa.gen.tr/halkoylamasindan-once.htm>



էին ներկայացված սահմանադրության 10-րդ և 42-րդ հոդվածները, որոնք առնչվում էին հանրային ծառայություններին ու կրթությանը: Փետրվարի 9-ին այդ երկու կուսակցությունների հաջողվեց խորհրդարանում 411 կողմ և 103 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել սեփական նախաձեռնությունը և փոփոխություն կատարել սահմանադրության մեջ: Այդ քայլով լուծվում էր թուրքական հասարակությունը առնվազն երեք տասնամյակ բևեռացնող խնդիրներից մեկը, որի շուրջ քեմալական ու իսլամական շրջանակները սուր բանավեճեր էին ծավալել<sup>4</sup>: Փետրվարի 21-ին նախագահ Գյուլը հաստատեց սահմանադրական փոփոխության փաթեթը, և, թվում էր, երկար տարիներ շարունակվող ներքաղաքական թնջուկը իր վերջնական լուծումն էր ստացել, և գլխաշոր կրող միլիոնավոր կանայք ու աղջիկներ իրավունք էին ստանալու անարգել կրթություն ստանալու պետական համալսարաններում և աշխատելու պետական հաստատություններում: Սակայն ընդդիմադիր ՀԺԿ-ն որոշեց երկրի Սահմանադրական դատարանում (ՍԴ) վիճարկել սահմանադրական փոփոխությունը և այդ նպատակով համապատասխան հայց ներկայացրեց ՍԴ: Հունիսի 5-ին ՍԴ-ն 9 կողմ, 2 դեմ ձայների հարաբերակցությամբ չեղյալ հայտարարեց փետրվարի 9-ին ընդունված սահմանադրական փոփոխությունները: Այսպիսով՝ ՀԺԿ-դատական համակարգ համագործակցության արդյունքում ԱԶԿ-ի նախաձեռնությունը անհաջողություն կրեց՝ հանդիպելով դատական համակարգի և քեմալական վերնախավի համակարգված դիմակայությանը: Հարկ է նշել, որ ՍԴ-ի այս որոշումը հակասահմանադրական էր, քանզի սահմանադրության 148-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ ՍԴ ներկայացված հայցերը ՍԴ-ն իրավունք ունի քննելու և հաստատելու միայն ձևի, սակայն ոչ բովանդակության առումով. օրինակ՝ քվեարկությանը ներկա գտնվող պատգամավորների քանակը, քվորումի ապահովումը և այլն: Հետևաբար, ՍԴ-ն գերազանցեց սահմանադրությամբ ամրագրված լիազորությունները, իսկ այդ կարևոր հարցը շարունակեց դասվել չլուծված խնդիրների շարքին:

Հաշված օրեր անց՝ մարտի 14-ին, Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Աբդուրահման Յալչընքայան «հակաաշխարհիկ գործունեություն ծավալելու» մեղադրականով հայց

<sup>4</sup> Վ. Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Երևան, Լիմուշ, 2008, էջ 178-187:

ներկայացրեց ՍԴ՝ իշխող ԱԶԿ-ի գործունեությունը կասեցնելու վերաբերյալ: Մեղադրականը պահանջում էր ԱԶԿ-ի կառավարման խորհրդի շուրջ յոթ տասնյակ անդամներին 5 տարով զրկել քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից, այդ թվում՝ վարչապետ Էդոդլանին և նախագահ Գյուլին<sup>5</sup>, պահանջում էր նաև տարբեր ժամկետներով ազատազրկումներ: Մի քանի ամիս տևած քննարկումներից հետո՝ հուլիսի 30-ին, ՍԴ-ն 6 կողմ, 5 դեմ ձայների հարաբերակցությամբ մերժեց հայցը (այն փակելու համար հարկավոր էր 7 կողմ), փոխարենը կուսակցությունը ներթարկվեց ֆինանսական պատասխանատվության:

Թուրքիայի քաղաքական պատմությունը ցույց է տալիս, որ եթե ԱԶԿ-ի գործունեությունը դադարեր, ապա, ինչպես նախորդ տասնամյակների ընթացքում, այս անգամ նաև, ամենայն հավանականությամբ, կհիմնադրվեր մեկ այլ իսլամամետ կուսակցություն՝ նույն ղեկավարությամբ կամ նրանց կողմից նշանակված առաջնորդներով, և այդ վերածնված կուսակցությունը շատ ավելի մեծ արդյունքներ կունենար արտահերթ խորհրդարանական ու ՏԻՄ ընտրություններում: Երկրի աշխարհիկ-ազգայնական քեմալականները թույլ չստացին նախորդ տասնամյակի սխալները, փոխարենը գիտակցեցին, որ ԱԶԿ-ն վայելում է հասարակության աջակցությունը, և Արևմուտքի հակազդեցությունը ևս կլինի չափազանց կոշտ:

2008 թ. մարտի 21-ին սկսվեց մեկ այլ սկանդալային գործընթաց. ձախ ձայրահեղ ազգայնական խմբավորումներից մեկի անդամների ձերբակալությամբ սկսվեց «Էրգենեքնի» գործընթացը: Հոկտեմբերի 30-ին Ստամբուլի քրեական դատարանում 86 մեղադրյալների մասնակցությամբ սկսվեց «Էրգենեքնի» դատավարությունը<sup>6</sup>: «Խորքային պետության» մարմնավորումներից մեկը հանդիսացող «Էրգենեքն» գաղտնի կազմակերպության շուրջ սկսված գործընթացները դարձան ԱԶԿ-ի կողմից դատախարակական համակարգի դեմ հմտորեն օգտագործվող երկապի զենք: Այդ գործընթացի արդյունքում ձերբակալվեցին մի շարք հեղինակություններ, որոնց անունները շրջանառվում էին գաղտնի կազմակերպություններ ղեկավարելու, ընդհատակյա գործունեություն ծավալելու և մի շարք այլ աղմկոտ գործերով<sup>7</sup>:

<sup>5</sup> Milliyet, 15.03.2008: Ուշագրավ է, որ համաձայն օրենքի, նախագահի դառնալուց հետո վերջնալու կասեցնում է իր կուսակցական պատկանելությունը:

<sup>6</sup> Gareth Jenkins, *Between Fact and Fantasy: Turkey's Ergenekon Investigation*, Silk Road Paper, August, 2009.

<sup>7</sup> David Hayes, *Turkey and Ergenekon: From Farce to Tragedy*, OpenDemocracy,

Ապրիլի 18-ին հինգ տարի տևած քննարկումների ու հետաձգումների արդյունքում ընդունվեց սոցիալական ապահովության ոլորտում բարեփոխումների իրականացման փաթեթը, որն զգալիորեն փոխեց արտադրահարաբերությունները, ընդլայնեց սոցիալական քաղաքականության մշակման ու իրագործման փուլում պետության հնարավորությունները: 2008 թ. մայիսմեկյան իրադարձությունների կապակցությամբ ԱԶԿ-ի դիրքորոշումը քակական խիստ էր, և նրա հակազդեցությունը՝ Ստամբուլի Թաքսիմ հրապարակում տեղի ունեցած ցույցը բիրտ միջոցներով ցրելու վերաբերյալ, բացասաբար ազդեց կուսակցության հեղինակության վրա: Մայիսի 8-ին Գյուլը ստորագրեց մեկ այլ՝ Քրեական օրենսգրքի փոփոխության փաթեթը, որով վերաշարադրվում էր տխրահռչակ 301-րդ հոդվածը:

2009 թ. սկսվեց Դավոսում Էրդողանի ելույթի շուրջ բարձրացված աղմուկով: Այդ ջայռ բարձրացրեց Էրդողանի հեղինակությունը թե՛ Թուրքիայում, թե՛ այս իսլամադավան երկրներում: 2009 թ. Թուրքիայի ներքաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից մեկը մարտի 29-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն էին: Հանրապետության պատմության ընթացքում 13-րդ ՏԻՄ ընտրություններին մասնակցեցին 21 քաղաքական կուսակցություններ և մի քանի տասնյակ անկախ թեկնածուներ: ՏԻՄ ընտրությունները հասկանալիորեն արժանացան բազմաթիվ մեկնաբանությունների: Դրանք տարբեր էին՝ իշխող կուսակցության մոտալուտ վախճան կանխատեսելուց ընդհուպ մինչև երկրում նոր քաղաքական իրավիճակ ստեղծելու մասին ակնարկներ: Այդ ընտրություններն ունեին մի շարք առանձնահատկություններ: ՏԻՄ ընտրություններում ընտրազանգվածը առավելապես կողմնորոշվում է անհատներով, քան կուսակցություններով: ՏԻՄ ընտրություններում շատ ավելի մեծ է մասնակցությունը. օրինակ՝ վերջին ընտրությունների ժամանակ վեց միլիոնով ավելի ընտրող է մասնակցել ընտրություններին, որն էլ զգալիորեն ընդլայնել է ստացած քվեների քաղաքական աշխարհագրությունը: ԱԶԿ-ի և երկրի իսլամական այլ ուժերի միջև պայքարը ևս ուշագրավ կերպով արտացոլվեց այդ ընտրություններում: 2008 թ. հոկտեմբերին Թուրքիայի քաղաքական իսլամի կնքահայրը՝ Նեջմեթին Էրբաքանը, հրաժարվեց «Երջանկություն» կուսակցության ղեկավարությունից, և Նու-

ման Քուրթուլմուշը ընտրվեց այդ կուսակցության նոր ղեկավար<sup>8</sup>: Առաջին հայացքից ոչինչ չասող այս անունն ու կուսակցական իշխանափոխությունն իրապես ազդեցին ԱԶԿ-ի հեղինակության վրա: Ինդիլիրն այն է, որ նշված «Երջանկություն» կուսակցությունը, կարելի է ստել, ԱԶԿ-ի «երկվորյակն» էր. երբ 2001 թ. ՍԴ-ն «Առաքինություն» կուսակցությունը փակեց, մի քանի օրվա տարբերությամբ հիմնադրվեցին երկու կուսակցություններ՝ «Երջանկությունը» և ԱԶԿ-ն: Քանի որ առավել արմատական իսլամականները ապաստան գտան «Երջանկությունում», ապա ԱԶԿ-ն ստացավ առավել չափավոր ու բարեփոխական կուսակցության հեղինակություն՝ իր կողմը հրավիրելով նաև այն իսլամական ուժերին, որոնք քաղաքական իսլամի անհաջողության հիմնական պատճառ էին տեսնում Էրբաքանին: Այսպիսով՝ Էրդողանը կարողացավ հմտորեն օգտագործել Էրբաքանի դեմ գործող քաղաքական ուժերին. որը տևեց մոտ 7 տարի, սակայն, «Երջանկություն» կուսակցության նոր ղեկավարի ընտրությամբ ԱԶԿ-ն զգալիորեն թուլացրեց իր դիրքերը պահպանողական շրջանակներում: Քուրթուլմուշը հայտնի հեղինակություն էր քաղաքական իսլամը ներկայացնող տարբեր ուժերի շրջանում, և պատահական չէր, որ Էրդողանը քանիցս նրան հրավիրել էր ԱԶԿ և խոստացել բարձր պաշտոններ: Մի խոսքով՝ ընտրությունների հաջորդող և նախորդող մի քանի ամիսների ընթացքում պահպանողական ծայրերին տիրանալու պատճառով Էրդողան-Քուրթուլմուշ հակամարտությունը խորացավ:

ՏԻՄ ընտրություններում «Երջանկություն» կուսակցության ստացած քվեները վերոհիշյալ փաստարկի լավագույն ապացույցն էին: Եթե 2007 թ. խորհրդարանական ընտրություններում այն ժամանակ դեռ Էրբաքանի և Ռեջայի Քուրթուլմուշի կողմից ղեկավարվող «Երջանկություն» կուսակցությունը ստացավ ընդամենը 817 000 քվե կամ 2,34 %, ապա վերջին ընտրությունների ընթացքում, արդեն նոր ղեկավարի պայմաններում այդ կուսակցությունն ավելացրեց իր ձայների քանակը 1 200 000-ով և ստացավ 5,2 %, որն ընտրություններում հինգերորդ արդյունքն էր: Եթե վերջինեք այն հանգամանքը, որ իսլամամետ ԱԶԿ-ի քվեները պակասել են մոտ 900 000-ով, իսկ մեկ այլ իսլամամետ «Երջանկություն» կուսակցության ավելացել էր 1 200 000-ով, ապա կարելի է ենթա-

<http://www.opendemocracy.net/bill-park/turkey-and-ergenekon-from-farce-to-tragedy>; Soner Cagaptay, What's really behind Turkey's Coup Arrests, [http://www.foreignpolicy.com/articles/2010/02/25/whats\\_really\\_behind\\_turkeys\\_coup\\_arrests](http://www.foreignpolicy.com/articles/2010/02/25/whats_really_behind_turkeys_coup_arrests)

<sup>8</sup> Yusuf Kani, "AKP's nightmare: Kurtulmuş", October 28, 2008, [www.turkishdailynews.com.tr](http://www.turkishdailynews.com.tr); Felicity Party's new leader Kurtulmuş says materialism cannot last, Today's Zaman, Monday talks, Interview with Numan Kurtulmuş, <http://www.todayszaman.com/tr-web/detaylar.do?load=detay&link=157632>



դրել, որ «Երջանկություն» կուսակցության օգտին քվեարկել են նաև ԱԶԿ-ի կրոնական ազատականացման քաղաքականությունից ու խոստումներից դժգոհ պահպանողականները:

ԱԶԿ-ն միակ կուսակցությունն էր, որ ՏԻՄ ընտրություններում քվեներ ստացավ Թուրքիայի բոլոր նահանգներից՝ բաժանելով առաջինից երրորդ հորիզոնականները: Թուրքիայի 81 նահանգներից 62-ում ԱԶԿ-ն առաջինն էր: Ընդհանուր առմամբ, ԱԶԿ-ն երկրի հարավ-արևմուտքում թեև զգալի թվով քվեներ կորցրեց, սակայն ընդհանուր առմամբ նա ստացավ ծայրերի 40 %-ը, իսկ քրդական ԴԿԿ-ն՝ 30 %:

ՏԻՄ ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ ԱԶԿ-ին հարկավոր էր շուտափույթ կերպով վերակազմակերպել սեփական քաղաքական առաջնահերթությունները և ներդնել բոլոր լծակները մշակված նոր սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու ուղղությամբ, քանզի դրա հետաձգումը ուղղակիորեն շրջվում է հենց ԱԶԿ-ի դեմ և ծառայում որպես ազդեցիկ ճնշման գործիք: Երկրի ՄԴ-ի արմատական դիրքորոշման շնորհիվ կարևոր օրենսդրական նախաձեռնությունները շարունակվում էին հայտնվել կառավարության ու խորհրդարանի անդամների դարակներում:

ՏԻՄ ընտրություններում ԱԶԿ-ի ստացած քվեների վերլուծությունը վկայում էր մի շարք խնդիրների առկայության մասին: ԱԶԿ-ի առաջնորդները, ակնարկելով կարծրացած պետական համակարգը բարեփոխելու և զգայուն թեմաները լուծելու իրենց ցանկության մասին, ոչ միայն ձեռք բերեցին ազդեցիկ հեղինակություն, այլև դարձան թիրախ պահպանողական շրջանակների ու բանակի համար: Քեմալական վերնախավը, քաղաքական ընկալումների կողմնացույցն ուղղելով դեպի ԱԶԿ, թույլ տվեց համակարգային երկու բացթողում. ա) ԱԶԿ-ն ընկալեց որպես զուտ քաղաքական կուսակցություն՝ անտեսելով կամ թերազնահատելով, որ այն համաթուրքական ընդգրկման իսլամական շարժման շարունակությունն էր քաղաքականության մեջ, բ) ԱԶԿ-ն ընդամենը կամուրջ էր կամ ցատկահարթակ Արևելյան Թուրքիայից սերող նոր բուրժուազիայի ու մտավորականների համար: Եվ երկրորդ՝ քեմալականների կողմից ԱԶԿ-ն սկզբից ի վեր զուգահեռվեց ծայրամասից սերող քաղաքական ուժի հետ, որն ուներ մշտական ուղղորդման ու վերահսկման կարիք:

ԱԶԿ-ն իր հերթին անկառող եղավ հաղթահարելու մի շարք կարծրատիպեր, որոնցից առավել նշանակալից էին նրա ինքնու-

թյան ու անվտանգության հիմնական ուղեկիշների շուրջ ընթացող քննարկումները: Փորձելով օտարվել իսլամական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժի պիտակից՝ ԱԶԿ-ի ղեկավարները առիթը բաց չէին թողնում հավաստիացնելու քեմալականներին, որ իրենք «պահպանողական ժողովրդավարության» սկզբունքի կրող են և հետևաբար ընդհանուր ոչինչ չունեն 1970-ականներից ի վեր երկրի քաղաքական իսլամի հիմնական գաղափարախոսության՝ «Ազգային տեսակետի» հետ: Սույն ձգտումը ԱԶԿ-ին դրոշեց մեկ այլ ծայրահեղության՝ սեփական ինքնության անվերջ փնտրտուքին, որի պատճառով էլ խոցելի դարձավ ամենատարբեր մեղադրանքների ու քննադատությունների համար: Ավելին՝ իր քաղաքական օրակարգի առանցքը դարձնելով մարդու իրավունքների պաշտպանության ու ԵՄ-ի հետ ինտեգրման գործընթացը՝ քննարկումների ուղղությունը մղեց դեպի մեկ այլ՝ իր համար անկառավարելի հարթություն:

ՏԻՄ ընտրությունների մյուս կարևոր հետևանքը Էրդողանի կառավարության կազմում փոփոխություններն էին և ինը նորանշանակ նախարարների նշանակումը: 2009 թ. մայիսի 1-ին Էրդողանը հայտարարեց Բյուլենթ Արընջին առաջին փոխվարչապետ նշանակելու մասին. այդ քայլը ոչ միանշանակ մեկնաբանվեց քաղաքական ու վերլուծական շրջանակների կողմից: Պահպանողական հայացքներ դավանող և հոետորական ծիրքով Էրդողանին գերազանցող Արընջի նշանակումը փոխվարչապետի պաշտոնում վերլուծաբաններն սկսեցին մեկնաբանել որպես կուսակցության պահպանողական թեկ պահանջների բավարարում և դեպի «Երջանկություն» կուսակցություն նրանց հավանական հույսը կանխելու քայլ: Ներկուսակցական ազգայնական տրամադրություններն ուղղորդելու նպատակ էր հետապնդում Ջեմիլ Զիլչեքի դիրքերի ամրապնդումը, որը միաժամանակ զգաղեցնում էր փոխվարչապետի և պետնախարարի պաշտոնները:

Արտգործնախարար Բաբաջանը, որը շուրջ մեկ տարի բանակցում էր Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ, վերադարձավ իր հին՝ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնին, իսկ նոր արտգործնախարար դարձավ Էրդողանի երկարամյա գլխավոր խորհրդական Ահմեթ Դավլաթօղլուն: 2007 թ. օգոստոսից ի վեր, երբ Ա. Գյուլը դարձավ նախագահ, Բաբաջանը ղեկավարում էր արտաքին գերատեսու-

<sup>5</sup> Amberin Zaman, Turkey's Cabinet Reshuffle: Another Balancing Act, German Marshall Fund of the US, www.gmfus.org, p. 1.

թյունը, սակայն Դավութջյուլուն, իր հերթին, սկսեց ավելի ներգրավվել արտաքին քաղաքականության մշակման գործընթացներում: Արևմուտքում Դավութջյուլուի շուրջ կարծիքը ամենևին էլ դրական ուղեծրում չէր, քանի որ նրա անունը շոշափվում էր 2006 թ. հունվարին Համասի առաջնորդ Նաջալի Թուրքիա կատարած այցը կազմակերպելու համար: Շուտով, սակայն, Դավութջյուլուի շուրջ ստեղծված բացասական տրամադրություններն սկսեցին նվազել, նաև՝ Օրբանայի վարչակազմի իշխանության գալուց հետո և ապա՝ Դավութջյուլուի հայտարարությունների համապատասխանում: Նա հայտարարում էր «թուրք-ամերիկյան հարաբերությունների ոսկե դարի» և ամերիկյան մկանի ու թուրքական միջնորդության շնորհիվ տարածաշրջանի խնդիրների մեծ մասը լուծելու մասին:

2009 թ. հաջորդ կարևոր իրադարձություններից մեկը դեկտեմբերին ՍԴ-ի կողմից քրդական ԺՀԿ-ի գործունեության կասեցումն էր: ՍԴ-ի այդ որոշումն երկրի մի շարք բնակավայրերում առաջ բերեց դժգոհության մեծ ալիք, տեղի ունեցան բախումներ, կատարվեցին ձերբակալություններ: Սակայն, ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ փակված կուսակցության անդամները շատ արագ հիմնադրեցին հերթական քաղաքական կուսակցությունը՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն» անվամբ (ԽԺԿ): Պատգամավոր Ուֆուք Արասը միացավ նորաստեղծ կուսակցությանը, և ստեղծվեց 20 պատգամավորից բաղկացած խմբակցություն:

2010 թ. հունվարի 20-ի «Թարաֆ» օրաթերթում տպագրվեց հոդված «Մեծ մուրճ» օպերացիայի մասին, որը բացահայտեց զինվորականների կողմից 2003 թ. ծրագրավորած ռազմական հեղաշրջման պլանները: Այդ աղմկոտ բացահայտումը երկրորդն էր 2008 թ. մարտին բացահայտված էրզեմեքնի գործից հետո, սակայն հերթականը՝ առավել վաղ հայտնի դարձած «Յաքա-մոզ», «Էլդիվեն», «Քաֆես», «Արմատականության դեմ պայքար» ծրագրերի շարքում: Երկու դեպքում էլ ներգրավված էին բարձրաստիճանի զինվորականներ, որոնք էլ ավելի հանրային հնչեղություն հաղորդեցին այդ դեպքերին: Ըստ Թարաֆում հայտնված տեղեկատվության՝ զինվորականները նախատեսում էին հատուկ նշանակության գործողություն իրականացնել ԱՀԿ-ի դեմ՝ երկրում քառսային ու ակվերահսկելի իրավիճակ ստեղծելով, հանրային ընդվզումներ կազմակերպելով: «Մեծ մուրճ» օպերացիան բաղկացած էր մի քանի բաղադրիչներից, որոնք ընդգրկում էին

ահարեկչական գործողություններ Ստամբուլի մզկիթներում մի շարք հասարակական-քաղաքական գործիչների նկատմամբ:

Փետրվարի 23-ին և 26-ին Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցան մոտ 70 բարձրաստիճան գործող և պաշտոնաթող զինվորականների ձերբակալություններ, որոնց շարքում էին Թուրքիայի ԶՈՒ-ի ռազմածովային և ռազմաօդային ուժերի նախկին գլխավոր հրամանատարներ Օ. Օրնեքը և Ի. Ֆըրտլեան, Առաջին ցամաքային զորքերի նախկին հրամանատար, բանակի գեներալ Է. Սայգունը, մի շարք այլ գեներալներ, ծովակալներ, որոնց ներկայացված մեղադրանքում նշվում էր նրանց կապը ահարեկչության հետ, և նրանք մեղավոր էին ճանաչվում 2003 թ. վերոհիշյալ ռազմական հեղաշրջման փորձի կազմակերպման համար: «Մեծ մուրճի» գործով մինչև տարեվերջ ձերբակալվեցին մոտ 200 զինվորականներ, որոնց դեմ դատավարությունը սկսվեց 2010 թ. դեկտեմբերի 16-ին: Պետական մեղադրող կողմը ամբաստանյալների համար պահանջում էր մինչև 20 տարի ազատազրկում<sup>9</sup>:

2010 թ. ոչ պակաս կարևոր իրադարձություններից էր իշխանափոխությունը ՀԺԿ-ում: ՀԺԿ-ի ղեկավար Դենիզ Բայքալի մասնակցությամբ սկանդալային տեսաերիզի շուրջ ծավալված հասարակական-քաղաքական ճնշումների ներքո մայիսի 10-ին նա հրաժարական տվեց: 12 օր անց Անկարայում տեղի ունեցավ կուսակցության 33-րդ արտահերթ համագումարը, որտեղ կուսակցության ղեկավար ընտրվեց ազգությամբ ալևի-քուրդ, մասնագիտությամբ հաշվապահ 62-ամյա Քեմալ Քըլըչդարոլուն: Կուսակցության նոր ղեկավարը քաղաքական հայացքներով, արդարության և կոռուպցիայի դեմ համառ պայքարի իր վճռականությամբ, ինչպես նաև իր պահվածքով ու հազուստի ոճով ցանկանում էր նմանվել Թուրքիայի նախկին վարչապետ Բյուլենթ Էջնիթին<sup>10</sup>:

Սեպտեմբերի 12-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն 2010 թ. Թուրքիայի ներքաղաքական ամենակարևոր իրադարձությունն էր: Այն փոփոխությունները, որոնք ներկայացվեցին հանրաքվեի, տարբերվում էին մինչ այդ 16 անգամ կատարված սահմանադրական փոփոխություններից: Այս անգամ հանրաքվեի էին ներկայացվել Թուրքիայում ԶՈՒ-ի և դատական համակարգի լիազորությունների ու նրանց կողմից ներքաղաք-

<sup>9</sup> A. Гурьев, Ситуация в Турции: декабрь 2010, <http://imes.ru/rus/stat/2011/08-01-11c.htm>

<sup>10</sup> Ալիլի մարտմասն տե՛ս Today's Zaman, 2010, մայիսի 24:



կան գործընթացներին մասնակցության սահմանափակման, ինչպես նաև քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքների ու ազատությունների ընդլայնման հարցերը: Հատուկ կարևորություն էր ներկայացնում դատական իշխանության մարմինների ձևավորման կարգի փոփոխությունը: Ներկայացված փոփոխությունների համաձայն՝ սահմանադրական դատարանի անդամների թիվը 11-ից հասցվում է 17-ի, իսկ դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդի անդամների թիվը՝ 7-ից՝ 22-ի: Հատկանշական է, որ հիշյալ մարմիններում անդամների թվի ընդլայնումը նախատեսվում է իրականացնել շարքային դատավորների ու դատախազների հաշվին, ավելին՝ ՄԴ-ի անդամներից 3-ին ներկայացնում է խորհրդարանը, իսկ մյուսներին՝ նախագահը: Փոփոխությունների փաթեթի համաձայն՝ վերացվում էր նաև սահմանադրության 15-րդ հոդվածը, որն իրավական պաշտպանություն և անձեռնմխելիություն էր ապահովում ռազմական հեղաշրջման կազմակերպիչներին: Մյուս կարևոր փոփոխությունը բարձրագույն զինվորականներին և դատական պաշտուկաներին որպես մեղադրյալ ներգրավելու իրավունքի ամրագրումն էր:

24 հոդվածներից և 3 ժամանակավոր դրույթներից կազմված սահմանադրական փոփոխությունների փաթեթն առաջին անգամ խորհրդարան ներկայացվեց 2010 թ. մարտին: Սանրաման ու երկարատև քննարկումներից հետո փոփոխության ներկայացված հոդվածները ստացան հանրաքվեի ներկայացնելու համար անհրաժեշտ 330 քվե՝ խորհրդարանի ընդհանուր քվեների 5/3-ը՝ բացառությամբ այն հոդվածի, որով կուսակցությունների գործունեության կասեցման գործընթացը առավել բարդանում էր: Մայիսի 7-ին Ա. Գյուլը հավանություն է տալիս փաթեթը հանրաքվեի ներկայացնելու հայտին:

Սեպտեմբերի 12-ին<sup>12</sup> տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններին կողմ քվեարկեցին հանրաքվեի մասնակցած Թուրքիայի քաղաքացիների 58%–ը: Թուրքիայի հանրապետական պատմության ընթացքում թվով վեցերորդ, իսկ ԱԶԿ-ի կառավարման շրջանում արդեն երկրորդ հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ ԱԶԿ-ն շարունակում էր իրականացնել բարեփոխումներ, որոնք նպատակ ունեն կազմաքանդելու տասնամյակներ շարունակվող քաղաքական-գաղափարախոսական

<sup>12</sup> Քվեարկության օրվա ընտրությունը կատարվել էր ի նշան ուղիղ 30 տարի առաջ տեղի ունեցած հեղաշրջման և խորհրդանշական ուղեծր էր պարունակում ուղղված այդ հեղաշրջման կազմակերպիչներին և ՉՈՒ-ի ղեկավարությանը:

հարաբերությունների հիմքերը: Քվեարկության արդյունքում ՉՈՒ-ի և դատական իշխանության սահմանադրական լիազորությունների սահմանափակման արդյունքում ԱԶԿ-ն ստացավ գրեթե անսահմանափակ իշխանություն:

Թեև քվեարկության ներկայացված սահմանադրական փոփոխությունների փաթեթը հաստատվեց, սակայն հանրաքվեին նախորդող ժամանակաշրջանում ՀԺԿ-ի և քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության դիրքորոշումը որոշակի խնդիրներ հարուցեց ԱԶԿ-ի համար: ՀԺԿ-ի նոր նախագահ Քեմալ Քըլըչդարոյուն հանդես էր գալիս հանրաքվեում ներառված հոդվածների քննադատությամբ՝ շեշտելով, որ դրանց հաստատումով ԱԶԿ-ն կստանա անսահմանափակ իշխանություն, և երկրի աշխարհիկ-հանրապետական կարգերը լքողրեն կարող են խաթարվել: Բացի այդ՝ Բ. Քըլըչդարոյուլի համար հանրաքվեին նախորդող քարոզարշավը առաջինն էր կուսակցության ղեկավարի նոր կարգավիճակում, և տարբեր գնահատականներով նա բավական հաջող քարոզարշավ իրականացրեց:

Քրդական կուսակցությունը բոյկոտեց հանրաքվեն, քանի որ փոփոխությունների փաթեթում ներգրավված էին ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրները: ԱԶԿ-ի նման դիրքորոշման պատճառով քրդաբնակ նահանգներում գրանցվեց քվեարկության մասնակցության բավական ցածր մակարդակ:

2010 թ. հանրաքվեում ստացած վստահության քվեն Էրդոգանին դարձրեց ավելի վճռական, և հանրաքվեն նաև դարձավ 2011 թ. խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական գլխավոր փուլը: 2011 թ. հունիսին 12-ին Թուրքիայում տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները: Բազմակուսակցական համակարգի հաստատումից հետո (1946 թ.) այդ խորհրդարանական ընտրությունները 17-րդն էին, որոնց արդյունքում ձևավորվեց հանրապետական Թուրքիայի 61-րդ կառավարությունը: Այդ ընտրություններն առանձնահատուկ էին մի շարք առումներով: 1982 թ. սահմանադրության ընդունումից ու 1983 թ. առաջին խորհրդարանական ընտրություններից հետո, առաջին անգամ, դրանք ոչ արտահերթ էին, այլ՝ ներթափանց: Ինչպես նշվեց, 2007 թ. հոկտեմբերի 21-ի սահմանադրական փոփոխությունների համաձայն, խորհրդարանի գործունեության ժամկետը 5-ից կրճատվեց ու դարձավ 4, այլապես ընտրությունները լինելու էին 2012 թ. հուլիսին: Այսինքն՝ ընտրու-

թյունները մեկ տարի ավելի վաղ տեղի ունեցան սահմանադրական փոփոխություններով պայմանավորված, այլ ոչ թե ինչ–որ քաղաքական հանգամանքներից ելնելով<sup>13</sup>:

Երկրորդ առանձնահատկությունն այն էր, որ 1946 թ. ի վեր, երբ Թուրքիան անցավ բազմակուսակցական համակարգի, միայն Դեմոկրատական կուսակցությանն է հաջողվել 10 տարի անընդմեջ կառավարել երկիրը: Մինչև ընտրությունները ԱԶԿ–ն Թուրքիան ղեկավարել էր 8,5 տարի և կրկին հաղթելով ընտրություններում՝ ձևավորեց արդեն 4–րդ կառավարությունը՝ գործնականում ստանալով ևս 4 տարի պաշտոնավարման իրավունք: Այդ քաղաքական ուժը հավակնում է դառնալու Թուրքիայում բազմակուսակցական համակարգի հիմնադրումից ի վեր ամենաերկար կառավարած քաղաքական ուժը:

Երրորդ առանձնահատկությունն այն էր, որ ընդդիմադիր կուսակցություններն ընտրություններին մասնակցեցին վերաբնաս–տավորված մարտավարությամբ: Խոսքը հատկապես ընդդիմադիր ՀԺԿ–ի մասին է, որի ղեկավարության փոփոխությունը 2010 թ. մայիսին ստիպեց վերանայել 1990–ական թվականներից ճգնաժամ ապրող կուսակցության ղեկավարման սկզբունքները: Կուսակցության նոր ղեկավար Ք. Քըլչըզարոլլուի կողմից ներկայացված նախընտրական ցուցակում ընդգրկվեցին նոր անուններ, ավելին՝ ՀԺԿ–ի 101 գործող պատգամավորներից միայն 23–ի թեկնածություններն էին կրկին ներկայացվել: Այնուհանդերձ, ընտրություններում ցածր վստահության քվե ստանալու պարագայում Քըլչըզարոլլուի հեղինակությունը կարող էր խաթարվել, և վերջին ամիսների ներկուսակցական անառողջ պատակումները կարող էին կրկնվել, քանի որ կուսակցությունը բաժանված էր երեք թևերի՝ գործող նախագահի, կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Օնդեր Սավի և կուսակցության նախկին ղեկավար Դենիզ Բայթայի միջև: Նույնատիպ դժվարություններով էր անցնում նաև «Ազգայնական շարժում» կուսակցությունը, որի ղեկավարության վրա ևս առկա է աննախադեպ ճնշում՝ ազգայնամոլության ու ատելության վրա հիմնված քաղաքական ծրագիրը վերանայելու պահանջով:

ԱԶԿ–ն ևս ընտրություններին մասնակցեց թեկնածուների

թարմացված ցուցակով. նոր ցուցակում պատգամավորության թեկնածուների ընդգրկման սկզբունքը մեկն էր՝ հավատարմությունն Էրդողանին ու նրա որոշումների անվերապահ իրականացումը, որոնց հավանական բացակայությամբ է պայմանավորված ԱԶԿ–ի խորհրդարանական խմբակցության կազմում գործող 164 պատգամավորների թեկնածությունների չընդգրկելը: Վերընտրվելու հնարավորությունից զրկվածների այս պատկառելի թիվը ցույց է տալիս, որ հենց ԱԶԿ–ի շարքերում առկա է ընդդիմադիրների մեծաթիվ բանակ, և այդ պատճառով էր, որ ԱԶԿ–ի համար բավական դժվարացել էր ներքաղաքական ու օրենսդրական բարեփոխումների իրականացումը:

Քրդական խնդիրը շարունակում էր մնալ Թուրքիայի քաղաքական կյանքի ամենակարևոր հարցը, և այս ընտրություններում այդ գործոնն առավել քան երբևէ զգալի է: Էրդողանը փորձում էր ցույց տալ, որ տիրապետում էր իրավիճակին, և քրդերը միայն նրա հետ են կապում քրդական հարցի լուծման հավանականությունը: Եվ իրոք, միայն ԱԶԿ–ի թեկնածուներն էին քրդական խնդիրն անվանում քրդական՝ ի տարբերություն ՀԺԿ–ի ու ԱԶԿ–ի կողմից տրվող «հարավարևելյան խնդիր» բնութագրմանը: Կրկնելով 2007 թ. կիրառած նախկին թեկնածուների խորհրդարան մտնելու հաջողված մեթոդը՝ խորհրդարանում աճեց քրդը պատգամավորների թվաքանակը՝ հասնելով ընդհուպ մինչև 30–35–ի, որն ազդեց քրդական հարցի ներկայացվածության վրա:

Այս ընտրությունները բացառիկ էին նաև այն առումով, որ ընտրությունների նախօրեին հայտնի դարձավ ավելի քան վեց տասնյակ լրագրողների ազատագրված լինելու մասին: Վերջին 4 տարիների ընթացքում Էրդողանը բազմիցս դեմ էր արտահայտվել մամուլում իր հասցեին հնչող քննադատություններին, և հարուցվել էին բազմաթիվ քրեական գործեր լրագրողների կամ ԶԼՄ–ների դեմ: Էրդողանը բավական անհանդուրժող էր դարձել իր հասցեին հնչող քննադատությունների հարցում, և լրագրողների կողմից նրա հասցեին հնչած անգամ կատուցողական քննադատությունները նա տեղափոխում էր դատական ատյան՝ պահանջելով կամ բարոյական փոխհատուցում, կամ ազատագրվում: Ազատագրված լրագրողների շարքում մեծ թիվ էին կազմում նաև «Էրզնեքնի» և «Մեծ մուրճի» գործով անցնող լրագրողները, որոնք մեղադրվում էին գաղտնի տեղեկությունների տիրապետելու և անօրինական կազմակերպությունների հետ համագործակցելու համար:

<sup>13</sup> 2011 թ. խորհրդարանական ընտրություններին նախորդած գործընթացների մասին առավել մանրամասն տե՛ս՝ Վ. Տեր-Մայեսյան, Թուրքիան ընտրությունների նախաշնչին. «Արդարություն և զարգացում» կուսակցության հեթոթական «քննաշրջանը», <http://armenpress.am/arm/news/653427/turqian-yntutyunneri-nakhashemin—ardaryun—ev.html>



Աղյուսակ 1

Վերջին երեք խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի, ՀԺԿ-ի, ԱՇԿ-ի և անկախ, հիմնականում՝ քրդական թեկնածուների գրանցած արդյունքները

|           | 2002 թ.  | 2007 թ.  | 2011 թ.                                     |
|-----------|--|--|---|
| ԱԶԿ       | 10,7 մլն քվե<br>/ 34,3 % /<br>363 մանդատ       | 16,3 մլն քվե<br>/46, 54 % /<br>341 մանդատ      | 21,4 մլն քվե<br>/ 49,92 %/<br>326 մանդատ    |
| ՀԺԿ       | 6,9 մլն քվե<br>/ 19,3 % /<br>178 մանդատ        | 7,3 մլն քվե<br>/20,79/<br>112 մանդատ           | 11,1 մլն քվե<br>/ 25,92 %/<br>135 մանդատ    |
| ԱՇԿ       | 2,6 մլն քվե<br>/ 8,3 % /<br>0 մանդատ           | 5 մլն քվե<br>/14,25 %/<br>71 մանդատ            | 5,5 մլն քվե<br>/ 12,98 %/<br>53 մանդատ      |
| Անկախ-ներ | 340 հազ. քվե<br>/0,9 %/<br>9 մանդատ            | 1,8 մլն քվե<br>/ 5,19/<br>22 մանդատ            | 2,8 մլն քվե<br>/ 6, 65 %/<br>36 մանդատ      |
|           | 41 մլն ընտրող.<br>մասնակցել է<br>33 մլն ընտրող | 42 մլն ընտրող.<br>մասնակցել է<br>35 մլն ընտրող | 50 մլն ընտրող.<br>մասնակցել է 43 մլն ընտրող |

Ինչպես տեսնում ենք ներկայացված աղյուսակում, միայն 2002 թ. ընտրություններում էր Էրդոդանն ամենամտրոլ կանգնած ցանկալի 2/3 մեծամասնությունն (367 մանդատ) ունենալու նշանակետին, սակայն անհրաժեշտ քվեները այդպես էլ չհամալրվեցին: Հետագա տարիներին ներխորհրդարանական պատգամավորական տեղափոխումները մշտապես փոխում էին ուժերի հարաբերակցությունը, և միշտ չէ, որ ԱԶԿ-ին հաջողվում էր օգտագործել խորհրդարանում ունեցած անգամ 330 մանդատի առավելությունը: Խնդիրն այն էր, որ հենց ԱԶԿ-ի շարքերում բացակայում էր միասնական դիրքորոշումը շատ հարցերի կապակցությամբ, ու թեև Էրդոդանի հեղինակությունը ստիպում էր ԱԶԿ-ի պատգամավորներին ցույց տալ հավաքական կամք ու լինել միաձայն, սակայն մի շարք օրենսդրական ու սահմանադրական փոփոխությունների նախագծերի հաստատման դեպքում 330 մանդատի առկայությունը նույնպես չօգնեց: Դա առավել

ԱԶԿ-ի գերնպատակն էր խորհրդարանում առնվազն 367 մանդատ ստանալը, որը թույլ կտար գրեթե անարգել կերպով իրականացնել սահմանադրության փոփոխության պլանները: Դրանով էր պայմանավորված ընդդիմադիր ԱԶԿ-ի հեղինակության խաթարմանն ուղղված ԱԶԿ-ի քննադատությունը: 2010 թ. սահմանադրական բարեփոխման հանրաքվեի ընթացքում ԱԶԿ-ի ստացած 58% աջակցության քվեն վստահություն էր ներշնչել Էրդոդանին, որ եթե հնարավոր լինի օգտագործել 2010 թ. մայիսին ՀԺԿ-ի ղեկավարության սկանդալային փոփոխությունից դեռ փովին ուշքի չեկած կուսակցական պատակտման գործոնը և ԱԶԿ-ին զրկել 10% ընտրական շեմը հաղթահարելու հնարավորությունից, ապա 367 + 1 մանդատ սցենարի հավանականությունը գրեթե ապահովված էր: Մյուս կողմից, եթե ԱԶԿ-ն խորհրդարանում ստանար 330 կամ ավելի քիչ մանդատ, ապա Էրդոդանի քաղաքական հավակնությունները դժվարությամբ կարող էին առաջ մղվել: Այդ էր պատճառը, որ Էրդոդանի կիրառած քաղաքական մեթոդները կանգ չէին առնում ոչ մի ընտրության առջև:

Հունիսի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրություններում գրանցված անակնկալները «թույլատրելիության սահմաններում» էին<sup>14</sup>: Ինչպես և կանխատեսվում էր ընտրություններում կրկին հաղթեց ԱԶԿ-ն, սակայն խորհրդարանում կորցրեց թվով 15 էական մանդատներ: Նվազագույն շեմը՝ 276 մանդատը, հնարավոր եղավ հեշտությամբ հաղթահարել, սակայն մյուս երկու առավել կարևոր շեմերը (330 և 367 մանդատներ) հաղթահարել չհաջողվեց: 330 մանդատի առկայության դեպքում ԱԶԿ-ն հնարավորություն կունենար խորհրդարանում հավանության արժանացած սահմանադրական փոփոխության նախագիծը դնելու հանրաքվեի՝ առանց մյուս քաղաքական ուժերի աջակցության, իսկ 367 մանդատը հնարավորություն կտար առանց որևէ խնդրի հենց խորհրդարանում քվեարկելու և հաստատելու սահմանադրական փոփոխությունները:

<sup>14</sup> 2011 թ. խորհրդարանական ընտրությունների մասին առավել մանրամասն տե՛ս՝ Վ. Տեր-Մաթևոսյան, Թուրքիան ընտրություններից հետո. համագործակցություն պարտադրող արդյունքներ <http://armenpress.am/arm/news/655714/html>

ցցուն էր 2010 թ. սահմանադրական փոփոխությունների գործընթացում, երբ ներկուսակցական տարակարծությունը հնարավորություն չստացավ հեշտությամբ հաստատելու մի շարք սահմանադրական նախագծերի՝ ժողովրդական հանրաքվեի դելեյի հարցը:

Հունիսի 12-ի ընտրություններում, ստանալով 326 մանդատ, Էրզոդանի համար առաջացան մի շարք դժվարություններ, որոնց հաղթահարումը նրանից կպահանջի մյուս կուսակցությունների հետ գործելաճան ուրստելու համագործակցություն ու կառուցողականություն, հատկանշիչներ, որոնք Էրզոդանի համար վերջին տարիներին եղել են օտար ու շատ դեպքերում անընդունելի: Նա թիմային խաղացող չէ, հետևաբար վերջին տարիների ընթացքում նրա կողմից դրսևորված ու քննադատության արժանացած կառավարման մեթոդները արմատական վերանայման կարիք ունեն: Անցած տարիների ընթացքում երկրի համար կարևոր քայլեր կատարելու ժամանակ Էրզոդանը փորձում էր հեռու պահել ընդդիմադիր կուսակցություններին, և նրանց մտահոգությունները նվազագույն կերպով են արտացոլվել էական որոշումներում:

Ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում Էրզոդանը սկսեց բարձրաձայնել նոր սահմանադրության խնդիրը՝ իրենից ակնկալվող կառուցողականության ու համագործակցության հարցերում դրսևորելով դրական տրամադրվածություն: ՀԺԿ-ն, ԱԶԿ-ն ու ԻԺԿ-ն թեև զգալիորեն հեռու են որակյալ մեծամասնություն կազմելու հնարավորությունից, հետևաբար նրանք անում են հնարավորինը, որպեսզի սեփական համագործակցությունը «թանկ վաճառեն», իսկ ԱԶԿ-ի դիրքորոշումը կլինի հնարավորինս զիջողական: Անգամ նոր սահմանադրության նախագծի մշակման գործում ԱԶԿ-ն կզրկվի սեփական դիրքորոշումները գերակա դարձնելու հնարավորությունից: Քրդական կուսակցությունը կփորձի առավել իրատեսական դարձնել այն պահանջների իրականացում, որոնք բարձրացվում էին նախընտրական պայքարում: Հասկանալիորեն, այդ նախաձեռնությունները կարժանանա ԱԶԿ-ի, իսկ մի շարք դեպքերում նաև ՀԺԿ-ի հակազդեցությանը և այդ պրոցեսի վրա ետնաբեմից կփորձի ազդել թե՛ քաղաքացիական հասարակությունը, թե՛ քեմալականները (ոազմաբյուրոկրատական ու դատախարակական համակարգը) և թե՛ ԵՄ-ը: Հետևաբար, ԱԶԿ-ի ինքնավստահությունը սահմանադրությունը՝ շուտափույթ ընդունելու առումով, պետք է զգուշությամբ ընդունել: 30 տարի առաջ ընդունված սահմանադրության փոփոխության ու դրանից բխող մեծածավալ

օրենսդրական փոփոխությունների ալիքը ուղղորդելու համար ԱԶԿ-ն պետք է դրսևորի առավելագույն համագործակցություն: ԱԶԿ-ին սպասվում է ներքաղաքական բարդ ժամանակաշրջան, որոնք կպայտեն մեծածավալ ջանքեր ու միջոցներ: Հնարավոր համագործակցության որոշ հարցերում (քրդական հարցի լուծում, սահմանադրության նախագծերի մշակում) ԱԶԿ-ն առավել հավանական է հենվի քրդերի և ազգայնականների վրա, իսկ սոցիալ-տնտեսական բնույթի հարցերում առավել հավանական են համագործակցության եզրերը ՀԺԿ-ի հետ:

Ընտրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011 թ. ընտրություններում 10%-ի ընտրաշենը չհաղթահարած 12 կուսակցություններ միասին ստացել են 2 մլն-ից պակաս քվե, և դա էր պատճառը, որ ստանալով աննախադեպ աջակցություն, ԱԶԿ-ն չկարողացավ հաղթահարել վերոհիշյալ 2 մանդատային շեներից և ոչ մեկը: Այս հանգամանքն ուշագրավ է այն առումով, որ 2002 թ. ընտրություններում 10%-ի ընտրաշենը չհաղթահարած 16 կուսակցություններ միասին ստացել էին մոտ 15 մլն քվե, այսինքն՝ 10% ընտրաշենի պատճառով ընտրություններին մասնակցածների մոտ 46%-ի շահերն անհնար եղավ ներկայացնել խորհրդարանում, և դա բնութագրում է Թուրքիայի ընտրական համակարգում գոյություն ունեցող էական խնդիրները: 2007 թ. ընտրություններում 10%-ի ընտրաշենը չհաղթահարած 11 կուսակցություններ միասին ստացել էին 4,5 մլն քվե: Այսպիսով՝ տեղի ունեցած ընտրություններում ընտրողները վստահության քվե տվեցին այն կուսակցություններին, որոնք ունեին խորհրդարան մտնելու իրական շանսեր, որի արդյունքում քվեները չվատնվեցին փոքր կուսակցությունների վրա:

Ուշագրավ են Հայաստանին սահմանակից երեք նահանգներում չորս կուսակցությունների գրանցած արդյունքները: Իզդի-րում հաղթեց «Ազգայնական շարժում» կուսակցությունը, Արդահանում և Կարսում՝ ԱԶԿ-ն (1 պատգամավոր Արդահանից, 2-ը՝ Կարսից), իսկ ԻսԿԿ-ի կողմից օժանդակվող մեկական անկախ թեկնածու հաղթեց Իզդիրում և Կարսում: ՀԺԿ-ն միայն մեկ պատգամավոր կներկայացնի Արդահանից, որտեղ 2002 թ. ի վեր ԱԶԿ-ի ու ՀԺԿ-ի արդյունքները հավասար են:

Քրդական ԻսԿԿ-ի վերափաստավորված ռազմավարությունը ցույց տվեց, որ 10%-ի բացակայության դեպքում ԻսԿԿ-ն խորհրդարանում կունենար ԱԶԿ-ի չափ մանդատներ: Թեև նոր խորհրդարանում ԻսԿԿ-ի խմբակցությունը ներկայացված կլինի 36



պատգամավորով, սակայն կուսակցության շարքերում ներկայացված են վերջին 20 տարիների ընթացքում քրդական շարժման ակտիվիստներ, որոնք, հավուր պատշաճի, կբարձրաձայնեն քրդերի իրավունքներն ու շահերը խորհրդարանում, եթե ինարկե գերծ մնան նախորդ գումարումների խորհրդարաններում ցուցաբերած սադրիչ դրսևորումներից: Քրդական կուսակցության ակտիվությունից ու Օջալանի կողմից ՔԲԿ-ի օգտագործման հեռանկարներից է կախված քրդական հարցի լուծման հեռանկարը: Քրդական խնդրում շուտափույթ լուծումներ գտնելու ու սոցիալ-տնտեսական հարցերում շոշափելի առաջընթաց գտնելու խնդրում էրդոդանի վրա մեծանում են ճնշումները թե երկրի ներսում, թե արտերկրից:

ՀԺԿ-ի ստացած քվեները կարիք ունեն առանձին վերլուծության: Նախորդ ընտրություններում 19 և 20% քվեների փոխարեն, այս ընտրություններում ՀԺԿ-ի ստացած 26%-ը ցույց տվեց, որ կուսակցության նոր ղեկավար Քեմալ Քըլըզդարօղլուն հաջողվեց հսկայական աշխատանք կատարել: Ներկուսակցական պառակտումները հարթելու ու ընտրազանգվածի վստահության քվեն ստանալու համար ՀԺԿ-ի նոր ղեկավարության համար ժամկետը բավական կարճ էր: ՀԺԿ-ի ղեկավարության մեջ առկա արմատական պառակտումները հնարավոր եղավ մեղմել միայն 2010 թ. դեկտեմբերին՝ կուսակցության արտակարգ համագումարի ընթացքում: Այլ խոսքերով՝ Քըլըզդարօղլուն ուներ ընդամենը 5-6 ամիս՝ կուսակցությունը ընտրությունների պատրաստելու համար: Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ այդ կարճ ժամանակահատվածում կուսակցության նոր ղեկավարությանը հաջողվեց ներգրավել մոտ 3,8 մլն հավելյալ քվե, որը զգալի ցուցանիշ է: Հասկանալիորեն, ԱԶԿ-ն ՀԺԿ-ի ներսում առկա ընդդիմությունն ուղղակի ու միջնորդավորված կերպով փորձում էր ՀԺԿ-ի ստացած 26% վստահության քվեն ներկայացնել որպես Քըլըզդարօղլուի պարտություն՝ մատնացույց անելով այն փաստը, որ նա չի կարողացել ստանալ իր իսկ կողմից խոստացված 30%-ը: Սակայն ԱԶԿ-ի նման մոտեցումը ցույց էր տալիս, որ նրանց մոտ առկա էր որոշակի անորոշություն, թե հետընտրական պայքարում Քըլըզդարօղլուն ինչպիսի ակտիվություն կցուցաբերի:

Թեև հոռետեսները կարծում էին, որ ԱԶԿ-ն անկարող էր հաղթահարել 10% ընտրաշեմը, սակայն այդ կուսակցությունը ոչ միայն ստացավ անհրաժեշտ քվեները, այլև գերազանցեց

այն 3%-ով: 13% արդյունքը ընդամենը 1%-ով էր քիչ 2007 թ. ընտրություններում գրանցած հաջողությունից, սակայն հաշվի առնելով ԱԶԿ-ում տեղի ունեցող բարդ ու խորքային գործընթացները, հազիվ թե ԱԶԿ-ն կարողանա նույն ղեկավարության ու նույն մեթոդներով ունենալ էական քաղաքական դերակատարում: ԱԶԿ-ի քաղաքական օրակարգը և ընտրազանգվածը շարունակում են խարսխված մնալ արդիականությունը կորցրած խնդիրներին, հետևաբար ԱԶԿ-ի ղեկավարների փոփոխությունը կնորոգի այդ կուսակցության խարխված հեղինակությունը:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքների մեկ այլ ուշագրավ դրվագ էր հանրապետության հիմնադրումից ի վեր աննախադեպ թվով կին պատգամավորների մուտքը խորհրդարան, որոնք կազմեցին պատգամավորների ընդհանուր թվի 14%-ը: Հարկ է հիշել, որ 1935 թ., երբ կանայք առաջին անգամ օգտվեցին ընտրվելու իրավունքից, խորհրդարանում հայտնվեց 14 կին պատգամավոր: Թվում էր՝ Աթաթուրքի մշակութային բարեփոխումների ազդեցության ներքո կանանց թիվը հաջորդ գումարման խորհրդարաններում պետք է անշեղորեն ավելանար, սակայն միայն 67 տարի անց՝ 2002 թ. ընտրություններում, հնարավոր եղավ հաղթահարել 1935 թ. ցուցանիշը, և խորհրդարան ընտրվեց 24 պատգամավոր (4,2%), 2007 թ. այդ թիվը հասավ 50-ի (9,1%): Նոր խորհրդարանում 78 կանանց ներկայությունը թեև առաջընթաց է նախորդ ցուցանիշների համեմատությամբ, սակայն կին ակտիվիստները դժգոհ են այդ ցուցանիշից և նպատակ ունեն 2015 թ. ընտրություններում այդ ցուցանիշը հասցնելու 25%-ի:

Խորհրդարանական ընտրություններին հաջորդած կարևոր ներքաղաքական գործընթացներից էր Թուրքիայի բարձրագույն զինվորականության և ԱԶԿ-ի միջև լարվածության հերթական ալիքը: Հուլիսի 29-ին Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ Իշիթ Քոշաները, հրաժարական տվեց: Թուրքիայի երրորդ հանրապետության պատմության մեջ բարձրագույն զինվորական պաշտոնյայի հրաժարական վերջին անգամ տեղի էր ունեցել 1990 թ. Նոյեմբերին: Քոշաների քայլին հաջորդեցին ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հրամանատարների հրաժարականների դիմումները: Թեև որպես հրաժարականների պատճառ մատնանշվում էր ընթացող աղմուկահարույց դատավարություններում բարձրագույն ու միջին սպայական

կազմի նկատմամբ ցուցաբերվող ոչ իրավաչափ ու ոչ պատշաճ վերաբերմունքը, սակայն իրական հրաժարականի պատճառներն ավելի խորքային էին<sup>15</sup>:

Հրաժարական ներկայացրած բարձրաստիճան գինվորականներն օգոստոսի 1-4-ն անցկացված Բարձրագույն ռազմական խորհրդի նիստի ընթացքում փոխարինվեցին նորերով, իսկ գլխավոր շտաբի պետ նշանակվեց Նեջդեթ Օզելը, որը մինչև հուլիսի 29-ը Ժանդարմերիայի գորբերի հրամանատարն էր: Իրադարձությունների նման ընթացքը մի շարք կասկածներ առաջ բերեց Թուրքիայի ընդդիմության և քաղաքագիտական-վերլուծական շրջանակներում: Ընդդիմությունը կառավարությանը մեղադրեց քաղաքական ճգնաժամ հրահրելու և ոչ թափանցիկ գործելաճճի համար, իսկ վերլուծական շրջանակները շտապեցին կարծիքներ հայտնել, որ Էրդողանը վերջնականապես իրեն ենթարկեց տասնամյակներ շարունակ քաղաքացիական իշխանություններին չհնազանդվող գինվորականներին:

Վերջին տարիների ընթացքում բարձրաստիճան գինվորականների նկատմամբ սկիզբ առած դատավարությունների շղթան, որոնք կապված էին աղմկահարույց «Էրզնեբըն» և «Մեծ մուրճ» գործընթացների հետ, զգալիորեն ազդեցին ՁՈՒ-ի հեղինակության վրա: Վերջինիս ղեկավարները քաջ գիտակցում էին, որ հեղինակության նման անկումը կարող է բացասական հետևանքներ ունենալ նաև երկրում գինվորականության մասնագիտական շահերի վրա: Թերևս այդ խնդիրը հերթական անգամ բարձրաձայնելուն էին ուղղված ՁՈՒ ԳՇ նախկին պետ Իլքեր Բաշբուրդի կողմից 2011 թ. հունիսի 17-ին արված բավական կարևոր իրտարկումները, որոնք արտացոլում են ՁՈՒ-ում տեղի ունեցող խտրային գործընթացները և ակնարկում գալիք հրաժարականների անխուսափելիության մասին: Նրա կողմից առաջ քաշված դրույթների հիմքում արհեստավարժ գինվորականության հիմքերի խաթարման անթույլատրելիությունն է և գինվորականության նկատմամբ «առարկայական քաղաքացիական վերահսկողության» համարումը: Ուշագրավ է, որ Բաշբուրդը՝ որպես ԳՇ-ի նախկին պետ, առաջին անգամ խոսում էր պաշտպանական դիրքերից և ակնարկում, որ «միջամտությունը բանակի գործերում խարխլում է գինվորականների արհեստավարժությունը»:

<sup>15</sup> Զինվորականության և կառավարության միջև ընթացող պայքարի մասին առավել մանրամասն տե՛ս՝ Վ. Տեր-Մաթևոսյան, Կառավարության և գինված ուժերի փոխհարաբերությունների զարգացումները Թուրքիայում, <http://armenpress.am/arm/news/661153/html>, օգոստոսի 16, 2011 թ.:

Նա նաև նշում էր, որ բանակին հարկավոր է ինքնավարություն շնորհել, ինչը կհանգեցնի քաղաքականապես չեզոք ու քաղաքացիական իշխանություններին ենթակա արհեստավարժ բանակի կառուցմանը: Այս ուշագրավ ելույթը ցույց է տալիս, որ բանակի ղեկավարությունն ունի որոշակի պատրաստակամություն՝ աջակցելու իշխանություններին ապագա օրենսդրական բարեփոխումների հարցում՝ մինևույն ժամանակ ձգտելով սեփական ձեռքերով գծել գործունեության նախապատվելի սահմանները:

ԱՂԿ-ի իշխանության տարիներին Թուրքիայում պաշտոնավարել են ՁՈՒ ԳՇ չորս ղեկավարներ (Օզքյոք, Բույուբանըթ, Բաշբուրդ, Քոշաներ), որոնցից երեքի հետ Էրդողանը կարողացավ կառուցել տանելի հարաբերություններ: Այլ էին փոխընկալումները Բույուբանըթի հետ հարաբերություններում, որի անմիջական նախաձեռնությունը 2007 թ. ապրիլի 27-ին հրապարակվեց վերոհիշյալ «Էլեկտրոնային հոչակագիրը», որի նպատակն էր Էրդողանին հեռու պահել նախագահի պաշտոնում Գյուլի թեկնածությունը պաշտպանելու գաղափարից: Բույուբանըթի նախաձեռնությունը անհաջողություն կրեց և բացասական ազդեցություն ունեցավ ՁՈՒ-ի հեղինակության վրա: Օզքյոքի դիրքորոշումը Էրդողանի կառավարության հարցում ունեցավ դրական հետևանք բանակը քաղաքականությունից հեռու պահելու գործում: Դրա մասին են վկայում «Էրզնեբընի» գործով ի հայտ եկած փաստերը, որոնք հաստատում են, որ Օզքյոքը բացասական վերաբերմունք է ունեցել ԱՂԿ-ն բռնի միջոցով իշխանությունից հեռացնելու գործում շահագրգռված բարձրագույն սպայական կազմի նկատմամբ: Ավելին, դեռ 2003 թ. հունվարին, երբ ԱՂԿ-ն իշխանության ղեկը տանձնել էր ընդամենը երկու ամիս առաջ, Օզքյոքը հայտարարել էր, որ ԱՂԿ-ի հետ ձևավորվում են ներդաշնակ հարաբերություններ: ԳՇ պետի նման վերաբերմունքն էր պատճառը, որ բարձրագույն սպայական կազմն Օզքյոքի նկատմամբ ուներ անթաքույց բացասական վերաբերմունք, և դա էր պատճառը, որ նրանցից շատերը «հաշվում էին Օզքյոքի վերջին օրերը», երբ 2006 թ. նրան փոխարինելու էր արմատական հայացքներով Յաշար Բույուբանըթը: Բաշբուրդի և Քոշաների օրոք ԱՂԿ-ի հետ հարաբերությունները գտնվում էին փոխադարձ զգուշավորության պայմաններում, քանի որ Բույուբանըթի նախաձեռնած «Էլեկտրոնային հեղաշրջման» փորձի բացասական արձագանքները ԱՂԿ-ն հմտորեն պահում էր քաղաքական օրակարգում՝ փորձելով բացառել «2007 թ. ապրիլի 27-ի» կրկնության ցանկացած փորձ:



2007 թ. տեղի ունեցած նախընտրական ու հետընտրական գործընթացները, 2008 թ. «Էրզնեներնի» գործով սկսված ձերբակալումները ցույց տվեցին, որ ՁՈւ-ի շարքերում կան երկու ուղղության կողմնակիցներ: Առաջինի համար ՁՈւ-ի մշտական վերահսկողությունը քաղաքացիականների նկատմամբ անքննելի իրողություն էր, և նրանց ներկայացուցիչները մշտապես ձգտում էին օգտագործելու պատեհ առիթը քաղաքացիական իշխանությունների գործունեության շրջանակները թեկուզև հակաօրինական քայլերով սահմանափակելու ուղղությամբ: Մինչդեռ երկրորդ՝ չափավոր խմբի դիրքորոշումն առավել կառուցողական էր: Այդ դիրքորոշման շնորհիվ է, որ ՁՈւ-ի բարձրագույն ղեկավարության մի հատվածին չհաջողվեց իրականացնել 2000-ականներին պլանավորված առնվազն երեք ռազմական հեղաշրջման փորձ: Ի տարբերություն Բուլղոջանըթի՝ Օզբյորը, Բաշրուղը և Քոչաները չափավոր դիրքորոշման կողմնակիցներ էին, ու ներքաղաքական կայունության նրանց պատկերացումներն ունեցել են կարևոր հետևանքներ ՁՈւ-քաղաքացիական իշխանություն համագործակցության եզրեր փնտրելու առումներով:

Վերջին 4 տարիների ընթացքում «Էրզնեներնի» գործով եղել են «ձերբակալության 13 այլքներ», որոնց արդյունքում ձերբակալվել են ՁՈւ-ի բարձրագույն ու միջին սպայական կազմի, մտավորականության, դատաիրավական համակարգի, կրթության մի քանի հարյուր ներկայացուցիչներ: Առգրավվել են մեծաքանակ գեներ ու զինամթերք, համակարգչային ֆայլեր, որոնք ներառում էին կարևոր ապացույցներ 2000-ականներին զինվորականների պլանավորած գործունեության վերաբերյալ: Հարկ է դիտարկել, որ ըստ հարցումների՝ հասարակության 60%-ը կողմ էր բարձրագույն զինվորականության դեմ սկսված զանգվածային ձերբակալումներին:

Թվում է՝ Օզբեյի նշանակմամբ ՁՈւ ԳՇ պետի ենթակայության հարցը գտավ իր վերջնական լուծումը. իրականում այն ապագայում քննարկելիք սուր խնդիրներից մեկն է, որը կարող է որոշակի լարվածություն առաջացնել ՁՈւ-քաղաքացիական իշխանություններ հարաբերություններում: Վերջին տասնամյակների ընթացքում ՁՈւ ԳՇ պետը առաջարկվում է զինվորականության բարձրագույն խորհրդի, նշանակվում նախագահի կողմից և ենթարկվում վարչապետին: Հասկանալիորեն, նախագահի կողմից նշանակվելը և վարչապետին ենթարկվելը ընթացակարգային էին, և ԳՇ պետը միայն ձևական էր ենթարկվում այդ ընթացքին:

եՄ-ի պահանջներից մեկն է, որ ՁՈւ ԳՇ պետը ենթարկվի պաշտպանության նախարարին, ինչին հասկանալիորեն ընդդիմանում են զինվորականության ներկայացուցիչները:

Հարկ է նշել, որ 2010 թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը վերացրեց «Հանրային կարգի և անվտանգության համագործակցության արձանագրությունը» (EMASYA), որը ՁՈւ ղեկավարությունը կազմել էր 1997 թ. փետրվարյան «թավշյա հեղաշրջումից» հետո ներքաղաքական սպառնալիքները հսկողության տակ պահելու նպատակով: Այդ փաստաթուղթը ՁՈւ ղեկավարության համար ծառայում էր որպես միջոց քաղաքական գործընթացներում ունեցած միջամտությունն օրինականացնելու և քաղաքացիական անձանց հեռախոսների գաղտնալսումներ կազմակերպելու համար: Այնուհանդերձ, այդ արձանագրության վերացումը ներքաղաքական գործընթացներին ՁՈւ-ի կողմից օգտագործվող հնարավոր խողովակներից ընդամենը մեկն էր, քանի որ գոյություն ունեն մի շարք այլ ենթաօրենսդրական հնարավորություններ, որոնցից կառչելով՝ բանակը հնարավորություն ունի լեգիտիմացնելու իր մասնակցությունը ներքաղաքական գործընթացներին, օրինակ՝ 1961 թ. ընդունված Թուրքիայի զինված ուժերի «Ներքին ծառայության մասին օրենքի» 35-րդ, «Ներքին ծառայության ուղեցույցի» 85/1 հոդվածները: Այս հոդվածները հստակորեն նշում են, որ Թուրքիայի ՁՈւ-ի պարտականությունն է պաշտպանել հայրենիքը և հանրապետությունը, անհրաժեշտության դեպքում անգամ գնեցով՝ ընդդեմ ներքին և արտաքին սպառնալիքների:

Իշխանավարության 9 տարիների ընթացքում ԱՂԿ-ին հաջողվեց Թուրքիայի անվտանգության համակարգը աստիճանաբար դնել քաղաքացիական վերահսկողության տակ, և դա ընդգրկեց Ազգային անվտանգության խորհրդից մինչև Հատուկ դատարանները: Վերջին զարգացումները ցույց են տալիս, որ ԱՂԿ-ն վճռական է տրամադրված ՁՈւ-ի քաղաքական դերակատարման օրենսդրական հիմքերն ամբողջությամբ չեզոքացնելու հարցում, հետևաբար տեսանելի ապագայում հնարավոր են նաև վերոհիշյալ երկու հոդվածների փոփոխությունները:

Թուրքիայի հիմնական քաղաքական ուժերը գիտակցում են, որ գործող սահմանադրության փոփոխությունը կփոխի ստատուս քվոն, սակայն հարկավոր է դեռ երկար ճանապարհ անցնել փոխելու համար նաև բյուրոկրատիայի, զինվորականների վերաբերմունքը նախատեսվող լայնածավալ փոփոխություններին հարցում: Նոր սահմանադրություն ունենալու խնդիրը 2011 թ.

ընտրությունների հիմնական թեմաներից մեկն էր: Թեև 1982 թ. ընդունված Թուրքիայի սահմանադրության 1/3-ը փոփոխվել է, սակայն դեռ գործում են սահմանադրության այն առանցքային-գաղափարախոսական հոդվածները, որոնց վրա հենվում են երկրում ազգայնամտական ու քեմալական շրջանակները, աշխարհիկ-հանրապետականները, զինվորականներն ու դատաիրավական համակարգի ներկայացուցիչները<sup>16</sup>: Նոր սահմանադրության հետ Թուրքիայում մեծ հույսեր են կապում, քանզի գործընթացների մասնակիցների ու հասարակ քաղաքացիների պատկերացմամբ՝ նոր սահմանադրությունը կվերացնի գործող մի շարք նորմեր, դրույթներ ու ազատականության սահմանափակումներ (խոսքի ու դավանանքի ազատություն, մշակութային, ինքնության ու լեզվի ազատության խնդիրներ և այլն): Տասնամյակներ շարունակ կուտակված խնդիրների լուծումը բացառապես նոր սահմանադրության հետ կապելը ևս իրատեսական չէ: Իհարկե, երկրի հիմնական օրենքը պետք է ապահովի այն հիմնական ուղենիշերը, որոնց վրա պետք է հենվեն երկրի կենսագործունեությունը ապահովող իրավահարաբերությունները: Սակայն համապատասխան քաղաքական մթնոլորտի ապահովումը կարևոր նախապայման է նոր ու ժողովրդավարական սահմանադրության հեղինակման ու ընդունման գործընթացում հաջողության հասնելու համար: Իսկ նման մթնոլորտի ձևավորման համար Թուրքիայում առկա ներքաղաքական իրավիճակը ամենևին էլ նպաստավոր չէ:

Թուրքիայի քաղաքական պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ նախորդ և ոչ մի սահմանադրության մշակման գործընթացում հանրային քննարկումներ ու քաղաքական երկխոսություններ չեն եղել: 1924 թ., 1961 թ. և 1982 թ. ընդունված սահմանադրություններն ունեն մեկ ընդհանրություն. դրանք չեն արտացոլել հասարակական խորքային գործընթացներն ու երևույթները, փոխզիջումային մոտեցումները, գրվել են բացառապես պետության հիմնադիրների ու զինվորականների պատկերացումների շրջանակներում ու վերջիններիս անքննելի հեղինակության ամրապնդման դիրքերից: Նախորդ երեք սահմանադրություններն էլ քաղաքական լեզվափոխության առումներով խոցելի են եղել և դատելով ռազմական միջամտությունների

հաճախականություններից՝ դրանց չի հաջողվել ստեղծել անթերի ժողովրդավարական համակարգ՝ իշխանության բաժանման փոխադարձ վերահսկելիության համակարգով:

Նոր՝ չորրորդ սահմանադրության ձևավորման գործընթացում հասարակական ակնկալիքների ու քաղաքական ուժերի տիրապետած լծակների միջև առկա է բովանդակային ու գաղափարական անջրպետ: Հունիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներն արտացոլեցին այն խորքային և շատ հաճախ անհամադրելի տարածայնությունները, որոնք առկա են հասարակական-քաղաքական շրջանակներում: Ընտրություններում երրորդ անգամ հաղթանակած կուսակցությունը՝ ԱԶԿ-ն, ստանձնել է մեծ պատասխանատվություն նոր սահմանադրություն հեղինակելու գործում բոլոր շահագրգիռ կողմերին ներգրավելու առումով, սակայն Էրդողան քաղաքական առաջնորդի ու նրա աշխարհայացքային պատկերացումների միջև առկա է մեծ անջրպետ: Ստանալով 21 մլն վստահության քվե՝ Էրդողանը պարտավոր է հմտորեն ուղղորդել ներքաղաքական տրամադրությունները՝ առաջին հերթին հաղթահարելով քրդերի խորացող անվստահությունը Թուրքիայի քաղաքական դեկավարության ու համակարգի նկատմամբ, որից հետո փորձելով բանակցությունների սեղանի մոտ բերել խորհրդարանական ընդդիմադիր ուժերին: Էրդողանի ինքնավստահ ու անզիջում քաղաքական վարքագիծը շարունակվելու պարագայում նոր սահմանադրության հեռանկարներն ավելի աղոտ կդառնան: Ուժերի տեղաբաշխումը խորհրդարանում ենթադրում է նոր սահմանադրության մեջ գրեթե համահավասար բովանդակային ներբերման ապահովում, որը խորհրդարանական ուժերին կարող է հնարավորություն տալ համագործակցության ու փոխզիջման միջոցով ուղղորդելու նոր սահմանադրության նախագիծը կազմելու գործընթացները:

Նշենք, որ նախատեսվող նոր սահմանադրությունում քաղաքական ու անհատական ազատությունների հարցում Էրդողանի դիրքորոշումը բավական զգուշավոր է, քանի որ, եթե նոր սահմանադրության մեջ արտացոլվեն ազատական սահմանադրության համընդհանուր ու համամարդկային նորմերը, ապա հանրային տրամադրությունների վերահսկման ու քաղաքական գործընթացների առումներով կարող են խնդիրներ առաջանալ: Հետևաբար, առավել հավանական է այն տարբերակը, որի դեպքում նոր սահմանադրությունը կվերացնի գործող սահմանադրության մեջ

<sup>16</sup> Թուրքիայում նոր սահմանադրության մշակման հեռանկարների մասին առավել մանրամասն տես՝ Վ. Տեր-Մաթևոսյան, Թուրքիայի չորրորդ սահմանադրության հեռանկարները, <http://armenpress.am/arm/news/659299/turqiayi-chorrorrd-sahmanadrutyayn-herankarnery.html>



առկա մի շարք սահմանափակումներ, կվերածնակերպի պետության ու քաղաքացու իրավահարաբերությունները, նորովի կսահմանի իշխանության թևերի միջև տարաբաժանման ուղեինիշերը, սակայն լեզվի, մշակույթի, էթնիկ ինքնության հարցերում այն չի կարող լինել հեղափոխական: Այդ խնդիրների լուծումը կարող է իրականանալ նոր սահմանադրության ընդունումից հետո հասարակական համապատասխան մթնոլորտի ձևավորման ու դրանց հիման վրա սահմանադրությունում նախատեսվող փոփոխություններ կատարելու ճանապարհով:

### Եզրակացություն

Հիմնադրման օրվանից ԱԶԿ-ի անցած ճանապարհը կարելի է բաժանել հետևյալ պայմանական փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 2001–2002 թթ., երբ նորաստեղծ կուսակցությունը հեշտությամբ եկավ իշխանության՝ հենվելով տնտեսական ճգնաժամից տուժած ու 1990–ական թթ. քաղաքական անկայունությունից դժգոհ քաղաքացիների վրա, երկրորդ փուլը՝ 2003–2005 թթ., երբ ԱԶԿ-ն, վայելելով Արևմուտքի աջակցությունը, իրականացրեց մի շարք կարևոր օրենսդրական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ: 2005–2007 թթ. ԱԶԿ-ն զգալի հետընթաց արձանագրեց, երբ ԱԶԿ ընդդեմ ՋՈՒ-դատաիրավական համակարգ հակամարտությունն ունեցավ մի քանի դրսևորումներ, որի բարձրակետը դարձավ 2007 թ. ապրիլին զինվորականության միջամտությունը քաղաքական գործերին: Հաջորդ շրջանը 2007–2009 թթ. են, երբ Թուրքիայի աշխարհիկ-հանրապետական քեմալական վերնախավը, զինվորականությունը որոշեցին հակազդել ԱԶԿ-ին՝ նրան մեղադրելով «հակաաշխարհիկ» գործունեության համար, և վերջին՝ 2010–2011 թթ. իշխող ԱԶԿ-ն դարձավ առավել նախահարձակ և նախ համապետական հանրաքվեում և ապա խորհրդարանական ընտրություններում տանելով վստահ հաղթանակ՝ ձեռք բերեց գրեթե անվերահսկելի ազդեցություն երկրի զարգացման գործում պահպանողական արժեքների էլ ավելի խորացման համար:

2002 թ. ի վեր Էրդոհանի կուսակցությունը գործում էր ընդդիմադիր կուսակցությանը հարիր ոճով՝ քննադատելով քեմալականության ժառանգության աղավաղումները, աշխարհիկության արմատական կիրառման բացասական հետևանքները, ինչպես նաև քանակի ու դատաիրավական համակարգի քաղաքական դեբրակատարումը: ԱԶԿ-ի պատգամավորներից մեկի բնութա-

գրմամբ՝ ԱԶԿ-ն դարձել էր «սուպերմարկետ», որտեղ ցանկացած մեկը կարող է բավարարել իր սպառողական պահանջները: Դա ապացուցում է նաև 2002 թ. ԱԶԿ-ի օգտին քվեարկածների ինքնատույնականացման տվյալները՝ 27% իսլամականներ, 15% աջ ուղղվածության ներկայացուցիչներ, 14% ժողովրդավարներ, 10% պահպանողականներ, 10% սոցիալ-ժողովրդավարականներ, 6% ազգայնականներ, 3% քեմալականներ, 3% ազգայնական-պահպանողականներ, 10% վստահ չէ:

ԱԶԿ-ն զարգացման կարևոր ճամփաբաժին է գտնվում: Կուսակցության ներսում առկա են որոշակի բևեռներ, որոնց տրամադրությունների ուղղորդման հարցում Էրդոհանն ունի անելիքներ: Ըստ կուսակցության կանոնադրության՝ Էրդոհանը երեք անգամից ավելի չի կարող լինել վարչապետ, ուստի 2014–15 թթ. դառնալու են կարևոր կուսակցության համար: Թեև Էրդոհանը հանրային հայտարարություն չի արել նախագահական հավակնությունների համար, սակայն ներիշխանական շրջանակները այնգում են, որ Գյուլի լիազորությունների ավարտից հետո Էրդոհանն ունի հավանականություն՝ զբաղեցնելու այդ պաշտոնը: Անշուշտ, առկա են նաև այլ տեսակետներ, առ այն, որ Էրդոհանի առողջական խնդիրները նրան թույլ չեն տա ավարտին հասցնել այդ պլանները: Չանզվածային կուսակցություն լինելով՝ այն կարող է նաև պառակտվել: «Մայր հայրենիք» կուսակցության օրինակը դեռ վառ է թուրքերի հիշողության մեջ. երբ Օզալը 1989 թ. դարձավ նախագահ «Մայր հայրենիքը» զգալիորեն թուլացավ, և 1991 թ. ընտրությունների արդյունքում կառավարություն կազմելու իրավունքն անցավ ընդդիմադիր «Ճշմարիտ ուղի» կուսակցությանը:

ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**«ՀԱՅՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԻ» ԾԱՀԱՐԿՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
2011 Թ. ԽՈՐՀՐԴՎԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԸՆԹԱՏՔՈՒՄ՝**

2011 թ. հունիսի 12-ին Թուրքիայում կայացած հերթական խորհրդարանական ընտրությունների արդյունքները անակնկալ չէին: Իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ ԱԶԿ թվով երրորդ աննախադեպ հաղթանակը խորհրդարանական ընտրություններում բերեց նրան «ամենաերկարակյաց քաղաքական ուժ լինելու դափնիները» Թուրքիայի նորագույն պատմության մեջ՝ բազմակուսակցական համակարգին անցնելուց հետո<sup>1</sup>:

Ու թեև «ո՛ր քաղաքական ուժը կհաղթի» հարցի պատասխանը պարզ էր նույնիսկ նախքան ընտրությունները, առավել կարևորվում էր այն խնդիրը, թե ինչպիսի տոկոսային հարաբերակցությամբ կլինի այդ հաղթանակը: Նշելով, որ այս ընտրությունները շրջադարձային կարող են դառնալ Թուրքիայի համար՝ վերլուծաբաններն առանձնացնում էին երեք հիմնական խնդիր: Դրանցից առաջինը վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խոստացած՝ նոր Մայր օրենքի ընդունումն էր, որը փոխարինելու կգար 1982 թ. ավտորիտար, «ռազմական» անվանված սահմանադրությանը: Միմիայն նոր սահմանադրություն ընդունելով՝ հնարավոր կլինի լուծել ներկայիս Թուրքիայի հրատապ խնդիրներից երկուսը, այն է՝ պետություն–հասարակություն հակասությունները և Քրդական հարցը: Երկրորդ.

անցած ընտրությունները նախանշեցին վարչապետ Էրդողանի ցանկությունն ու նպատակը Թուրքիայի ղեկավարման համակարգում անցում կատարել խորհրդարանականից դեպի նախագահական՝ իր իսկ նախագահ կարգվելու հեռանկարով: Եվ վերջապես երրորդ խնդիրն այն էր, թե կկարողանա արդյոք հիմնական ընդդիմադիր ուժ հանդիսացող Հանրապետական–ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) բավարար չափով «նորացվել» և դառնալ լուրջ հակակշիռ իշխող կուսակցության<sup>2</sup>:

Եթե Էրդողանին հաջողվեր ստանալ խորհրդարանի 550 տեղերից 367-ը, ապա նա կկարողանար միանձնյա անցկացնել ցանկացած օրինագիծ: Նվազագույնը 330 տեղերի անկայությունը թույլ կտար ԱԶԿ-ին համաժողովրդական հանրաքվեի դնել սեփական հեղինակած սահմանադրության նախագիծը: Հակառակ պարագայում, նույնիսկ մեծամասնություն ունենալով, իշխող կուսակցությունը ստիպված կլինի հաշվի նստել խորհրդարանում ներկայացված այլ քաղաքական ուժերի հետ: Նման պարագայում ԱԶԿ-ին անհրաժեշտ էր ոչ թե սովորական, այլ բացարձակ, ցայսցայինից հաղթանակ:

Հաշվի առնելով այդ բարձր նշանո՞ղ՝ զարմանալի չէր, որ նախընտրական պայքարը Թուրքիայում ուղեկցվում էր «կարծր» մեթոդների կիրառմամբ և առանց ավելորդ «նրբագացության»: Նախընտրական տեխնոլոգիաների «զինանոցը» Թուրքիայում, ըստ փորձագետների, ծայրաստիճան հագնեցված էր՝ վարկաբեկիչ նյութերով յի կարծր ինֆորմացիոն դիմակայությունից սկսած մինչև հեռախոսագրույցների գաղտնայնություն, իրական և «բեմադրած» ահաբեկչական գործողություններից մինչև «սեքսուալ սկանդալներ»: Համացանցում տեղադրված ինտիմ քնույթի լուսանկարների և տեսափոխվածների պատճառով ընտրությունների նախօրեին պաշտոններից ստիպված հեռացան «Ազգայնական շարժում» կուսակցության (ԱԶԿ) մի շարք ղեկավարներ: Ավելի վաղ նմանատիպ լուսավական «արտահոսքի» հետևանքով ՀԺԿ-ի նախագահի իր աթոռն էր լքել Դենիզ Բայքալը: Թե՛ ԱԶԿ-ի պաշտոնանկ առաջնորդներից Դենիզ Բյուլոքբաշին, թե՛ Դենիզ Բայքալը պնդում էին, որ իրենք «Էրդողանի կողմից հմտորեն պատրաստված ծուղակի զոհերն» են դարձել, քանզի այդ կարգի «դավադրու-

<sup>1</sup> Սույն հոդվածը տպագրվում է «Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ. «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման ժամանակահատվածում» թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> А. Коэн, Турция перед выборами – и выбором, <http://blogs.voanews.am/russian/us-russia/2011/06/01>

<sup>3</sup> Henri J. Barkey, The Road to Turkey's June Elections: Crises, Strategies, and Outcomes, Commentary, May 9, 2011, <http://carnegiendowment.org/experts/>



թյուն» անհնար էր իրականացնել՝ առանց իշխանական լծակներն օգտագործելու<sup>3</sup>:

Հաշվի առնելով նախընտրական թեժ պայքարի տրամաբանությունը, միանգամայն կանխատեսելի էր, որ թե՛ իշխանությունը՝ թե՛ ընդդիմությունը՝ վկործեն օգտագործել նաև թուրքական քարոզչական «զինանոցի» ավանդական և գրեթե անպարտելի գործիքներից մեկը՝ «հայկական խաղաքարը»:

Hürriyet Daily News-ի տեղեկացմամբ, ըստ վերջին սոցիոլոգիական հարցումների, Թուրքիայի բնակչության շուրջ 70 %-ը խիստ բացասաբար է վերաբերվում հայերին<sup>4</sup>:

Եվ ինչպես իրավացիորեն նշում են հայ փորձագետները, Թուրքիայի պետական համակարգում ազգայնականության բաղադրիչը բավականին ծանրակշիռ է ներկայացված: Անտեսել կամ շրջանցել ազգայնական ընտրազանգվածի շահերը անիրատեսական է ցանկացած քաղաքական ուժի համար, որը ցանկանում է ծանրակշիռ ներկայություն ունենալ Թուրքիայի քաղաքական համակարգում: Ուստի «հստակ է, որ իշխող կուսակցությունը, օգտագործելով պետական լծակները, առավելապես պայքարում է «Ազգայնական շարժում» կուսակցության ձայները շահելու համար: Այս տրամաբանության մեջ կարելի է տեղավորել էրդոզանի վերջին հակահայկական քայլերը՝ Կարսում գտնվող հայտնի արձանի ապամոնտաժումը, սուր հայտարարությունները հայ-թուրքական հարաբերությունների առնչությամբ, ինչպես նաև մասնավորապես աղբբեջանաբնակ վայրերում հնչեցված հակահայկական հայտարարությունները<sup>5</sup>:

Միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնված Կարսում մի քանի տարի առաջ տեղադրված, այսպես կոչված, հայ-թուրքական բարեկամությունը խորհրդանշող արձանի հետ կապված պատմությունն այս առումով չափազանց հատկանշական է<sup>6</sup>: Իր նախընտրական քարոզարշավում վարչապետ Էրդոզյանն այս արձանը որակեց որպես անճոռնի և հրահանգեց քանդել այն: Սակայն, ինչպես նշում է Ռ. Մելքոնյանը,

Թուրքիայի վարչապետի այս քայլն ամենևին էլ պայմանավորված չէր վերջինիս էլաբետիկական հայացքներով: Նախ, մինչև Էրդոզյանի սկանդալային հայտարարությունն, այդ արձանը հայտնի էր փոքր թվով մարդկանց և Թուրքիայի վարչապետը հայտնիությանը օժտելով արձանը՝ այն դարձրեց քաղաքական տեխնոլոգիաների գործիք: Հայ-թուրքական, իբրև թե, բարեկամությունը խորհրդանշող արձանի քննադատությամբ Էրդոզյանը հազուրդ տվեց Կարսի մարզում բնակվող աղբբեջանցիների ազգայնամոլական կրքերին: Իսկ իրեն այն էր, որ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ իշխող ԱԶԿ-ն որոշակիորեն պայքարում էր «Ազգայնական շարժում» կուսակցության ընտրազանգվածին իր կողմը գրավելու համար, ուստի նրան անհրաժեշտ էր իր քարոզարշավի մեջ ներառել նաև ազգայնամոլական հստակ երանգներ: Թուրքագետը փաստում է, որ Կարսում ԱԶԿ քարոզարշավի ազգայնամոլական երանգն ապահովվեց հենց այդ արձանի շուրջ բարձրացած աղմուկը<sup>7</sup>:

Նախընտրական շրջանում գործադրվեց բազմիցս փորձարկված մի միջոց ևս՝ «հայկական ծագում ունենալու մեղադրանքը»: Դեռևս ոչ վաղ անցյալում, երբ ներկայիս նախագահ Արդուլա Գյուլը այդ պաշտոնի թեկնածու էր, շրջանառության մեջ դրվեց այն վարկածը, թե իբր վերջինս հայ է: Եվ նա Նույնիսկ իր մամուլ խոսնակի միջոցով փորձում էր արդարանալ՝ հակառակը վկայող փաստաթղթեր մեջբերելով<sup>8</sup>:

Նույն կերպ, Թուրքիայի ամենախոշոր՝ ընդդիմադիր Հանրապետական-ժողովրդական կուսակցության նախագահ Քեմալ Բըլըջդարողլուին փորձեցին «մեղադրել» այն բանում, թե իբր նա ալիևական ծագման մեջ իր հայությունն է թաքցնում: Նույնիսկ գիրք հրատարակվեց «Դերսիմից եմուշի որդի ինժեներ Քեմալը» վերնագրով: Բայց Բըլըջդարողլուն Գյուլից առավել ողջամիտ գտնվեց՝ հայտարարելով, որ «թեև հայ լինելը վիրավորական չէ, բայց ես հայ չեմ»: Այնուամենայնիվ, նա հետևեց Գյուլի օրինակին ու դատական գործընթաց սկսեց գրքի հեղինակի հանդեպ՝ զրպարտանքի և սուտ տեղեկատվություն տարածելու մեղադրանքով<sup>9</sup>:

<sup>3</sup> A. Гурьев, Ситуация в Турции: май 2011 г., [http://kurdistan.ru/2011/05/full/articles\\_10761](http://kurdistan.ru/2011/05/full/articles_10761)

<sup>4</sup> <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=mamma-ii-turchi-2009-11-19>

<sup>5</sup> Հարցազրույց թուրքագետներ Վ. Տեր-Մաթևոսյանի և Ռ. Մելքոնյանի հետ՝ «Հայացք աշխարհին» հեռուստածրագրի շրջանակում (04. 06. 2011), [www.armedia.am](http://www.armedia.am)

<sup>6</sup> Christopher Torchia, "Debate in Turkey over Armenia Friendship monument", The Associated Press, Monday, January 10, 2011.

<sup>7</sup> Ռ. Մելքոնյան, Թուրքիայի «հայկական քաղաքականության» արդի միտումների շուրջ, [http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5823](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5823)

<sup>8</sup> "11-Month Prison Sentence for 'Gul is Armenian' Comment", <http://www.armenianweekly.com/2010/11/06/11-month-sentence>

<sup>9</sup> «Թուրքական ընդդիմության առաջնորդի հայկական արմատների մասին գիրքը տարածվել է Թուրքիայի խորհրդարանում», <http://haynews.am/2011/02/kilicdaroglu>

Հրանտ Դինքի ընտանիքի փաստաբան Ֆեթիչե Չեթինը, ով վերջերս է հայտնաբերել իր հայկական ծագումը, իր «Իմ մեծ մայրը» ինքնակենսագրական գրքում պատմում է, թե ինչպիսի մեծ շոկ է ապրել՝ գիտակցելով, որ իր հայ լինելը կարող է սոցիալական միկրոկլիմայի մեջ հեզանքի, ճնշումների տեղիք տալ և պարզապես վտանգել իր կարիերայի հետագա զարգացումը<sup>10</sup>:

Նման անհանգստության հիմնավոր լինելը կարող է ապացուցել, օրինակ, հետևյալ փաստը: Թուրքական NTV հեռուստատեսության հաղորդմամբ՝ Թուրքիայի ռազմական լրտեսների ամենամեծ խմբի գործի հետաքննության արդյունքում բացահայտվել է, թե ինչպես են գրառվել Թուրքիայի Գիտական և տեխնոլոգիական ուսումնասիրությունների հաստատության (Türkiye Bilimsel ve Teknolojik Araştırma Kurumu-TÜBİTAK) 5000 աշխատակիցները: Հայերը որակվել են որպես «անվստահելի տարրեր»<sup>11</sup>:

Ավելին՝ 1926 թվականից Թուրքիայում գործում էր օրենք, համաձայն որի՝ ոչ մի քրիստոնյա չէր կարող զբաղեցնել որևէ պետական պաշտոն: Նման բացահայտ սահմանափակում այսօր Թուրքիայում չկա, բայց գոյություն ունի որոշակի ներքին հրահանգ, համաձայն որի, եթե դու հայ ես, չես կարող զբաղեցնել կոնկրետ պաշտոն, ասենք՝ արտաքին գործերի գերատեսչությունում:

Ուշագրավ է, սակայն, որ նախընտրական շրջանում թուրքական իշխանությունները մի քանի «ցուցադրական» նշանակումներ կատարեցին: Ստանբուլից հայ Լեո Սուրեն Հայելային մարտի 1-ից նշանակվեց աշխատանքի Եվրամիության հետ Թուրքիայի անդամակցության համար տարվող աշխատանքներում որպես փորձագետ: Իսկ Թուրքիայի Հանրապետության հայագգի քաղաքացիներից պրոֆեսոր Տարոն Աջնժողլուին Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (OECD) Թուրքիայի մշտական ներկայացուցչի պաշտոնում նշանակելու վերաբերյալ հրապարակումները տևական ժամանակ առաջնային տեղեր էին զբաղեցնում թուրքական և միջազգային լրատվամիջոցներում: Եթե հիշենք, որ նրան պաշտոն առաջարկելու ժամանակահատվածը համընկավ մարտ ամսին Եվրոպական խորհրդարանում Թուրքիայի մարդու իրավունքների ու ազգային փոքրամասնությունների ազատությունների վերաբերյալ զեկույցի հետ, ապա կարող ենք վստահաբար պնդել, որ դա մտածված

PR-ակցիա էր: Ի դեպ, դա նաև մի շրջան էր, երբ մոտենում էր Մեծ եղեռնի հերթական տարեյիցը՝ ապրիլի 24-ը: Եվ այդ ակցիան հաջողությամբ կապակվեր Անկարայի համար, եթե հայագգի գիտնականը խոհեմաբար չհրաժարվեր այն պաշտոնից, որը անձամբ արտգործնախարար Դավութթյուն էր նրան առաջարկել: «Հյուրիյեթ» թերթի սյունակագիր Մեհմեդ Յըլմազի կարծիքով՝ «այդ տեղեկությունը թերթերում ներկայացվում էր որպես մի տեսակ «շնորհի ու մեծահոգություն»: Այնինչ, պետք է լրիվ հալատակ լիներ: Դա առիթ պետք է լիներ ցեղապաշտությունից ազատվելու, անազնությունից ու ամոթից փրկվելու համար»<sup>12</sup>:

Պատահական չէ, որ նույն շրջանում ակտիվորեն թմբկահարվում էին նաև հայագգի թեկնածուներին կուսակցությունների նախընտրական ցուցակներում ընդգրկելու մասին լուրերը<sup>13</sup>:

«Հունիսի 12-ի ընտրացուցակներում սառի, քուրդ, հայ և հույն թեկնածուների ընդգրկումը փաստում է Թուրքիայում վերջին ժամանակահատվածում տեղի ունեցող մեծ փոփոխությունների մասին»: այս և նմանատիպ հաղորդագրություններով էին հեղեղված օրվա լրահոսները<sup>14</sup>:

Այն քանից հետո, երբ ԽԺԿ-ն հայտնեց, որ ոչ մուսուլմաններով հոծ բնակեցված Ստամբուլի 2-րդ ընտրատարածքից աջակցելու է հայ թեկնածուին, մյուս կուսակցությունները ևս հայտարարեցին, որ պատրաստվում են իրենց ցուցակներում տեղ տալ հայ թեկնածուներին: «Արդարություն և զարգացում» կուսակցությունից (ԱԶԿ) առաջադրվելու էին Մեյլոն Քարաքյոսեն և Հեման Բայլանը, Հանրապետական-ժողովրդական կուսակցությունից՝ Արև Ջերեջին, իսկ ԱԾԿ-ից թեկնածության դիմում էր ներկայացնել Գեղամ Կարապետյանը: ԽԺԿ-ն սկզբում աջակցելու էր լրագրող Հայկո Բաղդադին, սակայն ավելի ուշ, երբ կուսակցության ցուցակում ընդգրկվելու առաջարկը մերժեց Հրանտ Դինքի եղբայրը, նրանք ցուցակագրեցին արդվիսից Իսմեթ Շահինին: Ի դեպ, ընդդիմադիր հայացքներով հայտնի, ինչպես, օրինակ, «Թառաֆ» թերթի խմբագիրներից Մարգար Եսայանը, թեկնածուներին «վերազնելու» միջոցով յուրային դարձնելու մարտավարությունը լայնորեն կիրառվում էր ընտրաշափի ընթացքում: Սուրբ Փրկիչ հայկական հիվանդանոցի վարըֆի նախագահ Պետրոս

<sup>10</sup> <http://www.hurriyet.com.tr/yazarlar/17419233.asp>

<sup>11</sup> "Türkiye'nin siyasi partileri, Ermeni cemaatinin oyları için mücadeleye girişti", REGNUM, 18 Mart 2011.

<sup>12</sup> <http://www.haberturk.com/dunya/haber/618610-ny-times-turkiyede-azinliklarin-onu-acildi>

<sup>10</sup> «Թուրքիայում հայերին առում են «քաղաքակիրթ» ծնով», հարցազրույց թուրքագետ Ա. Հովհաննիսյանի հետ, [www.atplus.am/am/politics/2011/06/9/turkey](http://www.atplus.am/am/politics/2011/06/9/turkey)

<sup>11</sup> <http://akunq.net/am/2012/02/01>



Շիրինսողուն էլ սպասում էր ԱՀԿ-ի հրավերին: Շիրինսողուն ասել էր. «Եթե հարգարժան վարչապետը ցանկանա, կառաջարկի: Ես միշտ պատրաստ եմ պաշտոն ստանձնել»<sup>15</sup>:

ՀԺԿ-ի գլխավոր նախագահի տեղակալ Ունութ Օրանը «Ալոս» շաբաթաթերթի այն հարցին, թե ինչպես է կուսակցությունը վերաբերվում ոչ մուսուլմանների՝ խորհրդարանում ներկայացվելուն, այն դասական տեսակետն էր արտահայտել, թե ոչ մասնեղականները ևս, որպես իրավահավասար քաղաքացիներ, կարող են պատգամավոր լինել: «Արդարություն և զարգացում» կուսակցության Ստամբուլի մասնաճյուղի ղեկավար Ազիզ Բարուչչուն, ասելով, թե «Արդարություն և զարգացում» կուսակցության դուռը միշտ բաց է քաղաքականությանը զբաղվել ցանկացող ոչ մուսուլման մեր ընկերների առաջ», շեշտել էր, որ քաղաքական կուսակցությունները ոչ մասնեղական թեկնածուի ընտրվելու հարցին պետք է սկզբունքային մոտեցում ցուցաբերեն՝ «Քվեի հաշվարկ» անելու փոխարեն: Բացի լուսանցքային շատ խմբերից, բացի սադրանքներով լեցուն ժամանակաշրջաններից՝ այս հանրության մեջ բոլոր տարբեր էթնիկ խմբերը պատմության մեջ գրանցել են եղբայրական և խաղաղ գոյակցության օրինակներ: Այս հասարակության ամենահիմնական առանձնահատկությունն այն է, որ նա կարողացել է դարձնել շարունակ խաղաղության մեջ պահել և մեր օրեր հասցնել տարբեր քաղաքակրթությունների, հավատքի տարբեր խմբերի: Այդ պատճառով էլ մենք, երբ խոսք է գնում ոչ մասնեղական քաղաքացու առաջադրվելու մասին, որևէ հակազդեցություն չենք սպասում մեր անդամների կողմից»<sup>16</sup>: Բարուչչուի գործընկեր ԱՀԿ-ական Մուսթաֆա Քաբաքչըն առավել «անկեղծորեն» էր բացահայտել կուսակցության՝ ցուցակներում հայ թեկնածուներ ընդգրկելու դրդապատճառները. նրա խոսքերով՝ հայերի մասնակցությունն ընտրություններում Եվրոպային, միջազգային հանրությանը, ինչպես նաև Հայաստանին ցույց կտա, թե որքան անհիմն են «հայ ազգայնականների» թուրքերի և հայերի «էթնիկ «անհամատեղելիության» մասին պնդումները»<sup>17</sup>:

Եվ իսկապես, պաշտոնական Անկարայի Հայաստանի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու հնարավորությունը ձայնողելու, հայկական Սփյուռքի հետ «երկխոսելու» ջանքերի

անպտուղ մնալու, Հայոց ցեղասպանության ճանաչմանը խոչընդոտելու փորձերի ցանկալի արդյունքին չհասնելու պայմաններում հայ թեկնածուների առաջադրման թեման Թուրքիայի իշխանությունների կողմից դիտվում էր որպես հաջող PR-քայլ՝ միջազգային հանրության «աչքերին թոզ փչելու» համար: Հարկ է նշել նաև, որ վարչապետ Էրդողանն իր «անզուսպ» վարքով գրեթե միշտ բացահայտում է այդ քաղաքականության «չինձու» բնույթը: Մասնավորապես, ԵՆԽԿ զարնախային նստաշրջանի ընթացքում Ֆրանսիայի պատվիրակության ներկայացուցչի հարցին այն մասին, թե ինչպես են Թուրքիայում վերաբերվում ազգային փոքրամասնություններին, Էրդողանը պատասխանել է, որ Ֆրանսիան այն երկիրը չէ, որը պետք է նման հարցեր տա»<sup>18</sup>:

Որոշ փորձագետներ, ի թիվս այլ պատճառների, վերոհիշյալ քայլերը կապում են նաև Անկարայի «նեոսամանիստական» նկրտումների հետ: Բանն այն է, որ «արաբական գարիտեքից» հետո Թուրքիան ձգտում է ստանձնելու «ժողովրդավարության քահակալի» դերը Մերձավոր Արևելքում: Դրա մասին խոսվում էր հենց նախընտրական քարոզարշավի ընթացքում՝ Բրիտանական ոչ կառավարական «Wilton Park» կազմակերպության մարտի 24–26–ը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության օժանդակությամբ «Ժամանակակից աշխարհում Թուրքիայի նախածեռնողական քաղաքականությունը» խորագրի ներքո Ստամբուլում կազմակերպված միջազգային համաժողովի ժամանակ: Իսկական երկրի փոքրամասնությունների հանդեպ նման «անեղորժողական» վերաբերմունքն ի ցույց դնելով՝ Անկարան ձգտում էր «չեզոքացնելու» նախկինում օսմանակապատակ արաբական ժողովուրդների խալիֆայության շրջանից մնացած ոչ այնքան բարի հիշողությունները»<sup>19</sup>:

Իսկ երբ հանրապետություն հռչակվեց, որը բնակչության 20%-ը կազմող, իսկ այսօր՝ մոտ 100 հազարի հասնող ոչ մուսուլման քաղաքացիները տարիներ ի վեր խորհրդարանում ներկայացուցիչ չեն ունեցել: Թուրքիայի Հանրապետության գոյության ողջ ընթացքում խորհրդարանի անդամ են եղել 23 ոչ մուսուլման-

<sup>15</sup> <http://www.radikal.com.tr/Radikal.aspx?Type=RadikalDetayV3&ArticleID=1043197&Date=17.03.2011&CategoryID=78/>

<sup>16</sup> «Ալոս» շաբաթաթերթ, թիվ 777, <http://akunq.net/am/2011/03/02>

<sup>17</sup> <http://vatan.org.ru/news/rss>

<sup>18</sup> «Անուշ Հովհաննիսյան. Էրդողանի ելույթը ԵՆԽԿ նստաշրջանի ընթացքում կարելի է հերթական սկանդալը համարել», PanArmenian.Net, 14 ապրիլի, 2011 թ.:

<sup>19</sup> Frida Ghitis, World Citizen: As 'Zero Problems' Fails, Turkey Seeks Alternative Approach, 01 December 2011, <http://www.worldpoliticsreview.com/authors/36/frida-ghitis>

ներ՝ 8 հրեա, 8 հույն, 6 հայ և 1 թուրք-բողոքական: Առաջին հայ պատգամավորը եղել է Պերճ Քերեթթեյանը (Թյուրքեր), վերջինը՝ Մկրտիչ Շելեֆյանը<sup>20</sup>: 1961–1964 թթ. հայազգի Պերճ Սահակ Թուրանը այն ժամանակվա երկպալատանի խորհրդարանի Սենատի անդամ է հանդիսացել:

Պատգամավոր եղած 23 ոչ մուսուլման քաղաքացիներից վերջինը եղել է 1994 թ. խորհրդարանի պատգամավոր հրեա Ջեֆի Քամին: Վերջինս, 1974-ից սկսած, ԱՄՆ-ում Թուրքիայի օգտին լորբիստական գործունեություն իրականացնող կազմակերպության նախագահ Ջեկ Քամինի որդին էր: «Թարաֆ» թերթի վկայությամբ՝ սեֆարդ-հրեաների Օսմանյան կայսրությունում ապաստան գտնելու 500-ամյակի առթիվ հիմնադրված այդ կազմակերպությունը տարիներ շարունակ «հաջողությամբ» տապալում էր ԱՄՆ Կոնգրեսում քննարկվող հայկական բանաձևերի ընդունումը<sup>21</sup>:

Հատկանշական է, որ թուրքական քաղաքական մեքենան ժամանակ առ ժամանակ որոշ սրբագրումներ է մտցնում իր «հայկական քաղաքականության» մեջ, որի բնույթը, սակայն, շարունակում է մնալ թշնամական: Թուրքագետ Ռ. Մելքոնյանի կարծիքով՝ ներկայումս տեղի ունեցող զարգացումները փաստում են, որ Թուրքիան փորձում է Հայաստանի և հայության նկատմամբ կիրառել նաև նոր մարտավարական մեթոդներ:

Վերջին շրջանում Թուրքիան, հաշվի առնելով աշխարհում և հենց իր ներսում տեղի ունեցող գործընթացները, ձգտում է հին՝ «կացնային» մեթոդին զուգահեռ մշակելու և կիրառելու ավելի նուրբ, ճկուն քաղաքականություն, որը շատ հաճախ քողարկվում է «պրոհայկական» միջոցառումների անվան տակ<sup>22</sup>: Պատգամավորության հայ թեկնածուների առաջադրումը հենց այդ կարգի միջոցառումներից էր: «Թարաֆ» թերթի պունակագիրներից Այշե Հյուրը գրում է, որ նման գաղափար ծագել էր դեռևս Թուրգուլթ Օզալի կառավարման տարիներին: Իր հրապարակման մեջ նա մեջբերում է 1987 թ. Յըլմազ Չեթինների հեղինակած հոդվածից չափազանց ուշագրավ մի հատված, որում նա կոչ էր անում կարևորագույն այդ ժամանակներում, երբ

Թուրքիան «բացվում» էր դեպի Արևմուտք և Արևելք<sup>23</sup>, մեկ-երկու սիմվոլիկ քրիստոնյա պատգամավոր ունենալու՝ «հայերի ստախոսություններն ու՝ հույների սանձարձակությունները» զսպելու համար: Ըստ Այշե Հյուրի՝ նմանատիպ առաջարկով Թուրգուլթ Օզալին դիմել էր նաև թուրք մեծահարուստ Սաքքը Մաբանջըն, որից հետո Օզալը համապատասխան հանձնարարություններ էր արել՝ հարցին լուծում տալու համար: Ավելի ուշ՝ 1995 թ., «Tempo» ամսագրում տպագրված իր հուշերում Սաբանջընը գրում է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շյուքրու Էլեքդաղի հետ ունեցած զրույցի մասին: «Երբ ես բացատրում էմ մեր դիրքորոշումը Հայկական հարցի կամ Կիպրոսի խնդրի վերաբերյալ, մտքովս անցնում է, որ եթե այդտեղ լինեք գոնե մեկը մեր ազգային փոքրամասնություններից, մենք էլ նրան որպես մեր պատգամավորը ներկայացնեինք, ավելի ուշադիր կսեին մեզ...»<sup>24</sup>: Այսպիսով ակնհայտ է, որ Թուրքիայում խորհրդարանական ընտրություններում հայ պատգամավորների առաջադրումը «գործիքայնացված» էր, և «ցուցադրական ելույթների» ավարտից հետո նրանց անհրաժեշտությունը վերանում էր: Դա է, թերևս, պատճառը, որ անցած ընտրաշրջավում մինչև տարբեր քաղաքական ուժերի կողմից իրենց թեկնածուների ցուցակները հաստատելն անգամ հայ թեկնածուների անունները տառացիորեն անհետացան:

Քաղաքական ուժերը բավական իրատեսորեն ընկալեցին, որ այսօր Թուրքիայում առկա հակահայկական տրամադրությունների պայմաններում կուսակցության շարքերում հայազգի թեկնածու ներկայացնելը քաղաքականապես այդքան էլ ձեռնտու չէ և կարող է լուրջ քննադատությունների, հետևաբար քվեների կորստի տեղիք տալ: Հատկանշական է, որ քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը ևս չպաշտպանեց առաջադրված հայ թեկնածուին: ԽԺԿ-ի նախնական ցուցակում հայտնված Հայկո Բաղդադա, օրինակ, հարցին, թե ինչ խնդիրներ է առաջ քաշելու պատգամավոր դառնալուց հետո, հայազգի պատգամավորության թեկնածու պատասխանել էր. «Չպետք է մոռանալ, որ ես սոցիալիստական ուղղության գործիչ եմ և իմ այդ հայացքները փոխադրելու եմ խորհրդարան»: Նա նշեց նաև, որ իր համար կարևորագույն խնդիրներից է Հայկական հարցը թուրքական խորհրդարա-

<sup>20</sup> Ռ. Մելքոնյան, Մկրտիչ Շելեֆյան. վերջին հայ պատգամավորը թուրքական խորհրդարանում, 21-րդ դար, թիվ 5, երևան, 2011, էջ 5-19:

<sup>21</sup> "Bu meclis'in neyi eksik", Taraf, 03.03.2011.

<sup>22</sup> Ռ. Մելքոնյան, Թուրքիայի «հայկական քաղաքականության» արդի միտումների շուրջ, [http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5823](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5823)

<sup>23</sup> 1987 թ. Թուրքիան դիմել էր ԵՄ-ին՝ անդամակցելու հայտով, միաժամանակ ակտիվացնելով հարաբերությունները իսլամական աշխարհի հետ:

<sup>24</sup> Ayşe Hür, "Meclis yine gayrimüslimsiz", Taraf, 17. 04. 2011.



նում բարձրացնելը: Ինչ վերաբերում է ԼՂ հարցի արժարձմանը թուրքական օրենսդիր մարմնում, ապա Բաղդատը նշել էր, որ ամեն ինչ կանի, որպեսզի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա ԼՂ հարցը չանդադրվի: Պարզ է, որ փոքրթիվ թուրքահայ համայնքին հուզող «վիճակարար» խնդիրների խորհրդարան տեղափոխելու հեռանկարն այսօր ձեռնտու չէ և՛ որևէ քաղաքական ուժի<sup>25</sup>:

Սա վկայում է, որ, ընդհանուր առմամբ, Թուրքիայի հասարակությունը հստակ հակահայկական մոտեցում ունի: Որևէ քաղաքական ուժ, պաշտպանելով հայ թեկնածուի, գնում է ինքնասպանության, ուստի գերիշխեց հստակ իրական քաղաքական հաշվարկը, և հայ թեկնածուները դուրս մղվեցին<sup>26</sup>:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանի կարծիքով՝ հայ թեկնածուների առաջադրումը տարբեր կուսակցությունների կողմից «մտավախություն է առաջացնում, քանի որ առանց այն էլ պոլսահայ համայնքն ունի բավական խնդիրներ, բաղկացած է տարբեր խմբերից, տարբեր շահեր ունեցող խմբավորումներից: Այս դեպքում ևս կարծես թե մտնելու է հակասությունների նոր փուլ: Այս անգամ արդեն թուրքական քաղաքական կուսակցություններին հասուով հակասություններն են տեղափոխվելու համայնքային կյանք: Ես կարծում եմ, որ սա վտանգավոր երևույթ կարող է լինել»:

Երկրորդ խնդիրը, Ռ. Սաֆրաստյանի կարծիքով, այն է, որ հայ պատգամավորների թեկնածուների մեծ մասն ուղղակի չի ընտրվի: «Ի վերջո, պոլսահայ համայնքը կարող է հայտնվել կոտորած տաշտակի առջև»<sup>27</sup>:

Հայազգի հավանական բոլոր թեկնածուների անունների ցուցակից դուրս մնալու հանգամանքը խորը հիասթափություն առաջացրեց համայնքում:

Ստամբուլահայ դոկտոր Սարգիս Ադամի կարծիքով՝ «ժողովրդականությունն վայելող թերթերում երկար-բարակ գրված հոդ-

վածներից, ամբիոններում խաղեր տալուց հետո մնացինք նույն կոտորած տաշտակի առաջ. ոչինչ չփոխվեց, որովհետև նույն մտածելակերպն է: Փոփոխվածը միայն խանութի ցուցափեղկն է, խանութի ներսի ապրանքը նույն ապրանքն է մնացել: Ըստ իս՛ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ իմիջի փոփոխություն, ցուցադրականություն, ժողովրդավար երևալու ջանք»<sup>28</sup>:

Հայկո Բաղդատի ներկայացմամբ՝ նախնական քննարկումները հասան այնտեղ, որ խոսվում էր, թե ինչ է լինելու հայ թեկնածուն՝ խամաճիկ, թե՛ հայկական խնդրի ներկայացուցիչ թուրքական օրենսդիր ասլանում: «Կարծում եմ, հայ թեկնածուի առաջադրումը լուրջ արդյունք չէր տա ու չի էլ տա»,— նշել էր Բաղդատը՝ ավելացնելով, որ մեկ հայի ներկայությունը չէր կարող արդյունավետ լինել խորհրդարանում, որտեղ «որոշումներ է ընդունում Հրանտ Դինքի սպանության համար ճանապարհ ցուցող իշխող Արդարություն և բարգավաճում կուսակցությունը, որ նաև թերանում է Դինքի սպանության հետաքննության մեջ»: «Ամեն դեպքում, տակավին այս երկիրը հայ թեկնածու ունենալուն պատրաստ չէ»,— եզրակացրել էր ԱԶԿ-ի ցուցակից դուրս մնացած Մելքոն Քարաքյոսնե<sup>29</sup>:

Նախընտրական գործընթացների դառը արդյունքը հերթական անգամ փաստեց, որ հայերը Թուրքիայում «երկրորդ» դասի քաղաքացիներ են, և որ իշխանությունների միակ շահագրգռվածությունն իրենց որպես հնազանդ գործիչ օգտագործելն է՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ<sup>30</sup>:

Այսքանից հետո, սակայն, հայերը մասնակցեցին ընտրություններին՝ իրենց ծայները տալով իշխող կուսակցությանը, մասամբ էլ՝ ընդդիմադիր ԽԺԿ-ին: Ընտրություններին մասնակցելու այդ ֆենոմենը, ի թիվս այլ մասնավոր պատճառների, կարելի է բացատրել մշտապես վախվորածության մեջ գոյատևող հայ համայնքի ցանկությամբ՝ ներկայանալ պետությանը և ռեժիմին որպես օրինապաշտ քաղաքացիների հավաքականություն: Դեռևս թուրքական հանրապետության ձևավորման տարիներից՝ 1920-ական թվականներից սկսած, տեղի հայերը քեմալիստական Հանրապետական-ժողովրդական կուսակցու-

<sup>25</sup> «Մեջլիսի հայազգի պատգամավորության թեկնածուն ամեն ինչ անելու է՝ «Հայկական հարցը» թուրքական խորհրդարանում քարձրացնելու համար», <http://news.am/arm/2011/03/04>

<sup>26</sup> Հարցազրույց թուրքագետներ Վ. Տեր-Մաթևոսյանի և Ռ. Մելքոնյանի հետ՝ «Հայազգ աշխարհին» հեռուստաձայնի շրջանակում (04. 06. 2011), [www.armedia.am](http://www.armedia.am)

<sup>27</sup> «Վրտաքուտ» դրական, իսկ իրականում վտանգավոր, հարցազրույց ՀՀ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանի հետ, [http://mardik.am/arm/news/category\\_?category\\_1282302066/-article\\_14042](http://mardik.am/arm/news/category_?category_1282302066/-article_14042)

<sup>28</sup> [www.hyertert.com.tr/14/04/2011](http://www.hyertert.com.tr/14/04/2011)

<sup>29</sup> «Թուրքիան պատրաստ չէ հայ պատգամավոր ունենալուն», Ազգ, №106, 10. 06. 2011:

<sup>30</sup> Vercihan Zifioğlu, "Turkish parties nominate only handful of minority candidates", *Hürriyet Daily News*, Tuesday, April 12, 2011.

թյունն ընկալել են որպես իթթիհադականների քաղաքականության գենետիկական շարունակող, և ըստ այդմ, Թուրքիայում բազմակուսակցական համակարգի ներդրումից հետո իրենց ծայրը տվել են ՀԺԿ-ին՝ այլընտրանք հանդիսացող քաղաքական ուժին՝ անկախ այն բանից, թե ինչ ուղղվածություն է ունեցել կամ ինչ ծրագրով է հանդես եկել տվյալ ուժը: Ուշագրավ է այս առումով թուրքական ներկա պետության արշալույսից մի դրվագ. երբ 1920 թ. Մուստաֆա Քեմալի առաջնորդությամբ թուրքական Ազգային մեծ ժողովն էր ձևավորվում, Ստամբուլում մնացած հայերը նամակով դիմեցին Մեջլիսին՝ ցանկություն հայտնելով իրենց թեկնածուներով մասնակցելու նրա աշխատանքներին: Դիմումն անպատասխան մնաց, իսկ վերջերս Անկարայի քաղաքական վերլուծությունների կենտրոնի վերլուծաբաններից մեկի հրապարակման մեջ հայտնի դարձավ Քեմալ Աթաթուրքի և ներքին գործերի նախարար Իսմեթ Ինյոնյուի ստորագրությամբ այդ ժամանակներին վերաբերող գաղտնի մի փաստաթուղթ, որում նշվում է, թե «Հանրապետական-ժողովրդական ֆրակցիայի սուրբ շարքերը չի կարելի պղծել ոչ մահմեդականների ներկայությամբ»<sup>31</sup>:

Ստամբուլում հրատարակվող «Ալյուս» շաբաթաթերթի հայերենի բաժնի խմբագիր Բագրատ Էստուկյանի մեկնաբանությամբ՝ «իրականության մեջ հստակ է, որ Թուրքիայի ներկայիս իշխանությունը կամ նրանց կազմած կառավարությունը՝ հայկական համայնքի համար երկար տարիների ընթացքում երևի թե ամենանպաստավոր կառավարությունն է եղել երկրի ոչ միայն հայերի, այլ նաև բոլոր ազգային փոքրամասնությունների համար»: Հենց դա է պատճառը, որ, ըստ Էստուկյանի, բավականաչափ հայեր ընտրություններում թվարկել են «Արդարություն և զարգացում» կուսակցության օգտին: Թեպետ, նրա խոսքով, նախընտրական քարոզարշավի ժամանակ Էրդողանը որդեգրել էր «ազգայնամոլի վարքագիծ», որը հաճելի չի եղել պղոստիայ համայնքի շատ ներկայացուցիչների համար: Ինչ վերաբերում է Թուրքիայի նոր խորհրդարանում հայախոսությամբ առավել ընդգծված պատգամավորների առկայությանը, Բագրատ Էստուկյանն ասել էր, որ դրանք միշտ էլ եղել են թուրքական խորհրդարանում: «Մենք համոզված ենք, որ շուրջ 500 հայախոս պատգամավոր կա: Այս երկրի խորհրդարան-

ում միշտ էլ պատգամավորների ջախջախիչ մեծամասնությունը հայախոսաց են եղել»,— նշել էր նա<sup>32</sup>:

Հայ համայնքի համար հրապարակվող «Ալյուս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Ռոբեր Քոփաշյան, իր ներթին խոսելով իշխանությունների վարած քաղաքականության մասին, ասել էր. «Առաջին հայացքից կարող ենք ասել, թե դրական առաջընթաց կա, որովհետև կառավարության հոետորաբանության մեջ նկատում ենք արտահայտություններ, թե բոլոր քաղաքացիները հավասար են, հավասար են նաև ոչ մուսուլման հպատակները, որոշ սխալներ արվել են, և դրանցից պետք է դասեր քաղել: Որոշ քայլեր, այնուամենայնիվ, ձեռնարկվել են: Փոփոխության է ենթարկվել «Վաքըֆների մասին» օրենքը, սակայն չի կարելի ասել, թե այդ հարցը լիովին լուծված է, որոշ խնդիրներ դեռ մնում են չլուծված»: Փոքրամասնությունները, ընդհանուր առմամբ, դրական վերաբերմունք են ցուցաբերում նր սահմանադրությանը, որի մշակումը սպասվում է ընտրություններից հետո, և որը ավելի լայն իրավունքներ է շնորհելու նրանց: «Փոքրամասնությունների հարցը խիստ կարևորվում է Թուրքիայի՝ ԵՄ-ի հետ բանակցությունների տեսանկյունից: Թուրքիան վերջին շրջանում այդ ուղղությամբ էական քայլեր է ձեռնարկել»,— եզրակացրել էր նա<sup>33</sup>:

Սահմանադրական բարեփոխումների խնդիրը, իսկապես, խիստ արդիական է այսօրվա Թուրքիայում: «Քարնեգի» կենտրոնի վերլուծաբան Հենրի Բարքի գնահատմամբ՝ 1982 թ. ընդունված և շատերի կողմից «ռազմական հեղաշրջման սահմանադրություն» անվանված Մայր օրենքը զգալի արախոսական մի փաստաթուղթ է, որում ամրագրված է պետության վերահսկողությունն անհատի հանդեպ, ազգայնականության գերակայությունը քաղաքացիության սկզբունքի համեմատ: Նմանատիպ փաստաթղթի ընդունման նպատակն էր շարունակապես ամրապնդել պետության, ռեժիմի անսասան դիրքերը և, ճնշելով էթնիկ ու կրոնական փոքրամասնություններին՝ ապահովել ռազմաքաղաքական համակարգի անսահմանափակ իշխանությունն ու հարատևումը<sup>34</sup>:

<sup>32</sup> «Բագրատ Էստուկյան. Թուրքիայի այս խորհրդարանում շուրջ 500 հայախոս պատգամավոր կա», <http://akunq.net/arm/2011/06/14>

<sup>33</sup> <http://tr.euronews.net/2011/06/08/azinliklar-secim-sandigindan-umutlu/>

<sup>34</sup> Henri J.Barkey, "The Road to Turkey's June Elections: Crises, Strategies, and Outcomes", Commentary, May 9, 2011, <http://carnegiendowment.org/experts/>

<sup>31</sup> Ayşegül Komşuoğlu, "Türkiye Ermenilerinin siyasi tutum ve davranışları üzerine notlar", Ankara Üniversitesi SBF Dergisi, 62-1, pdf.



Հետևաբար տրամաբանական է, որ ի հեճուկս անցած ընտրությունների դառը փորձառությանը, Թուրքիայի հայերը պետք է շարունակեն պայքարել իրենց մարդկային և ազգային շահերի համար՝ պահանջելով իրավունք, այլ ոչ թե ձևական «հանդուրժողականություն»<sup>35</sup>:

Խոջալուի դեպքերին նվիրված բողոքի ցույցի անցկացման վերաբերյալ «Թարաֆ» թերթին տված հարցազրույցում վտարանդի թուրք պատմաբան Թաներ Աքչամը նշել էր, որ Թուրքիայում երկար ժամանակ թաքնված էր ոստիկանը: Նրա պնդմամբ այժմ իշխանությունները բացահայտորեն խրախուսում են հայատյացությունը: Աքչամը նաև հայտնել էր մտավախություն, որ Թուրքիայի ազգությամբ հայ քաղաքացիների կյանքը վտանգված է<sup>36</sup>:

Կարող է արդյոք նման պայմաններում ընդունվելիք նոր սահմանադրությունը թուրքահայերի իրավունքների երաշխիք դառնալ, թե՛ կստացվի ինչպես հայտնի ռուսական ասացվածքում՝ «хотели как лучше, а получилось как всегда»:

# ԻՐԱՆ

<sup>35</sup> Gunay Goksu Ozdogan, Ohannes Kilicdagi, "Turkey's Armenians Demand Rights, not Tolerance: New Study", Today's Zaman, Monday, 03 October, 2011.

<sup>36</sup> «Թուրք պատմաբան. Թուրքիայի կառավարությունը բացահայտ հովանավորում է հայատյացությունը», <http://panorama.am/am/society/2012/03/12/taraf/>

**ԻԻՀ 2008–2010 ԹԹ. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սույն հոդվածում կներկայացնենք Իրանում 2008, 2009 և 2010 թվականներին տեղի ունեցած ներքաղաքական զարգացումները, ինչպես նաև կանդիդատանք Իրանի նկատմամբ միջազգային ճնշումներին և պատժամիջոցներին:

2008 թվականը գրեթե ամբողջությամբ նվիրված է Իրանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին և դրա շուրջ ծավալված իրադարձություններին:

2009 թվականը Իրանի համար նախագահական ընտրությունների տարի էր և առավել ուշագրավ է հետընտրական գործընթացների զարգացումների տեսանկյունից:

2010 թվականին Իրանում տեղի ունեցան ինչպես ներքաղաքական բուռն զարգացումներ, այնպես էլ Իրանի նկատմամբ ընդունվեց ՄԱԿ–ի հերթական բանաձևը, որով փորձ կատարվեց նվազեցնելու Իրանի հետ այլ երկրների շփումների մակարդակը:

***Իրանի ներքաղաքական զարգացումները  
2008–2010 թթ.***

2005 թ. նախագահական ընտրությունների արդյունքում 16 տարի իշխող չափավոր պահպանողականների ձեռքից իշխանությունն անցավ ծայրահեղ պահպանողականներին: Մահմուդ Ահմադինեժադի հաղթանակը ցույց տվեց, որ չնայած Իսլամական հեղափոխությունից անցել էր 25 տարի, այնուամենայնիվ Իրանի ժողովրդի զգալի մասը մնացել է Իսլամական հեղափոխության առաջնորդի՝ այաթոլլահ Խոմեյնիի գաղափարների ջատագույն: Նորպահպանողականները կարողացան իրենց կարգախոսներով համոզել Իրանի լայն հասարակությանը, որ բարեփոխիչների ժամանակ երկրում խորացել է կոռուպցիան, և որ բարե-

փոխիչները սերտորեն համագործակցել են Արևմուտքի հետ: Իր հերթին, Ահմադինեժադի թիմը խոստանում էր, որ արմատախիչ կանխ կոռուպցիան, կվերաբաշխի հարստությունը, կվերացնի աղքատությունը և ամուր կպահպանի Իսլամական հանրապետության դիրքերը<sup>1</sup>:

2007 թ. սկսած՝ բարեփոխիչները մշակում էին 2008 թ. խորհրդարանական ընտրությունների համար ընդհանուր ռազմավարություն, որի արդյունքում առաջացավ բարեփոխիչների եռակողմ համագործակցություն՝ Հ. Ռաֆսանջանիի, Մ. Խաթամիի և Ք. Քարուբիի գլխավորությամբ: Բարեփոխիչների խումբը բաղկացած էր հետևյալ երեք ուղղություններից՝ ձախեր, կենտրոնականներ ու չափավորներ: Ռաֆսանջանիի հետևորդների զգալի մասը պահպանողականների առավել պրագմատիկ (իրականական) ուղղության ներկայացուցիչներն էին: Խաթամիի թիվումը բարեփոխիչների հիմնական ուժերն էին կանցեմ, իսկ Քարուբին ներկայացնում էր չափավոր բարեփոխիչներին: Բարեփոխիչների կարգախոսն էր՝ «Կայուն զարգացումը»: Ընտրությունների նախօրյակին բարեփոխիչները կարողացան ստեղծել կալիֆիա, որի մեջ ընդգրկվեցին ավելի քան 20 կուսակցություններ և խմբեր: Սակայն բարեփոխիչների ամենամեծ բացողումը եղավ այն, որ նրանք այդպես էլ չկարողացան մեկ ընդհանուր ցուցակով մասնակցել ընտրություններին, այլ մասնակցեցին 3 տարբեր ցուցակներով<sup>2</sup>, ինչն էլ նպաստեց նրանց ուժերի հեշտ ջլատմանը: Կարելի է հստակ ասել, որ 2008 թ. բարեփոխիչները չկարողացան արձանագրել 1997 թ. իրենց հաղթանակը, երբ ուժերի միավորմամբ իշխանության գլուխ եկավ Մոհամմեդ Խաթամին:

2008 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրեց ավելի քան 7000 թեկնածու: Վերահսկիչ պալատը հայտարարեց խորհրդարանական պառտեզների հավակնող թեկնածուների հուսալիության ստուգման արդյունքները: Արցավազբից դուրս թողնվեցին մի շարք թեկնածուներ՝ տարբեր պատճառաբանություններով: Հատկանշական է, որ դեռևս 2008 թ. հունվարի վերջին ներքին գործերի նախարարությունը

հայտարարել էր, որ ընտրություններին թույլ չեն տալու մասնակցել 3000 թեկնածուի, որոնց մեծ մասը պատկանում են բարեփոխիչների ճամբարին: Միայն Թեհրանում այդ ստուգումների արդյունքում ներքին գործերի նախարարը մրցավազբից դուրս թողեց 1400 մասնակցից 400-ին<sup>3</sup>:

Սա խիստ անհանգստացրեց Իրանի բնակչության զգալի մասին, որոնք իրենց բողոքն արտահայտեցին՝ պարզապես բոյկոտելով ընտրությունները:

Թավրիզում գրանցվեց ամենացածր մասնակցությունն ընտրություններում, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ այդ շրջանի բոլոր բարեփոխիչների անունները հանվել էին ընտրությունների ցուցակից<sup>4</sup>: Երկրորդ քաղաք համարվող Սպահանում մրցավազբից հանվել էին բոլոր բարեփոխիչները: Այս պարագայում բարեփոխիչների ծախսերից թուրքական թուրքական իրականության հանել իրենց թեկնածուները մրցավազբից և իրականացնել հակակառավարական ցույցեր<sup>5</sup>: Սակայն այս հարցում ևս բարեփոխիչները չկարողացան գալ ընդհանուր որոշման և գործեցին առանձին-առանձին:

Պահպանողականները ևս ունեին մի շարք տարածալուծություններ: Նրանք բաժանվել էին խմբավորումների՝ Ահմադինեժադի կողմնակից պահպանողականներ և նրան չհարող ներկայացուցիչներ: Այս փաստն ի դեռն ելավ նաև 2009 թ. նախագահական ընտրությունների ժամանակ, երբ Ահմադինեժադին դեմ դուրս եկած պահպանողականներից շատերն անգամ սկսեցին աջակցել բարեփոխիչներից Միր Հուսեյն Մուսավիին:

Իրանի հոգևոր առաջնորդը՝ այաթոլլահ Խոմեյնին, ընտրություններից մի քանի օր առաջ վերահաստատել էր, որ աջակցելու է պահպանողականների արմատական թեկնածուներին:

Եվ արդեն 2008 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ միանգամայն ակնհայտ էր, որ հաղթելու են ծայրահեղ պահպանողական թեկնածուներից, քանի որ նրանք ար-

<sup>3</sup> Anoush Ehteshami, The Rise and Impact of Iran's Neocons, April 2008, The Stanley Foundation, p.2. <http://www.stanleyfoundation.org/publications/pab/RiseandImpactEhteshami08PAB.pdf>

<sup>4</sup> В. Месамед, Парламентские выборы в Иране: первые результаты, первые прогнозы, Институт Ближнего Востока, <http://www.imes.ru/rus/stat/2008/19-03-08.htm>

<sup>5</sup> Е. Дунаева, Слабость реформаторского лагеря, Июль — август 2008, Pro et Contra, Журнал Российской внутренней и внешней политики, стр. 41

<sup>6</sup> Big Turnout in Iranian Parliamentary Elections, The New York Times, March 15, 2008, <http://www.nytimes.com/2008/03/15/world/middleeast/15iran.html>

<sup>1</sup> Anoush Ehteshami, The Rise and Impact of Iran's Neocons, April 2008, The Stanley Foundation, p. 1. <http://www.stanleyfoundation.org/publications/pab/RiseandImpactEhteshami08PAB.pdf>

<sup>2</sup> Е. Дунаева, Слабость реформаторского лагеря, Июль — август 2008, Pro et Contra, Журнал Российской внутренней и внешней политики, Московский Центр Карнеги, стр. 45-46



ժանացել էին հոգևոր առաջնորդի բարեհաճությանը, և նրանց թիկունքում էր կանգնած գործող նախագահը: Նրանք էլ կարողացան գործի դնել իրենց ձեռքի տակ եղած բոլոր «գործընթացները»: 2008 թ. մարտի 14-ին խորհրդարանական 290 տեղի համար, ի վերջո, մրցավազքին թույլ տրվեց մասնակցել 768 թեկնածուի, որի արդյունքում միանշանակ հաղթանակեցին պահպանողական թևի ներկայացուցիչները:

Ահմադինեժադի կողմնակից պահպանողականները ստացան 117 տեղ, ընդդիմադիր կողմնակիցները՝ 53, բարեփոխիչները՝ 46, անկախ՝ 71: Թափուր մնաց 3 տեղ: Ընդհանուր առմամբ՝ 290 մանդատ<sup>7</sup>:

Ընտրություններից անմիջապես հետո բարեփոխիչների կողմնակիցները հանդես եկան բողոքի ակցիաներով: Մարտի 15-ին Գիլյանի նահանգի Թալեշ քաղաքում ոստիկանությունը ընտրությունների արդյունքից դժգոհող և անկարգություններ հրահարող ցուցարարների նկատմամբ օգտագործեց արցունքաբեր գազ:

Բարեփոխիչների կողմնակիցները հայտարարում էին, որ իրենց թվերը տեղ չեն հասել և կասկածի տակ էին առնում ընտրությունների արդյունքները: Արովակեդ Մուսավի Լարին, բարեփոխիչների առաջնորդներից մեկը, ով հաթամիի օրոք զբաղեցրել է ներքին գործերի նախարարի պաշտոնը, բողոք-նամակ ներկայացրեց ներքին գործերի նախարարին և Պահապան խորհրդին<sup>8</sup>՝ նշելով, որ բարեփոխիչ դիտորդների միայն մեկ քառորդին է իրավունք տրվել վերահսկելու Թեհրանում ընթացող ընտրությունները<sup>9</sup>:

Սակայն ընտրություններին անմիջապես հաջորդեց իրանական նոր տարին՝ Նոուրուզը, և այդ բողոք նամակներից շատերին ընթացք չտրվեց:

Պահպանողականները, ուշադրություն չդարձնելով բարեփոխիչների բողոքներին, լավ գիտակցում էին, որ սա «գլխավոր փորձն» էր հաջորդ՝ 2009 թ. կայանալիք նախագահական ընտրություններից առաջ:

Ահմադինեժադը գիտակցելով, որ մեծապես կորցնում է քա-

ղաքաբնակ միջին և բարձր խավի աջակցությունը, առավելապես ուշադրությունը կենտրոնացրել էր հեռավոր շրջանների անապահով ընտրագանգավածի վրա՝ խոստանալով նրանց հատկացնել վարկեր և թեթևացնել հարկային բեռը: Քաջ գիտակցելով, որ երկրի էլիտայի (տեխնոկրատների, գործարար մարդկանց, լրագրողների, գիտնականների և նույնիսկ բարձր հոգևորականության) համակրանքը իրեն չի պատկանում, Ահմադինեժադը ջանում էր իր կողմը գրավել կիսաառգմական կառույցներին, մասնավորապես Բասիջին: Նա մեծ աշխատանքներ է տանում, որպեսզի իր կողմը ներգրավի նաև իսլամական Պահապան խորհրդի բարձրագույն ղեկավարությանը՝ առաջարկելով նրանց շահավետ շինարարական և նորարարական նախագծեր<sup>10</sup>:

2009 թ. հիրավի թեժ էր Իրանի Իսլամական Հանրապետության համար: Դա պարզ էր արդեն տարեսկզբին, քանի որ առջևում նախագահական ընտրություններն էին, իսկ նախագահի բոլոր թեկնածուներն էլ քաղաքական տարբեր «քաշ» ունեցող գործիչներ էին: Պահապան խորհուրդը արձանագրեց, որ նախագահական ընտրություններին իրենց թեկնածուություններն են գրանցել մոտ 500 թեկնածու: 2009 թ. մայիսի 20-ին Խորհուրդը հայտարարեց, որ նախագահական ընտրություններին մասնակցելու համար հաստատվել է չորս թեկնածու՝ գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, պահպանողական թևից Մոհսեն Ռեզային, բարեփոխիչների թևից Միր Հուսեյն Մուսավին և Մեհդի Քյարուբին<sup>11</sup>: Լարվածությունը ի դերև ելավ հատկապես, երբ Մահմուդ Ահմադինեժադի կողմնակիցները հասկացան, որ իրենց առաջնորդը նախագահի պարոզի համար պետք է պայքարի նախկին նախագահ Մոհամմադ Հաթամիի դեմ: Ինչպես գիտենք, Հաթամին առավել լիբերալ թևի ներկայացուցիչ է և այդ պահին ուներ զգալի կողմնակիցներ և հետևորդներ: Թեև Հաթամին չէր շտապում հայտարարել մրցարշավին մասնակցելու իր որոշման մասին, բայց բոլոր տեսաբանները գտնում էին, որ դա անխուսափելի է, և Հաթամին անպայմանորեն կմասնակցի այդ մրցարշավին:

Հաթամիի թեկնածության հարցը կարևոր էր նրանով, որ Իրանի ծայրամասային շրջաններում հանրությունը, որպես կա-

<sup>7</sup> Kenneth Katzman, Iran: U.S. Concerns and Policy Responses, Congressional research service, <http://www.fas.org/spp/crs/mideast/RL32048.pdf>

<sup>8</sup> Պահապան խորհուրդը բաղկացած է 14 անդամից, և այն նշանակվում է հոգևոր առաջնորդի կողմից. ի թիվս այլ գործառույթների՝ նրա խնդիրն է վերահսկել երկրում տեղի ունեցող ընտրությունները:

<sup>9</sup> Big Turnout in Iranian Parliamentary Elections, The New York Times, March 15, 2008, <http://www.nytimes.com/2008/03/15/world/middleeast/15iran.html>

<sup>10</sup> К. Саджапур, Общественные настроения в Иране, Июль — август 2008, Pro et Contra, Журнал Российской внутренней и внешней политики, стр. 7.

<sup>11</sup> Iran's 2009 Presidential Elections, Casey L. Addison, Congressional Research Service, Washington, June 22, 2009, p. 2.

նոն, ընտրությունների ժամանակ քվեարկում է ոչ թե թեկնածուի քաղաքական կուրսի կամ գաղափարների համար, այլ ընտրում է առավել հայտնի ներկայացուցիչներին:

Մինչ Խաթամին հաշվարկում էր իր մասնակցության դեպքում հաջողության աստիճանը՝ աչքի առաջ ունենալով ոչ պակաս հեղինակություն ունեցող Ռաֆսանջանիի պարտությունը նույն Աիմադինեժադի նկատմամբ, գործող նախագահ Մ. Աիմադինեժադի կողմնակիցներն սկսեցին իրականացնել «Աև PR» Խաթամիի նկատմամբ: Նրանք հանրությանը հիշեցրին բոլոր այն բացթողումները, որ Խաթամին արել էր իր կառավարման տարիներին: Հիշեցնում էին, որ Խաթամիին չհաջողվեց կատարել իր նախընտրական խոստումների մեծ մասը<sup>12</sup>: Անգամ հեռուտատեսությամբ ցուցադրեցին կադրեր, որտեղ զինվորականությունը ճնշում էր գործադրում ուսանողական ցույցերի ժամանակ: Այսպես փորձում էին առավել երիտասարդ ընտրազանգվածին ներշնչել, որ Խաթամիի հրամանով ճնշել են ուսանողության ցույցերը, որոնց ընթացքում անգամ զոհեր են գրանցվել:

Ավելին՝ պահպանողական մամուլում հայտնվում էին նյութեր, ըստ որոնց բարեփոխիչները ֆինանսական աջակցություն են ստանում արևմտյան երկրներից, մասնավորապես ԱՄՆ-ից և ի վիճակի չեն կարգավորելու երկրի տնտեսական խնդիրները:

Միևնույն ժամանակ, թերի կրթություն ստացած բնակչության զգալի մասի մոտ այն կարծիքն է, որ համագործակցությունը Արևմուտքի հետ համարժեք է սեփական երկրի դեմ հանցագործություն կատարելուն<sup>13</sup>:

Գիտակցելով որ իրերի դասավորությունը բացարձակապես իր օգտին չէ, և որ իր թեկնածությանն առանձնապես կողմ չէր նաև հոգևոր առաջնորդը՝ Խաթամին մարտի 17-ին հայտարարեց, որ չի մասնակցի նախագահական ընտրություններին: Այդ պարագայում բարեփոխիչները փորձեցին գտնել այլ թեկնածու, որին առավել դժվար կլիներ «սևացնել», ու հաղթանակը առավել իրատեսական կլիներ: Եվ կարճ ժամանակ անց բոլորը սկսեցին

արտաբերել Միր Հուսեյն Մուսավիի մոռացված անունը: Մոռացված քանի որ 1980-ականների վերջերից նա թողել էր «Մեծ քաղաքականությունը» և ներգրավվել էր մանկավարժական գործունեության մեջ՝ գրադեցնելով Իրանի Արվեստի ակադեմիայի նախագահի պաշտոնը: Իսկ մինչ այդ Իրանի համար ամենածանր ժամանակաշրջանում՝ Իրան-իրաքյան պատերազմի տարիներին, եղել է Իրանի վարչապետը: Եվ որքան էլ զարմանալի է, նրա կառավարման տարիներին Իրանի տնտեսությունը աճ էր արձանագրել: Բացի այդ՝ նա հայտնի էր նրանով, որ իր կառավարման տարիներին մեծ աշխատանքներ են տարվել Իրանի միջուկային ծրագրի շրջանակներում, այսինքն՝ հանրությանը հասկացնել էին տալիս, որ նրա ընտրվելու դեպքում էլ Իրանը ոչ մի քայլ հետ չի նահանջի միջուկային իր ծրագրերից<sup>14</sup>:

Խորհրդարանական ընտրություններում պարտություն կրելով՝ բարեփոխիչները հասկացան, որ այլևս մեծ քաղաքների վրա չեն կարող հույս դնել, քանի որ քաղաքաբնակները ընտրությունների ժամանակ անհրաժեշտ ակտիվություն չցուցաբերեցին: Որոշ տվյալների համաձայն՝ Թեհրանում ընտրություններին մասնակցեց ընտրազանգվածի 30%-ը այն դեպքում, երբ թեհրանաբնակները մեծապես հիասթափված էին Աիմադինեժադի կառավարման կուրսից և կարոտով էին հիշում Մոհամեդ Խաթամիի կառավարման տարիները: Որպեսզի ամրացնեն իրենց դիրքերը՝ բարեփոխիչները որոշեցին համագործակցել պահպանողականների այն թևի հետ, որոնք իրապես դժգոհ էին Մահմուդ Աիմադինեժադի կառավարման ձևից: Նրանք անգամ վճռեցին հանդես գալ մեկ թեկնածուով, որպեսզի հետագայում կարողանան ստեղծել անգալիյան միասնական կառավարություն: Հարկ է նշել, որ բարեփոխիչները բավական զրագետ էին պատրաստվել՝ իրենց շարժման համար ընտրելով մի շարք ազդեցիկ կարգախոսներ և իսլամի խորհրդանիշ հանդիսացող կանաչ գույնը: Ընդհանուր առմամբ քաղաքային ընդդիմությունը պահանջում էր տնտեսական ավելի լավ պայմաններ, բարեկեցիկ կյանք, ազատություններ և այլն:

Ըստ էության, նորպահպանողականները կարողացան գալ և ամրագրել իրենց իշխանությունը՝ շնորհիվ միջին և ցածր խավերի աջակցության և փորձում էին ամեն կերպ իրենց տարանջատել ավանդական պահպանողականներից, որոնք ոչ պատշաճ

<sup>12</sup> Իրականում կառավարման իր տարիների ընթացքում Խաթամիին պարզապես թույլ չտվեցին իրականացնել իր ծրագրերը: Իրական իշխանությունը բանակում, ոստիկանությունում, դատարաններում, հեռուտատեսությունում և ուղիղյում պատկանում էր պահպանողականներին՝ չնայած որ Խաթամին հուլիսյան ընտրությունների ժամանակ հավաքել էր 76,9% ձայն և վայելում էր ընտրազանգվածի աջակցությունը. Так сказал Аяатолла, 6 августа 2001, Известия, <http://www.izvestia.ru/news/250059>:

<sup>13</sup> E. Дунаева, Слабость реформаторского лагера, Июль — август 2008, Pro et Contra, Журнал Российской внутренней и внешней политики, стр. 43.

<sup>14</sup> Behrouz Mehri, Iran's Potato Revolution, Foreign policy, May 13, 2009 [http://www.foreignpolicy.com/articles/2009/05/12/irans\\_potato\\_revolution](http://www.foreignpolicy.com/articles/2009/05/12/irans_potato_revolution)



չափով են հոգ տարել զանգվածների շահերը պաշտպանելու համար<sup>15</sup>: Հատկանշական է, որ Իրանի Իսլամական Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ՝ 2009 թ., գրանցվեց հեռուստաբանավեճ նախագահական ընտրությունների մասնակցող թեկնածուների միջև: Բանավեճի ընթացքում բարեփոխիչներից Մեհդի Բարոուրին մեղադրեց Ահմադինեժադին ստախոսության և տնտեսության վերաբերյալ տեղեկությունների արճատման մեջ: «Ես 16 տարի աշխատել եմ խորհրդարանում. բոլոր թվերը, որ ներկայացնում եք, հակասում են այն թվերին, ինչ տեսել ենք այդ տարիների ընթացքում»: Ի պատասխան Ահմադինեժադը ներկայացրեց սոցիալական ոլորտում ձեռք բերված հաջողությունները, աղքատների աշխատավարձի և թոշակների բարձրացումը և ընդդիմախոսին մեղադրեց կոռումպացված լինելու մեջ<sup>16</sup>: 2009 թ. հունիսի 3-ին հեռուստաբանավեճ տեղի ունեցավ Մահմոդ Ահմադինեժադի և Միր Հուսեյն Մուսավիի միջև, որն իսկապես թեժ քննարկում էր: Գործող նախագահը բացահայտորեն քննադատեց Միր Հուսեյն Մուսավիի կնոջ՝ Չահրա Ռահեմավարդիի գործելաճոճը<sup>17</sup>: Որոշ տվյալներով՝ այս բանավեճը դիտում էր 40–50 մլն մարդ:

Ի դեպ, կան բազմաթիվ փաստեր, որ Ահմադինեժադի կողմնակիցները ընտրություններից առաջ մեծ քանակի «օգնություն» են բաժանել Իրանի հատկապես ծայրամասային շրջաններում: Ալի Լարիջանին՝ խորհրդարանի պահպանողական խոսնակը, դեմ հանդես եկավ Ահմադինեժադի որդեգրած նման գործելակերպին: Վերջինս որոշել էր պետական միջոցները բաշխել հասարակ ժողովրդին՝ այդպիսով նոր դիվիդենդներ (շահութաբաժին) ձեռք բերելու համար: Ահմադինեժադը նախկինում ևս բարձրացրել էր իր հեղինակությունը՝ դիմելով նման «գործիքների»: Նա ցածր կենսամակարդակ ունեցող երիտասարդներին և մանր ձեռներեցներին ցածր տոկոսով վարկեր էր տրամադրել: Նախա-

գահի ընդդիմադիրները նշում էին, որ նման քայլերը էլ ավելի են խորացնում տնտեսական ճգնաժամը և մեծացնում դրամային արժեզրկումը<sup>18</sup>:

Ընտրությունները տեղի ունեցան 2009 թ. հունիսի 12-ին: Ընտրությունների հաջորդ օրն արդեն Իրանի «կանաչների շարժումը», Միր Հուսեյն Մուսավիին իր կողմնակիցների գլխավորությամբ փողոց դուրս եկած հայտարարում էր ընտրությունների կեղծված լինելու մասին՝ հանդես գալով «ուր է իմ ծայնը» կարգախոսով:

Ըստ իս՝ Իրանում հուզումների առիթ հանդիսացավ խաբված լինելու զգացողությունը: Ընտրություններից մոտավորապես 3 ժամ անց Իրանի պետական հեռուստատեսությունը հայտարարեց Մ. Ահմադինեժադի հաղթանակի մասին, ինչը դժգոհության առիթ հանդիսացավ: Հաջորդ օրերին հրապարակվեցին ընտրությունների պաշտոնական տվյալները. Ահմադինեժադ՝ 62,46%, Մուսավի՝ կանաչների շարժման ղեկավարը, 33,87%: Երկրորդ փուլի մասին խոսելն արդեն ավելորդ էր: Կարծում ենք, որ Մուսավիի կողմնակիցները չեն կարողանում հաշտվել այդ մտքի հետ, որ անգամ չեղավ երկրորդ փուլ: Հետևելով իրանական պաշտոնական հեռուստատեսության լրահոսին՝ անկեղծորեն զարմանալի և կասկածելի էր, թե ինչպես կարող էին 3 ժամ պահ մեջ ասել հաղթողի անունը: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ նախագահական ընտրություններում ծայրերի մեծամասնությամբ հաղթել է Ահմադինեժադը, բայց և չենք կիսում այն տեսակետը, որ ծայրերի հարաբերակցությունը եղել է 64,46%՝ ընդդեմ 33,87%–ի: Ինչո՞րն այն է, որ թե՛ արևմտյան երկրներում նախագահի թեկնածուները կարող են հաղթանակ տանել ընդամենը 1% տարբերությամբ, ինչը ընդունելի է հանրության կողմից, ապա Արևելքում այդ տարբերակն անընդունելի է համարվում: Ստացվում է, որ քնակչության կեսը նախագահի կողմից չէ: Արևելյան ղեկավարի համար նման պայմաններում կառավարելը բավական քարոզ է:

Չնայած այն հանգամանքին, որ իրանական ղեկավարությունը հոգ տարավ, որ պաշտոնական ՉԼՄ-ները չխոսեն Մուսավիի և նրա կողմնակիցների մասին, բայց նյութերը CNN, Twitter և այլ ցանցերի միջոցով հաշված ժամերի ընթացքում տարածվեցին ողջ աշխարհով մեկ:

<sup>15</sup> Anoush Ehteshami, The Rise and Impact of Iran's Neocons, April 2008, The Stanley Foundation, p. 4. <http://www.stanleyfoundation.org/publications/pab/RiseandImpactEhteshami08PAB.pdf>

<sup>16</sup> Н. Сурков, Ахмадинежада вняты во лжи, Противники президента Ирана объединились, Независимая, 2009-06-08, [http://www.ng.ru/world/2009-06-08/8\\_Ahmadinejad.html](http://www.ng.ru/world/2009-06-08/8_Ahmadinejad.html)

<sup>17</sup> Նա քաղաքագետ է, Թեհրանի Ազադհա համալսարանի նախկին ռեկտորն է: Եղել է ԻԻՀ նախկին նախագահ Մոհամմեդ Խաթամիի խորհրդակցանք: Մեծ ներդրում է ունեցել ամուսնու նախընտրական քարոզարշավը կազմակերպելու և ուղղորդելու գործում: Iran's 2009 Presidential Elections, Casey L. Addis, June 22, 2009, Congressional Research Service. BBC news, Who's who in Iran, <http://news.bbc.co.uk/2/hi/8102406.stm>

<sup>18</sup> Н. Сурков, Ахмадинежада вняты во лжи, Противники президента Ирана объединились, Независимая, 2009-06-08, [http://www.ng.ru/world/2009-06-08/8\\_Ahmadinejad.html](http://www.ng.ru/world/2009-06-08/8_Ahmadinejad.html)

Ուլքեր էին Մուսավիի կողմնակիցները, որոնք աշխարհին հաղորդեցին Իրանում տիրող բռնարարքների մասին: Այն ակտիվ զանգվածն էր, որը հոգնել էր երկրում առկա կառավարման ձևից հիմնականում:

1. Երիտասարդ ու համարձակ զանգվածը (պատրաստ էին ամեն զոհողության հանուն իրենց գաղափարների),

2. կրթված զանգվածը (անգլերենին և համակարգչային գիտելիքներին տիրապետող),

3. ֆինանսապես որոշակիորեն ապահովված զանգվածը (քանի որ տեղեկատվությունը տարածվում էր կամ բջջային հեռախոսից, կամ սեփական համակարգչից, իսկ համակարգչային կենտրոններից ուղարկելու դեպքում հեշտությամբ կբացահայտվեր նրանց գործունեությունը):

Բայց չէ՞ որ դա 70–միլիոնանոց Իրանը չէ, և նույնիսկ Իրանի բնակչության մեկ քառորդը այդպես չի գործում: Դա բնակչության բավականին փոքր զանգվածն էր, որը, սակայն, շատ լավ գիտի՝ ինչպես օգտագործել իր գիտելիքները և իր ճիշդ հասցնել աշխարհին: Շատ հաճախ դա լինում է նրա վերջին ճիշդ, քանի որ դրանից հետո սկսվում են հետապնդումները:

Կանաչների շարժման ակտիվորեն արձագանքում էին Իրանի հատկապես խոշոր քաղաքները՝ Թեհրանը, Սպահանը, Շիրազը, Մեշհեդը և այլն: Ցուցարարները վանկարկում էին՝ «Մահ բռնապետին», «Կորչի բռնապետությունը» կարգախոսները:

Հունիսի 14–ի գիշերը Ահմադնեժադին հավատարիմ կիսառազմական «Բասիժ» խմբավորման անդամները հարձակվեցին Թեհրանի համալսարանի մոտ հավաքված ընդդիմադիրների վրա, գրանցվեցին առաջին բռնարարքները, և եղան երկկողմ տուժածներ: Ձերբակալվեցին առնվազն 100 բարեփոխիչներ, այդ թվում նաև Մոհամմադ Խաթամիի երբայրը: Նրանք մեղադրվեցին ընտրությունների շուրջ հանրային խռովություն կազմակերպելու մեջ:

Հունիսի 15–ին միլիոնավոր ցուցարարներ դուրս եկան Ազատության փողոց: Մուսավիի ընտրություններից հետո առաջին անգամ հանդիպեց իր կողմնակիցների հետ: Հունիսի 15–ին աշխարհի տարբեր վայրերում՝ Փարիզում, Բեռլինում, Լոնդոնում, Հռոմում, Ամստերդամում, տեղի ունեցան ցույցեր՝ ի պաշտպանություն և համերաշխություն Իրանի ընդդիմության: Բողոքի միջոցառումները հիմնականում կազմակերպվում էին իրանցի վտարանդիների և գործող վարչակարգին ընդդիմադիր ուժերի միջոցով:

Նույն օրը գիշերը լուրջ բախում գրանցվեց Թեհրանի համալսարանի մոտ, ոստիկաններն առաջին անգամ կրակ բացեցին ցուցարարների ուղղությամբ, օգտագործեցին արցունքաբեր գազ և պլաստիկ փամփուշտներ: Մեջխիսի նախագահ Ալի Լարիջանին դատապարտեց այս բռնարարքը և պատասխանատվության ողջ մեղքը դրեց ներքին գործերի նախարարի վրա<sup>19</sup>:

Հունիսի 16–ին Պահապան խորհուրդը հայտարարեց, որ իրականացվելու է ծայրերի մասնակի վերահաշվարկ, բայց ընտրություններն անվավեր չեն ճանաչվելու: Միդ Հուսեյն Մուսավիին չքավարարեց ծայրերի վերահաշվարկի որոշումը: Նա հայտարարեց, որ Սահմանադրական խորհրդի անդամների մեծամասնությունը նախագահի ջատագովներն են և չեն կարող համարվել «չեզոք գործիչներ»<sup>20</sup>: Ցույցերը Իրանում շարունակվեցին: Ոստիկանները կրկին դիմեցին զենքի, ինչի արդյունքում զոհվեց շուրջ 10 քաղաքացի: Բազմաթիվ մարդկանց ձերբակալեցին, այդ թվում նաև Իրանի նախկին փոխնախագահ Մոհամմադ Ալի Աբթահին:

Հունիսի 17–ին Իրանի ֆուտբոլի ազգային հավաքականը, որ խաղում էր Հյուսիսային Կորեայի հետ, խաղադաշտ մտավ կանաչ թևակապերով՝ ի պաշտպանություն Մուսավիի շարժման: Սա իսկապես մեծ խիզախություն էր և արդեն համազգային պոթենցիան էր նմանվում: Արդեն փողոց էին դուրս գալիս նույնիսկ նրանք, ովքեր հիասթափվել էին ընտրություններից և չէին էլ մասնակցել ընտրություններին: Հունիսի 18–ին ավելի քան 100 հազար ցուցարարներ մոմավառություն կազմակերպեցին՝ ի հիշատակ ցույցերի ժամանակ զոհվածների: Հունիսի 18–ի դրությամբ Իրանում գործող իրավապաշտպանների ասոցիացիան հաստատեց մինչ այդ եղած 32 զոհերի մասին տեղեկությունը<sup>21</sup>, թեև պաշտոնական տվյալները էպպես տարբերվում էին դրանից:

Հունիսի 19–ին հոգևոր առաջնորդը ուրբաթօրյա աղոթք կատարեց Թեհրանի համալսարանում՝ միևնույն ժամանակ կոչ անելով ընդդիմությանը հաշտվել պարտության հետ՝ նշելով, որ էական խախտումներ չեն եղել. «Իսլամական վարչակարգը երբեք չի գնացել քվեների մանիպուլյացիայի և դավաճանության:

<sup>19</sup> Iran's 2009 Presidential Elections, Casey L. Addis, June 22, 2009, Congressional Research Service, p. 7–8.

<sup>20</sup> «В Тегеране арестован бывший вице-президент Ирана», Известия, 16 июня 2009, <http://www.izvestia.ru/news/452804>

<sup>21</sup> Iran election: contenders challenged by Supreme Leader on day of mourning, The Telegraph, 18 June 2009, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/iran/5570872/Iran-election-contenders-challenged-by-Supreme-Leader-on-day-of-mourning.html>



Այս երկրի օրինական կառուցվածքը թույլ չի տալիս համատարած կեղծումներ կատարել: Եթե տարբերությունը լիներ 100,000 կամ 500,000 կամ 1 մլն, լավ, կարելի էր ասել, որ խարդախություն է գրանցվել: Բայց ինչպես կարելի է կեղծել 11 միլիոն թվե՞ք<sup>22</sup>: Խամենեին ուրբաթօրյա նամագին հրավիրել էր նաև Միր Հուսեյն Մուսավիին՝ կանգնելու իր կողքին ի նշան ընտրություններում պարտվելու համակերպման: Սակայն Միր Հուսեյն Մուսավին նախընտրեց իր կողմնակիցների կողքին մնալ:

Հոգևոր առաջնորդի նման կեցվածքը՝ Ահմադինեժադին միաշնչանակ պաշտպանելու ցանկությունը, էլ ավելի լարեց առանց այդ էլ շիկացած մթնոլորտը: Եթե մինչ այդ բոլոր վարկաբեկումներն ուղղված էին Ահմադինեժադին, ապա վերոհիշյալ ելույթից հետո ցուցարարները պատռեցին ուսուցիչի նկարը: Իսկ Միր Հուսեյն Մուսավին մեղադրեց խամենեինի, որ նա «նպաստում է հանրապետական կառավարման ձևի խզմանը և չի խոչընդոտում բռնապետության հաստատմանը երկրում»<sup>23</sup>:

Մոհամեդ Խաթամին էլ իր հերթին հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ «Եթե այս գործընթացները դառնան սովորական երևույթ, վարչակարգի հանրապետական կերպարը կվնասվի և մարդիկ կկորցնեն իրենց հավատը առ վարչակարգը»<sup>24</sup>:

Աշխարհը ցնցվեց իունիսի 20-ին Իրանում իրականացվող զանգվածային ջարդերից: Կանաչների շարժման խորհրդանիշ դարձավ 26-ամյա Նեդա Ադա-Սոլթանին, որին ԻԻՀ ոստիկանը կրակեց՝ նշանակետ բռնելով հենց սիրտը: Այս տեսանկյունը արագ տարածվեց ողջ աշխարհով մեկ: Հաշված վայրկյաններում Նեդայի դիակը Բասիժի ներկայացուցիչները տարան, գտան նրա բնակարանը, ստիպեցին ծնողներին հեռանալ քաղաքից:

Իրանում տիրող իրավիճակը մեծապես քննադատվեց արևմտյան երկրների կողմից, իսկ Իրանի դաշնակից երկրները կամ պահպանեցին չեզոքություն, կամ մասնակի արտահայտվեցին՝ հույս հայտնելով, որ իրավիճակը կշտկվի: Միացյալ Նահանգները արտահայտվեց նախագահի և Կոնգրեսի մակարդակով: Հունիսի 19-ին ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատը և հետագայում էլ Սենատը ընդունեցին օրինագիծ, որով պաշտպա-

նություն էին հայտնում Իրանի այն քաղաքացիներին, ում համար կարևոր է «ազատության ընդունումը, մարդու իրավունքները, քաղաքացու ազատությունը և օրենքի գերակայությունը»<sup>25</sup>:

Որոշ կայքէջեր գրեցին, որ Թեհրանի վրա անընդհատ պատվում են ուղղաթիւներ, որոնք ցուցարարների վրա լքում են քիմիկատներ: Գործի դրվեցին նաև ջրաշիթերն ու արցունքաբեր գազը<sup>26</sup>:

Հունիսի 20-ին Պահապան խորհուրդը հավաք կազմակերպեց ընտրությունների բոլոր թեկնածուների համար, որպեսզի քննարկեն ընտրությունները և դրանից հետո առաջացած խնդիրները: Սակայն Միր Հուսեյն Մուսավին հրաժարվեց մասնակցել այդ հավաքին, քանզի նրա պահանջը միայն մեկն էր՝ վերընտրություններ: Հունիսի 21-ին տարածվեցին լուրեր, թե ձերբակալվել է ԻԻՀ նախկին նախագահ Հ. Ռաֆասանջանիի ընտանիքը՝ տեղիք տալով ենթադրությունների Իրանի հոգևոր դասի միջև ճեղքի հնարավոր խորացման մասին<sup>27</sup>:

Իսլամական հեղափոխությունից ի վեր Իրանի կառավարող վերնախավում այս աստիճան չէր խորացել անջրպետը, և այն գնալով ավելի էր խորանում՝ իրարից հեռացնելով միջին ու մանր պաշտոնյաներին, հոգևորականներին: Ահմադինեժադի նկատմամբ անվստահություն ցուցաբերեցին նաև մի շարք խորհրդարանականներ: 290 խորհրդարանականներից առնվազն 100-ը չմասնակցեցին Ահմադինեժադի կողմից վերընտրվելու կապակցությամբ կազմակերպված խնջույքին, չմասնակցեցին նաև Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին և այլ պաշտոնյաներ<sup>28</sup>:

Հունիսի վերջին Թեհրանի փողոցներում ցուցարարների թիվը նկատելիորեն նվազեց, սակայն չենք կարող ասել նաև, որ կրքերը հանդարտվել էին: Հուլիսի 1-ին Իրանի կառավարությունը փակել էր հակակառավարական հողվածներ տպագրող Մեհդի Քարուբին պատկանող «Etemed Melli» թերթը: Սկսվել էր ձերբակալությունների, հետապնդումների մի ամբողջ շարք: Ձերբակալվածների ու մահացածների թվաքանակի մասին տվյալները

<sup>22</sup> Tony Karon, Iran's Supreme Leader: Ahmadinejad Won the Election, Time, June 19, 2009 <http://www.time.com/time/world/article/0,8599,1905703,00.html>

<sup>23</sup> В. Сажин, "Иран: Военно-политическая ситуация, Институт Ближнего Востока", июнь-2009, <http://www.iimes.ru/rus/stat/2009/15-07-09a.htm>

<sup>24</sup> Casey L. Addis, Iran's 2009 Presidential Elections, Congressional Research Service, June 22, 2009, p. 8.

<sup>25</sup> CNN Politics, U.S. House votes overwhelmingly for Iranian resolution, June 19, 2009, [http://articles.cnn.com/2009-06-19/politics/iran.us.congress\\_1\\_president-mahmoud-ahmadinejad-iranian-sen-john-mccain?\\_s=PM:POLITICS](http://articles.cnn.com/2009-06-19/politics/iran.us.congress_1_president-mahmoud-ahmadinejad-iranian-sen-john-mccain?_s=PM:POLITICS)

<sup>26</sup> Тегеран: над городом кружит вертолет, облетающий демонстрантов химикатами, [http://newsru.co.il/mideast/20jun2009/helicopt\\_709.html](http://newsru.co.il/mideast/20jun2009/helicopt_709.html)

<sup>27</sup> Iran's 2009 Presidential Elections, Casey L. Addis, Congressional Research Service, June 22, 2009, p. 1.

<sup>28</sup> В. Сажин, Иран: Военно-политическая ситуация, Институт Ближнего Востока, июнь-2009, <http://www.iimes.ru/rus/stat/2009/15-07-09a.htm>



տարրեր են և իրարամերժ: Ըստ իրանական կառավարության՝ հուլիսի 1-ի տվյալներով գրանցվել է 27 զոհ, 627 մարդ ձերբակալվել է<sup>29</sup>: *iranhumanrights.org*-ը իր կայքէջում տեղադրել է ձերբակալվածների և մահացածների իրենց ցուցակը. ձերբակալվել են 242-ը, որոնցից 121-ը քաղաքական գործիչ էր, 25-ը՝ լրագրող, 9-ը՝ պրոֆեսոր, 87-ը՝ ուսանող: Մահացածների թիվը, ըստ աղբյուրի, 30-ն է, 6-քաղաքացի ձերբակալվել է, և ոչ մի տեղեկություն չկա նրանց ճակատագրի մասին<sup>30</sup>:

Հուլիսի 10-ին Թեհրանի գլխավոր դատախազը հայտնեց, որ ձերբակալվել է 2500 քաղաքացի, որոնցից 500-ն այդ պահի դրությամբ դեռ բանտում է:

Հուլիսի 30-ին Իրանի ընդդիմության ղեկավար Միր Հուսեյն Մուսավին այցելեց Թեհրանի գերեզմանատուն, որպեսզի հարգանքի տուրք մատուցի հունիսյան բախումների ժամանակ զոհվածներին: Չարտոնված հավաքին մասնակցեց ավելի քան 500 մարդ: Կարճ ժամանակ անց ստոփյանությունը ստիպեց ցրվել հավաքվածներին: Մուսավիի կողմնակիցների մի զանգված էլ հավաքվել էր Թեհրանի կենտրոնում, որի ժամանակ տեղի ունեցան անկարգություններ:

Օգոստոսի 3-ին Թեհրանի հեղափոխական դատարանի առջև կանգնեցին մոտ 100 ցուցարարներ, ովքեր մասնակցել էին հունիսի 12-ի նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ցույցերին:

2009 թ. դեկտեմբերի 27-ին՝ Աշուրայի սզո օրը, Իրանի ընդդիմությունը շարունակեց հակակառավարական ցույցը: Թեհրանում տեղի ունեցած ցույցի ժամանակ զոհվեց 15 հոգուց ավելի մարդ, այդ թվում՝ Միր Հուսեյն Մուսավիի 35-ամյա զարմիկը, 300-ը ձերբակալվեցին:

Ներքին հուզումները չդադարեցին ողջ 2009 թվականի ընթացքում, մահապատիժները պարբերական բնույթ կրեցին, միջազգային ճնշումներն ավելի ուժեղացան Իրանի նկատմամբ:

2009 թ. վերջին և առավելապես 2010 թ. Իրանի ներքաղաքական կյանքում նկատվեց նաև մի երևույթ, որը մեծ ուշադրություն է պահանջում. լուրջ տարածայնություններ սկսվեցին հոգևոր վերնախավի և գործող կառավարության միջև՝ Մահմուդ Ահմադինեժադի գլխավորությամբ: Վերջին մեկ տարում այդ լարվածությունն այնքան խորացավ, որ կողմերն սկսեցին բացահայտ

քայլեր իրականացնել իրար դեմ, ինչն էլ արձանագրվեց ԶԼԱ-ների կողմից: Նախագահը, փորձելով մեծացնել իր լիազորությունները, սկսեց պաշտոնանկ անել այն նախարարներին, որոնց աստարտում էր հոգևոր առաջնորդը: Կարելի է փաստել, որ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը փորձեց մեծացնել իր լիազորությունները՝ սովորելով հոգևոր առաջնորդից: Իսկ սա լուրջ խնդիր է, քանզի Իրանի Իսլամական Հանրապետության գերագույն իշխանությունը պատկանում է հոգևոր առաջնորդին, այս դեպքում՝ Ալի Խամենեյին, իսկ սովորել այդ պաշտոնը նշանակում է հավակնել արդեն համակարգային փոփոխությունների:

ԻԻՀ նախագահի և հոգևոր առաջնորդի միջև առաջին լարվածությունը նկատվեց 2009 թ. հուլիսին, երբ Ալի Խամենեյին պաշտոնից հեռացրեց փոխնախագահ Էսֆանդիար Ռահիմ Մաշային, ով, ԶԼԱ-ների հավաստմամբ, Ահմադինեժադի խնամքի է: Չհամաձայնվելով հոգևոր առաջնորդի որոշման հետ՝ նախագահը վերջինիս նշանակեց իր աշխատակազմի ղեկավար<sup>31</sup>:

Հաջորդ լարվածությունը գրանցվեց այն ժամանակ, երբ ԻԻՀ նախագահը, առանց հոգևոր առաջնորդի հետ քննարկելու, պաշտոնից ազատեց արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիին, ով այդ պահին աշխատանքային այցով գտնվում էր Սենեգալում և տեղյակ չէր նախագահի նման որոշման մասին: Նշենք, որ ԻԻՀ-ում արտաքին գործերի նախարարին, հետախուզության նախարարին և արդարադատության նախարարին նշանակելու և պաշտոնից ազատելու իրավունք ունի հոգևոր առաջնորդը:

Հարաբերությունների լարվածության նոր պատճառ դարձավ 2011 թ. ապրիլի 17-ին նախագահի պահանջած իրաժարականը հետախուզության նախարար Հեյդար Մուլեհից, իսկ վերջինս, վայելելով հոգևոր առաջնորդի հովանավորչությունը, վերականգնվեց իր զբաղեցրած պաշտոնում<sup>32</sup>: Այս հանգամանքը խիստ վիրավորեց նախագահին, և նա գրեթե 11 օր չհայտնվեց նախագահական պալատում և հետաձգեց պաշտոնական հանդիպումները: Ի պատասխան նախագահի դեմարշին՝ Մեջլիսում իրականացվեց ստորագրահավաք՝ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին պաշտոնանկ անելու համար. ակնհայտ էր, որ դա իրականացվում էր հոգևոր դասի հրահանգով:

Հակակամավով, որ իր գլխին կախվել է դամոկլյան սուրը՝ մայիսի 1-ին նախագահը հայտնվեց իր աշխատասենյակում և փորձեց

<sup>29</sup> Iran's 2009 Presidential Elections, Casey L. Addis, Congressional Research Service, July 6, 2009, p. 8.

<sup>30</sup> Killed and Detained Since, 12 June, <http://www.iranhumanrights.org/2009/06/list/>

<sup>31</sup> BBC, By James Reynolds, Analysis: Row between Iranian leaders comes to a head, 7 May, 2011, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-13312907>

<sup>32</sup> Նույն տեղում:

շտկել ստեղծված իրավիճակը: Նա անգամ հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ ոչ մի խնդիր չի կարող ստվերել իր և հոգևոր առաջնորդի միջև եղած սերտ կապը<sup>33</sup>:

Հատկանշական է, որ անգամ Մահմուդ Ահմադինեժադի հոգևոր ուսուցիչ Յազդին, ով այս տարիների ընթացքում միշտ նրա կողքին է եղել, ևս քննադատեց նախագահի գործելաճը և որակեց այն որպես անտրամաբանական: Նա հայտարարեց, որ նախագահը ընկած է Ռահիմ Մաշայիի ազդեցության տակ<sup>34</sup>, ում Ահմադինեժադը պատրաստում էր 2013 թ. նախագահական ընտրություններին: Դա պարզ դարձավ, քանի որ Ռահիմ Մաշային ամենուրեք ուղեկցում էր Ահմադինեժադին, իսկ նախագահն էլ ակտիվորեն իրականացնում էր նրա PR-ը: Պահպանողականները լուրջ կասկածներ ունեն, որ Մաշային փորձելու է փոխել երկրում գործող կառավարման համակարգը: Ըստ էության, Մաշային արժանացել է նման վերաբերմունքի իր տեսակետների հետ կապված. նա գտնում է, որ երկիրը պետք է կառավարվի ազգայնական մոտեցմամբ և դեմ է արտահայտվել հոգևորականության ղեկավարման ներկա մոդելին:

Արդյունքում հոգևոր առաջնորդի ճնշմանն ընկրկելով՝ նախագահն իր աշխատակազմի ղեկավարին՝ Ռահիմ Մաշային, ազատեց պաշտոնից:

Օրեր անց ուշագրավ տեղեկատվություն տարածեց «Առաջին լրատվական» գործակալությունը՝ հղում տալով իրանական *Mehr* գործակալությանը, ըստ որի՝ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը երկրի առաջնորդ այսպիսի համայնքի հատկացվող ֆինանսները կապված Ղոմ քաղաքի այցելությունների ու հատկացումների հետ, չի ներառել երկրի տարեկան բյուջեում<sup>35</sup>: Սա արդեն մարտահրավեր էր կղերականությանն ընդհանրապես:

Բնականաբար ո՛չ հոգևոր առաջնորդը, ո՛չ էլ ընդհանրապես հոգևոր դասը չեն պատրաստվում հանդուրժել ստեղծված իրավիճակը և զիջել իրենց դիրքերը:

Ուշագրավ մի դեպք ևս արձանագրվեց այդ օրերին. մայիսի

15-ին ԻԻՀ նախագահը պաշտոնից ազատեց նավթարդյունաբերության նախարար Սեյեդ Մասուդ Միր Քազեմիին, իսկ հաջորդ օրն ինքն իրեն նշանակեց նավթարդյունաբերության նախարարի ժամանակավոր պատասխանատու:

«Լոս Անջելես Թայմսը», հղում տալով «FARS news» գործակալությանը նշում է, որ Իրանի սահմանադրության Պահապան խորհուրդն անօրինական է համարել նախագահի վերոհիշյալ որոշումը և մերժել նրա հայցը<sup>36</sup>: Ի դեպ, այդ խորհուրդը բաղկացած է 12 անդամից, որոնցից 6-ը նշանակվում է հոգևոր առաջնորդի, իսկ մյուսները՝ խորհրդարանի կողմից:

Շուտով համաշխարհային ՀԱՄ-ներն արձանագրեցին, որ Իրանում հետապնդվել է ձերբակալվել են նախագահ Մահմուդ Ահմադինեժադի 25 կողմնակից՝ մեղադրվելով մոգության և ջին կանչելու մեջ<sup>37</sup>: Ի դեպ, Ղուրանում սավում է, որ մարդիկ պետք է խուսափեն ջիններից և չպետք է երկրպագեն նրանց: Ջիների հետ համագործակցելու կասկածի դեպքում անգամ ցանկացած իրանցի կհայտնվի բանտում:

Ըստ «MIGnews»-ի՝ հունիսի 3-ին Իրանի Իսլամական հեղափոխության Պահապան խորհրդի հրամանատար Մոհամմադ Ալի Ջաֆարին դիմել է հոգևոր առաջնորդին, որպեսզի վերջինս թույլ ևս ձերբակալել ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադին: Ինչպես հավաստիացնում է գործակալությունը, հրամանատարի հայցը եղել է ձերբակալել բոլոր նրանց, ովքեր մասնակից են եղել համենեթի տապալման փորձին: Հոգևոր առաջնորդը թույլ է տվել ձերբակալել բոլորին՝ բացի նախագահից<sup>38</sup>:

Հունիսի 7-ին, «Ֆրանս Պրես» գործակալության համաձայն, ձերբակալվեց Էսֆանդիար Ռահիմ Մաշային՝ մոգության մեջ ներքաշված լինելու մեղադրանքով: Իրանի հոգևոր դասն, այսպիսով, նախազգուշացրեց նախագահին, որ եթե նա չվերանայի իր որդեգրած քաղաքական կուրսը, նրանք կդիմեն առավել կոշտ միջոցների: Այս անգամ արդեն նախագահը ոչինչ չձեռնարկեց՝ օգնելու իր համախոհին:

<sup>33</sup> BBC, "Iran leader Ahmadinejad returns to work after 'boycott'", 1 May 2011, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-13254010>

<sup>34</sup> The Telegraph, By Richard Spencer, Mahmoud Ahmadinejad 'under a spell', Ayatollah Misbah Yazdi says , 15 May 2011, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/iran/8514929/Mahmoud-Ahmadinejad-under-a-spell-Ayatollah-Misbah-Yazdi-says.html>

<sup>35</sup> Ահմադինեժադը առաջնորդին հատկացվող ֆինանսները չի ներառել երկրի բյուջեում, «Առաջին լրատվական», 31. 05. 2011, [http://www.lin.am/arm/regional\\_iran\\_21455.html](http://www.lin.am/arm/regional_iran_21455.html)

<sup>36</sup> Los Angeles Times, IRAN: Constitutional watchdog rejects Ahmadinejad's bid as caretaker oil minister, May 20, 2011, <http://latimesblogs.latimes.com/babylonbeyond/2011/05/iran-constitutional-watchdog-rejects-ahmadinejads-bid-as-caretaker-oil-minister.html>, <http://www.farsnews.com/newstext.php?nn=9002300170>

<sup>37</sup> The Guardian, Ahmadinejad allies charged with sorcery, 5 May 2011, <http://www.guardian.co.uk/world/2011/may/05/ahmadinejad-allies-charged-with-sorcery>

<sup>38</sup> Ахмадинеджад может закончить карьеру на виселице, MIGnews, 03.06 [http://www.mignews.com/news/society/world/030611\\_32819\\_21470.html](http://www.mignews.com/news/society/world/030611_32819_21470.html)



ՀԼԱ-ների տեղեկացմամբ՝ դեռևս մայիսի սկզբներին ձերբակալվեցին նախագահի մի շարք կողմնակիցներ՝ այդպիսով լուրջ հարված հասցնելով նրա գործունեությանը: Հատկանշական է, որ նրանց գրեթե բոլորին ձերբակալեցին մոզոության և ջին կանչելու մեղադրանքով:

Հունիսին Իրանի Մեջլիսի 15 պատգամավոր մասնակցեցին ԻԻՀ արտգործնախարար Ալի Աբբաս Մալեհիին պաշտոնանկ անելու նպատակով կազմակերպված ստորագրահավաքին. ի դեպ, անգամ 10 ստորագրության դեպքում էլ նա պաշտոնանկ կարվեր: Պատճառը մեկն էր. նա արտաքին գործերի նախարարության ֆինանսական հարցերով փոխնախարար էր նշանակել Մոհամմադ Շարիֆ Մալեքզադեին, որին կասկածում են կոռուպցիայի և ԻԻՀ մի շարք օրենքների խախտման մեջ: Ծագած խնդիրը արագ լուծելու համար պաշտոնից հեռացվեց փոխարտգործնախարարը, իսկ հունիսի 23-ին «FARS news» գործակալությունը տեղեկություն տարածեց, ըստ որի՝ ձերբակալվել է փոխարտգործնախարար Մոհամմադ Շարիֆ Մալեքզադեն, ով ևս նախագահի մտերիմ կողմնակիցներից էր: Իսկ նախագահին պաշտոնանկ անելու հարցը կրկին դարձավ Մեջլիսում քննարկման առարկա:

Այս ամենով հանդերձ՝ Իրանի հոգևոր էլիտային այս պահին ձեռնտու է ստատուս քվոյի պահպանումը, քանզի չեն կարող վստահ լինել, որ փոփոխությունների դեպքում այն չի դառնա համակարգային կամ չի կրկնվի «արաբական գարնան» սցենարն Իրանում: Միևնույն ժամանակ Իրանում 2012 թ. նախատեսվում են խորհրդարանական, իսկ 2013 թ.՝ նախագահական ընտրություններ, և նրանք կարող են ծագած խնդիրները լուծել այլ հարթությունում:

Հունիսի 29-ին «Ֆրանս Պրես» գործակալությունը տեղեկատվություն տարածեց, ըստ որի՝ նախագահին, ի վերջո, անդրադարձավ իր կողմնակիցների ձերբակալությունների այլքին և հայտարարեց. «Այս գործընթացն ունի քաղաքական մոտիվացիա: Պարզ է, որ ցանկանում են կառավարության վրա ճնշում գործադրել: Նախարարների կարիները սահմանագիծն է, և եթե նրան ձեռք տան, իմ պարտքն է պաշտպանել նրանց,— հայտարարել է Ահմադինեժադը,— ...քայց եթե իմ գործընկերները մեղադրվում են, ապա ես օրինական իրավունք ունեմ նրանց կողքին կանգնելու և պաշտպանելու նրանց»<sup>39</sup>:

Անկախ վերոհիշյալ հայտարարությունից, որը ըստ իս «դեմք պահելու» քաղաքականություն է, Ահմադինեժադն այլևս չի կարող ունենալ այն ազատությունները, որ մինչ այդ ուներ և մինչև 2013 թ. մնալով նախագահի պաշտոնում՝ կհամագործակցի հոգևոր դասի հետ, այլապես կարժանանա Աբդոլիսաննի Բահադրի ճակատագրին, ում նախագահի պաշտոնից հեռացրին դեռևս 1981 թ.:

Այսօր արդեն ակտիվորեն տարածվում է մի տեղեկատվություն, ըստ որի՝ Իրանի հոգևոր առաջնորդը նախատեսում է երկրի կառավարության կառուցվածքային փոփոխություն իրականացնել, այն է՝ կրկին վերականգնել վարչապետի պաշտոնը երկրում և նվազեցնել, իսկ հետո էլ, հնարավոր է, ընդհանրապես հանել նախագահի ինստիտուտը:

### **Իրանի միջուկային ծրագիրը և Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի Ան-ի բանաձևերի ընդունումը**

Իրանի նկատմամբ միջազգային հանրության ճնշումները տարեցտարի ավելի սաստկանում են: ՄԱԿ անվտանգության խորհուրդը 2010 թ. ընդունեց ևս մեկ պատժամիջոց, որն ուղղված էր Իրանի միջուկային ոլորտում իրականացրած աշխատանքների դեմ:

Հատկանշական է, որ Իրանի միջուկային ծրագիրն սկսվել է դեռևս 1950-ական թվականներից: 1970-ականներին պաշտոնական Թեհրանը երկրի էներգետիկ կարողությունները բազմազանեցման մասին որոշում ընդունեց: Այդ գործում, որքան էլ տարօրինակ է, Իրանին օգնեցին հենց արևմտյան տերությունները: Հիշեցման կարգով նշենք, որ դրա հիմքը դրվել է դեռևս 1978 թ. օգոստոսին, երբ ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ ԱՄՆ-ն պարտավորվում էր կառուցել ատոմային էներգետիկ 8 կառույց:

Հայտնի է, որ 1978–79 թթ. Իսլամական հեղափոխությունից հետո Իսլամական Հանրապետության ղեկավարները հայտարարեցին, որ չեն ցանկանում որևէ կապ ունենալ Արևմուտքի հետ՝ խզելով վերջինիս հետ բոլոր տեսակի հարաբերությունները, այդ թվում՝ միջուկային ոլորտին առնչվող: Սակայն արդարության համար պետք է ասել, որ Իրանը մինչև հեղափոխությունն ընդգրկվել էր Միջուկային զենքի չտարածման պայմանագրի մեջ, որով նա հայտարարում էր և մինչ օրս էլ հայտարարում է, որ ինքը հավատարիմ է մնում Միջուկային զենքի չտարածման ծրագրին, և իր

<sup>39</sup> Ахмадинежад потребовал прекратить аресты своих соратников, 29. 06. 2011, <http://lenta.ru/news/2011/06/29/stoparrests/>

միջուկային ծրագիրն իրականացվում է միայն «Խաղաղ ատոմ» ծրագրի շրջանակներում: Այսինքն՝ Իրանն իրավունք ունի խաղաղ նպատակներով զարգացնելու իր միջուկային ծրագիրը և ուրանի հարստացումից կատանա էլեկտրակենտրոն կամ կոգ-տագործի բժշկության մեջ, որի իրավունքն ունեն ՄԱԿ-ի անդամ քոլոր երկրները:

Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ արևմտյան երկրները թերահավատությամբ են վերաբերվում Իրանի բարձրաստիճան պաշտոնյաների ելույթներին և նշում են, որ Իրանի միջուկային ծրագիրը միայն «Խաղաղ ատոմ» ծրագրի շրջանակներում չի իրականացվում:

Արդյունքում, 2006 թ. հուլիսի 31-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 5500-րդ նստաշրջանի ժամանակ ընդունվեց առաջին թիվ 1696 բանաձևն ընդդեմ Իրանի, որը շատ ավելի մեղմ էր, քան 2010 թվականին<sup>40</sup>:

Ան-ի Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ԱԵՄԳ-ն հայտարարեց. «Երեք տարվա աշխատանքներից հետո չենք կարող երաշխավորել, որ Իրանում չկան չհայտարարագրված միջուկային նյութեր, և որ Իրանը դադարեցրել է ուրանի հարստացման աշխատանքները»:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ բանաձևը բավական մեղմ էր շարադրված: Կոչ էր արվում Իրանին անհապաղ դադարեցնելու ուրանի հարստացման աշխատանքները, ամբողջական տեղեկատվություն տրամադրել ԱԵՄԳ-ի աշխատակիցներին, ինչը կնպաստեր Իրանի նկատմամբ վստահության բարձրացմանը<sup>41</sup>:

2006 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Ան-ում կրկին քննարկման դրվեց Իրանի միջուկային ծրագրի հարցը, որի ժամանակ ԱԵՄԳ-ի ներկայացուցիչը զեկուցեց, որ Իրանը չի իրականացրել թիվ 1696 բանաձևի պահանջները և, որ ամենակարևորն է, չի դադարեցրել ուրանի հարստացման աշխատանքները, ինչն, անշուշտ, կնպաստեր վստահության մակարդակի բարձրացմանը: Այդ զեկուցիչի և մի շարք այլ ուսումնասիրությունների ու քննար-

<sup>40</sup> United Nations, Security Council SC/8792, Security Council 5500th Meeting (AM), Security Council Demands Iran Suspend Uranium Enrichment by 31 August or face possible economic, diplomatic sanctions, 31 July 2006 <http://www.un.org/News/Press/docs/2006/sc8792.doc.htm>

<sup>41</sup> United Nations, Security Council SC/8792, Security Council 5500th Meeting (AM), Security Council Demands Iran Suspend Uranium Enrichment by 31 August or face possible economic, diplomatic sanctions, 31 July 2006 <http://www.un.org/News/Press/docs/2006/sc8792.doc.htm>

կումների արդյունքում դեկտեմբերի 23-ին ՄԱԿ-ի Ան-ն ընդունեց թիվ 1737 բանաձևը<sup>42</sup>:

Շուտով պարզ դարձավ, որ Իրանը չի իրականացնում բանաձևերը, որն էլ ավելի լարեց մթնոլորտը: 2007 թ. փետրվարի 23-ին ԱԵՄԳ-ի տնօրեն Մոհամմեդ էլ-Քարադեյը ՄԱԿ-ի Ան-ին զեկուցեց, որ Իրանը ոչ միայն չի դադարեցրել ուրանի հարստացման հետազոտական աշխատանքները, այլև փորձում է մեծացնել Նաթանզի ընդերկրյա համալիրի հզորությունը, որտեղ տեղակայված են ուրանի հարստացման համար նախատեսվող՝ գազի ցենտրիֆուգների կասկադներ: Միևնույն ժամանակ շարունակվում են Արաքում գտնվող ծանր ջրի ռեակտորի կառուցման շուրջ տարվող աշխատանքները:

Հաշվի առնելով ԱԵՄԳ-ի տնօրենի զեկուցյցը՝ 2007 թ. մարտի 24-ին՝ ՄԱԿ-ի Ան-ի 5647-րդ նիստի ժամանակ, կրկին օրակարգ մտավ Իրանի միջուկային ծրագրի հարցը: Ընդունվեց ևս մեկ՝ թիվ 1747 բանաձևը: Հարկ է նշել, որ այս բանաձևն էսպես տարբերվում էր մյուսներից, քանզի, մեր կարծիքով, այստեղ առավել սուր էին դրված հարցադրումները, միևնույն ժամանակ արդեն բացահայտորեն խոսվում էր Իրանի նկատմամբ պատժամիջոցների ավելացման մասին<sup>43</sup>:

Բանաձևն իրականացնելու դեպքում ապագայում խոստանում էին համազորակցել Իրանի հետ, օժանդակել թեթև ջրի նոր ռեակտորների կառուցման աշխատանքներին, ինչպես նաև կուներցիոն հիմքով և ԱԵՄԳ-ի վերահսկողության ներքո ստեղծել հինգ տարվա համար նախատեսված միջուկային վառելանյութի պահեստային պաշարներ: Բացի այդ՝ խոստանում էին նպաստել Իրանում ուղղակի ներդրումների մեծացմանը, նրա ինտեգրմանը միջազգային տնտեսական կառույցներին, շուկաներին, ինչպես նաև Համաշխարհային առևտրի կազմակերպությանը: Բանաձևի համար նախատեսված 90 օրվա ընթացքում Իրանը ոչ մի քայլ չկատարեց վերոհիշյալ բանաձևի կետերն իրականացնելու ուղղությամբ:

2008 թ. Իրանի նկատմամբ ընդունվեց հերթական՝ 1803-րդ

<sup>42</sup> United Nations, SC/8928, Security Council 5612th Meeting (AM), Security Council Imposes Sanctions on Iran for Failure to Halt Uranium Enrichment, Unanimously Adopting Resolution 1737 (2006) <http://www.un.org/News/Press/docs/2006/sc8928.doc.htm>

<sup>43</sup> United Nations, SC/8980, Security Council 5647th, Security Council Toughens Sanctions against Iran, Adds Arms Embargo, with unanimous adoption of resolution 1747 (2007), 24 March 2007 <http://www.un.org/News/Press/docs/2007/sc8980.doc.htm>



բանաձևը, որտեղ ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներին կոչ էր արվում հետևելու ՄԱԿ-ի բանաձևերի իրականացմանը և Իրանի հետ համագործակցության ժամանակ պահպանելու դրանք:

Բանաձևում նշված էր, որ Իրանը պարտավոր է իրականացնել նաև նախորդ բանաձևերը, և ՄԱԿ-ին անդամակից երկրները ևս, համաձայն նախորդ բանաձևերի, չպետք է իրենց տարածքը տրամադրեն այն ֆիզիկական անձանց, որոնց անունները գրված են եղել նախորդ բանաձևերում, ովքեր, ըստ ԱԷՄԳ-ի, անմիջական կապ ունեն Իրանի միջուկային ծրագրերին: 1803-րդ բանաձևում Իրանական Մեյլի և Սադեզաթ բանկերի և արտասահմանում գտնվող նրանց մասնաճյուղերի հետ չհամագործակցելու կոչ էր արվում, որպեսզի խուսափեն միջուկային գործունեության տարածմանը կամ միջուկային զենքի փոխադրման սարքերի մշակմանը նպաստելուց, ինչպես և նշվում է 1737 բանաձևում (2006)<sup>44</sup>:

2008 թ. մայիսի 5-ին Ռուսաստանի նախագահի կողմից ստորագրվեց հրաման «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2008 թ. մարտի 3-ի 1803 բանաձևի իրականացման մասին», որտեղ գետնեղվել էին ֆիզիկական անձանց անուններ, որոնց մոտքը Ռուսաստանի Դաշնություն արգելվում էր, նույնիսկ եթե Ռուսաստանը լինելու էր տարանցիկ երկիր<sup>45</sup>:

Սակայն 2008 թ. ընդունված բանաձևը ևս նպատակին չճանայե՞ց՝ կրկնելով նախորդ բանաձևերի ճակատագիրը: ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Անգլիան գտնում էին, որ պետք է ավելի կոշտ վերաբերմունք ցույց տալ Իրանի որդեգրած քաղաքականությանը, սակայն դրան դեմ էին հանդես գալիս Ռուսաստանը և Չինաստանը:

2010 թ. մայիսի 17-ին Իրանը կարծես թե ընդառաջ գնաց ԱԷՄԳ-ին և պայմանագիր ստորագրեց Թուրքիայի և Բրազիլիայի հետ, որի համաձայն՝ կարծես թե թափանցիկ էր դառնում Իրանի միջուկային ծրագիրը: Ըստ պայմանագրի՝ Իրանը պետք է 3,5% հարստացված ուրանը տրամադրեր Թուրքիային և Բրազիլիային, որոնց միջոցով այն կվերահարստացվի և 20% հարստացված վիճակում կվերադարձվի Իրանին (նախնական տարբերակով Իրանը պետք է ուրանը տրամադրեր Ռուսաստանին և Ֆրանսիային, սակայն հետագայում այդ միջնորդությունից հրա-

ժարվեց): Այդ պայմանագրի համաձայն՝ Իրանը Թուրքիային տալու էր 1200 կգ ցածր հարստացված ուրան, ստանալու էր 120 կգ բարձր հարստացված ուրան: Կարծես թե Իրանը կատարում էր ԱԷՄԳ-ի պահանջները: Սակայն այդ համաձայնագիրը չգիտացրեց ի՞նչ եվրոպական երկրներին, ո՞ր էլ Միացյալ Նահանգներին:

Հարկ է նշել, որ Իրանը, Թուրքիան և Բրազիլիան իսկապես բավական ակտիվ աշխատանքներ էին տարել, որի արդյունքում կնքվել էր վերոհիշյալ պայմանագիրը: Այս պայմանագրի գործունեությունը ձեռնտու էր բոլոր երկրներին: Դրանով Թուրքիան ձգտում էր տարածաշրջանում առաջնորդի դեր ստանձնելու, Բրազիլիան՝ մասնակցելու Մերձավոր և Միջին Արևելքի գործընթացներին: Թուրքիան և Բրազիլիան ցանկանում էին իրենց վրա վերցնել մի լիազորություն, որ իրենք կարող են լուծել այնպիսի խնդիր, որը երկար տարիներ չեն կարողացել լուծել եվրոպական երկրներն ու Միացյալ Նահանգները:

Ի դեպ, պետք է նշել, որ այդ պահին թե Թուրքիան, թե Բրազիլիան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ներկայացուցիչներ էին: Կարծում ենք, որ երկրների ընտրությունը մեծապես կապված էր հենց դրա հետ: Իրանն ակնկալում էր, որ երկու երկրները կարող էին անվտանգության խորհրդում Իրանի դեմ նոր բանաձևի ընդունման ժամանակ փաստել, որ իրենք գործընթացի մեջ են: Ասել է թե՛ բանաձևի կիրառումը կօժտարացներ Թուրքիայի և Բրազիլիայի աշխատանքը: Սակայն Իրանի հաշվարկները չիրականացան. պատճառն այն էր, որ ի՞նչ Միացյալ Նահանգները, ո՞ր էլ եվրոպական երկրները չվստահեցին այդ պայմանագրին:

Արևմուտքի համար վերոհիշյալ համաձայնագիրը նաև թափանցիկ չէր: Պարզ չէր՝ այս համաձայնագիրը շարունակական է լինելու, թե միանգամայն խնդիր է լուծելու: Ո՛չ Թուրքիան, ո՞չ Բրազիլիան չէին երաշխավորում, որ 20% հարստացված ուրանը Իրանն օգտագործելու է միայն խաղաղ նպատակներով: Այստեղ տեղին է հիշել ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի խոսքերը, երբ նա ասում էր, որ Իրանը փորձում է «իրենց քթից բռնած մաս տալ» և ժամանակ շահել նման գործընթացներով, ինչն անհանդուրժելի է:

Դեռևս 2009 թ. Իրանը բանակցություններ էր վարում Ռուսաստանի հետ. Իրանը 1200 կգ ցածր հարստացված ուրանը պիտի տրամադրեր Ռուսաստանին, որից հետո՝ Ֆրանսիային, այնուհետև վերահարստացված վիճակում այն պետք է վերադառնար Իրան, ինչը կազմում էր այն ժամանակվա Իրանի միջուկային

<sup>44</sup> Организация Объединенных Наций , S/RES/1803 (2008), Совет Безопасности, Distr.: General 3 March 2008 , Резолюция 1803 (2008), принята Советом Безопасности на его 5848-м заседании 3 марта 2008 года <http://www.un.org/russian/document/scresol/res2008/res1803.htm>

<sup>45</sup> В. Сажин, Санкции в отношении Исламской Республики Иран, Институт Ближнего Востока <http://www.iimes.ru/rus/stat/2010/04-03-10b.htm>

հունիսի 2/3-ը: Այսօր դա կազմում է Իրանի ուրանի ուղիղ կեսը: Փաստորեն, Իրանն իր ուրանի կեսը տալու էր Թուրքիային, իսկ կեսը պահելու էր: Ուստի ԱԷՄԳ-ի ներկայացուցիչները խիստ կասկածում էին՝ արդյո՞ք Իրանը իր տարածքում պահվող ուրանը չէր փորձելու ինքնուրույն հարստացնել, իսկ Թուրքիային տված ուրանը ժամանակ չափելու համար չէր լինելու:

Չարձանագրելով տեղաշարժ նախորդ բանաձևերի ընդունման համատեքստում՝ 2010 թ. Իրանի հարցը կրկին դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի օրակարգային կետ: Հունիսի 9-ին ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց բանաձև, որի մեջ առավել կոշտություն նկատվեց. Իրանի տարածք մտնող յուրաքանչյուր նավ, ինքնաթիռ կամ որևէ այլ փոխադրամիջոց կասկածի դեպքում կարող է ստուգվել: Բացի այդ, այս բանաձևի 29-րդ կետի համաձայն, ստեղծվելու է ութ հոգուց բաղկացած մասնագետների խումբ, որը պիտի հետազոտի այս ամենը և զեկույց ներկայացնի ԱԷՄԳ-ին: Այս բանաձևի մեջ են ընդգրկվում բոլոր այն բանաձևերի դրույթները (2006 թ. N 1696, N 1737, 2007 N 1747, 2008 N 1803), որոնք ժամանակին Իրանը չի իրականացրել<sup>46</sup>:

Հարկ է նշել, որ բանաձևի ընդունման հարցի շուրջ բավական բուռն բանավեճեր ծավալվեցին: Իրանի համար այս անգամ ևս անգնահատելի էր Ռուսաստանի և Չինաստանի դերը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում: ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ցանկանում էր այս բանաձևի մեջ մի կետ մտցնել, որի համաձայն՝ Իրանի նկատմամբ պատժամիջոցներ կկիրառվեին նաև նավթարդյունաբերության ոլորտում: Այսինքն՝ պետք է սահմանափակելին Իրանից նավթ և գազ գնելը, իսկ Իրանի քյուջեն մեծապես գոյանում է հենց նավթից և գազից: Այս դեպքում շատ մեծ հարված կլիներ Իրանի տնտեսությանը: Բայց դա արգելեց հենց Չինաստանը այն պարզ պատճառով, որ Չինաստանն Իրանի հետ ունի նավթի ու գազի պայմանագրեր: Եթե այդ կետը մտցվեր բանաձևի մեջ, ապա դա հարվածելու էր նաև Չինաստանի տնտեսությանը:

Բանաձևի մյուս կետերի համաձայն՝ աշխարհի ոչ մի երկիր իրավունք չունի Իրանին վաճառելու հարձակողական տիպի զենք (տանկ, հրթիռ, ռազմական ուղղաթիռ, ինքնաթիռ և այլն): Բայց այստեղ կա մի կետ, որի համաձայն՝ Ռուսաստանն իրա-

վունք ունի Իրանին վաճառելու C-300 հրթիռներ, որոնք, ինչպես հայտարարվում են, պաշտպանողական հրթիռներ են: Այսինքն՝ այստեղ էլ Ռուսաստանի շահը պահպանվեց, թեև Ռուսաստանը դեռ հապաղում է իրականացնել այդ ծրագիրը: Բացի այդ՝ կետ մտցվեց, ըստ որի՝ Ռուսաստանն ազատ է իրականացնելու Բուշեհրի ատոմակայանի ամբողջական կառուցումը, որի համար անհրաժեշտ տեխնիկան Ռուսաստանը կարող է անխափան ներմուծել Իրան: Այստեղ ևս Ռուսաստանի շահը չտուճահարվեց:

Համաձայնությունների արդյունքում ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց մի բանաձև, որն ամեն դեպքում, նախորդ բանաձևերի համեմատությամբ, շատ ավելի կոշտ էր:

Հատկանշական է, որ իրանական հասարակության շրջանում կա այն կարծիքը, որ իրենք երկար տարիներ ապրել են բանաձևերի տակ, և իրենց չեն վախեցնում նման բանաձևերը: Թեև առավել կրթված և լայնախոհ գանգվածը գիտակցում է, որ նման բանաձևերը տանելու են տնտեսական ճգնաժամի էլ ավելի խորացման, տեղի է ունենալու գնաճ, կյանքը Իրանում ավելի է թանկանալու:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 2010 թ. բանաձևի վերաբերյալ շատ կոշտ արտահայտվեց ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը. «Դա նման է մի անձեռոցիկի, որը օգտագործում են ու դեն շարտում»<sup>47</sup>: Նրա խոսքից կարելի էր հասկանալ, որ մոտակա 90 օրվա ընթացքում բանաձևի շուրջ Իրանն աշխատանքներ չի տանելու:

Սա լցրեց ԱՄՆ-ի համբերության բաժակը, որն էլ որոշեց առանց ՄԱԿ-ի միջնորդության աշխատանքներ տանել, որպեսզի Իրանից նավթ գնող երկրներին հորդորի դադարեցնել այն, և փորձեն գտնել էներգակիրների նոր աղբյուրներ:

Եվ շուտով գրանցվեց առաջին հաջողությունը: Եվրամիությունը 2012 թ. հունվարի 23-ին վերջնականապես որոշում կայացրեց, որով դադարեցնում է Իրանից նավթ գնելը: Սակայն այն պետք է արվի աստիճանաբար, և վերջնաժամկետը նշանակվեց հունիսի 1-ը: Դրա պատճառն այն է, որ Հունաստանը, Իսպանիան և Իտալիան բավական շատ նավթ են գնում Իրանից և ունեն որոշակի կախվածություն: Եվ նրանք պետք է գտնեն նոր շուկաներ, որպեսզի դադարեցնեն Իրանից նավթի գնումը:

Եվրամիության՝ Իրանից ստացվող նավթի 35 %-ը գնում է Հունաստանը, և միանգամից հրաժարվել դրանից նրա համար բա-

<sup>46</sup> UN, Security Council SC/9948, Security Council 6335th Meeting\* (AM), 9 June 2010, Security Council Imposes Additional Sanctions on Iran, Voting 12 in Favour to 2 Against, with 1 Abstention <http://www.un.org/News/Press/docs/2010/sc9948.doc.htm>

<sup>47</sup> The Telegraph, Iran dismisses new UN sanctions as 'a used hanky', 10 Jun 2010 <http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/iran/7816395/iran-dismisses-new-UN-sanctions-as-a-used-hanky.html>



վական դժվար է: Հնդկաստանը, Չինաստանը հայտարարեցին, որ շարունակելու են զենե իրանական նավթ, ինչքան էլ ԱՄՆ-ն պատժամիջոցներ փորձի կիրառել<sup>46</sup>: Չինաստանից հետո Իրանից ամենից շատ նավթը գնում է Ճապոնիան, որը հայտարարել է, որ քանի որ իր համար էլ սա բավական արժեքավոր էներգակիր է, ինքը միանգամից չի կարող հրաժարվել, և բանակցությունների արդյունքում կորոշի՝ ինչքան նվազեցնել զնվող նավթի ծավալը<sup>49</sup>:

Ինչ կարող ենք եզրակացնել այս համատեքստում.

1. Այն, ինչին Իրանն այդ աստիճան ձգտում է հասնելու միջուկային ոլորտում, վաղ թե ուշ կհասնի:
2. Մինչ այս եղած պատժամիջոցները Իրանի համար անարդյունավետ էին: Երկիրը 30 տարի ապրել է փակված և այդ տարիներին ծնված սերունդի զգալի մասը այլ կերպ չի էլ պատկերացնում իր կյանքը: Սակայն, Իրանի նկատմամբ նավթի նկատմամբ պատժամիջոցները առավել ծանր հարվածի տակ կղնեն երկրի տնտեսությունը:
3. Այն, ինչ բռնությամբ է պահպանվում, վաղ թե ուշ տապալվում է. դրա հարյուրավոր օրինակներ կան պատմության մեջ:
4. Ինչքան էլ որ պարադոքս է, պետք է խոստովանենք, որ Իրանն այսօր գործում է Միջուկային զենքի չտարածման պայմանագրի շրջանակներում, բայց Արևմուտքի կասկածները դրանից չեն մեղմանում: Կարծում եմ, որ պետք է վերանայվեն թե՛ ԱԷՄԳ-ի արժեհամակարգը, թե՛ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի դրույթները: Խնդիրն այն է, որ որևէ կերպ չեն պահարակվում ԱՄՆ-ի երկու դաշնակիցներ Իսրայելը և Պակիստանը միջուկային զենք ունենալու համար, իսկ Իրանը պատժվում է ընդամենը օրենքի շրջանակներում ուրան հարստացնելու համար:
5. Եթե պատժամիջոցները չեն աշխատում, միգուցե ժամանակն է փորձել Իրանի վրա այլ կերպ ազդել, օրինակ՝ Իրանին ներքաշել տարածաշրջանային տարատեսակ քաղաքական, տնտեսական կարևոր ծրագրերի մեջ, և դրանք կորցնելու վտանգի միջոցով ազդել նրա վրա:

6. Փորձել կարգավորել Իրանի հետ հարաբերությունները՝ չձգտելով պարտադրաբար ներդնել արևմտյան դեմոկրատիայի արժեհամակարգն Իրանում: Այն կատարելուց առաջ պետք է պատրաստել հասարակությանը և դրանից հետո միայն արևմտյան դեմոկրատիան հարմարեցնելով իրանական սովորույթներին և ապրելակերպին՝ հնարավոր կլինի կանքի կոչել այդ գաղափարը, և Իրանը կլինի առավել վերահսկելի ու ընկալելի թե՛ հարևան պետությունների և թե՛ Արևմուտքի համար:
7. Ուսումնասիրելով Իրանի պատմությունը, ժողովրդի հոգեկերտվածքը՝ հանգում ենք այն եզրակացության, որ իրանցիների մոտ շատ խոր արմատներ ունի ազգային ինքնությունը և կապվածությունը սեփական երկրին: Կարծում ենք, որ այդ զգացումները ավելի ուժեղ են, քան էթնիկական կամ կրոնական տարբերությունները: Իրանի ժողովուրդը ձգտում է պահելու երկու գլխավոր թեզ՝ պահպանել պետականությունը և տարածաշրջանում ունենալ ազդեցիկ կշիռ՝ կլինի Պարսկաստանի, շահական Իրանի, Իսլամական Իրանի, թե մեկ այլ տիպի Իրանի միջոցով, դա արդեն կարևոր չէ...

<sup>46</sup> Reuters, *Thu 12 Jan, 2012, By Abhijit Neogy and Nidhi Verma, India to buy Iran oil despite U.S. sanctions – minister*, <http://www.reuters.com/article/2012/01/12/india-iran-imports-idUSL3E8CC3ZM20120112>

<sup>49</sup> Взгляд, Деловая газета, Намек на свержение, <http://vz.ru/politics/2012/1/13/553125.html>

## ԻԻՀ-Ն 2008-2010 ԹԹ.: ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՈՒՆՎԱՐ

11. 01. 2008 — ԱԷՄԳ-ի քարտուղար Մոհամմեդ էլ-Բարադեյն այցելել է Իրան:
17. 01. 2008 — Իրանն ու Սիրիան ստորագրել են առևտրատնտեսական համագործակցության մասին հուշագիր:
21. 01. 2008 — 11 մլոդ դուլարի ներդրում է կատարվել Իրանի տնտեսության մեջ (հատկացրել են Թուրքիան, Հնդկաստանը, ՄԱԷ-ն, Չինաստանը, Գերմանիան, Իտալիան): Գումարը տրամադրվել է հիմնականում գյուղատնտեսական, նավթային քիմիայի, կապի, մետաղաձուլական ճյուղերի, փոքր և միջին ձեռնարկությունների գաղափարները շուրջ 70 ծրագրերի իրականացմանը:
23. 01. 2008 — Բեռլինում տեղի է ունեցել վեցնյայկի հանդիպումը. օրակարգում Իրանի միջուկային ծրագիրն էր:
31. 01. 2008 — ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Սեյիդ Ալի Սադայանը ՀՀ նախագահին է հանձնել հավատարմագրերը:

### ՓԵՏՐՎԱՐ

04. 02. 2008 — Իրանը բաց է թողել «Քյալշեգյար-1» (հետազոտող) հրթիռը, որը հասել է երկրամերձ ուղեծրին և տվյալներ փոխանցել:
09. 02. 2008 — Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովը մեկօրյա պաշտոնական այց է կատարել ԻԻՀ: Այցի շրջանակներում Մահմուդ Ահմադինեժադի հետ քննարկել են առևտրատնտեսական, ռազմատեխնիկական շրջանակներում համագործակցելու հարցեր: Օրակարգում էր նաև Տաջիկստանի հարավում Իրանի կողմից կառուցվող «Սանգրուդա» հէկ-ի կառուցման հարցերը:
23. 02. 2008 — Իրանի «Ռազի» նավթաքիմիական ընկերության բաժնեթղթերի 100%-ը ձեռք են բերել թուրք ներդրողները:
27. 02. 2008 — ԻԻՀ է ժամանել Սենեգալի նախագահ Աբդուլա Վադը, այցի ընթացքում նախագահները քննարկել են ԻԿԿ գործունեությունը և ցանկություն հայտնել էլ ավելի ակտիվացնելու Իրանի դերակատարությունն այդ կազմակերպությունում:

### ՄԱՐՏ

02. 03. 2008 — Մահմուդ Ահմադինեժադն այցելել է Իրաք: Նա Իսլամական հանրապետության առաջին նախագահն էր, որ այցելել է Իրաք:
03. 03. 2008 — ՄԱԿ-ի ԱԽ-ն Իրանի նկատմամբ ընդունել է թիվ 1803 բանաձևը:
06. 03. 2008 — Մահմուդ Ահմադինեժադի ներկայությամբ Խուզիսթան նահանգում շահագործման են հանձնվել նավթաքիմիական կոմբինատի նոր օբյեկտներ:
11. 03. 2008 — Իրան է ժամանել Ինդոնեզիայի նախագահ Սուսիլո Բամբանգ Յուդիոյոնոն, այցի ընթացքում ստորագրվել է համագործակցության հինգ համաձայնագիր:
11. 03. 2008 — ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշը Իրանն է ստորագրել, որով 1995 թվականից իրականացվող Իրանի նկատմամբ պատժամիջոցները երկարաձգվեցին ևս մեկ տարով:
12. 03. 2008 — Սենեգալի մայրաքաղաք Դաքարում տեղի է ունեցել ԻԿԿ 11-րդ գագաթնաժողովը՝ «Իսլամը 21-րդ դարում» խորագրով: Դաքար էր մեկնել նաև ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը:
14. 03. 2008 — Իրանում տեղի է ունեցել թվով 8-րդ խորհրդարանական ընտրությունները: Ընտրելու իրավունք ունեն 43,8 մլն մարդ: Բացվել էր 45 հազար ընտրական տեղամաս: 4,500 թեկնածու պայքարում էր օրենսդիր մարմնի 290 տեղի համար (դիմել էր 7,6 հազ. թեկնածու): Պայքարում էին պահպանողականները, քարեփոխիչները և անկախ թեկնածուները: Պահպանողականները ձեռք բերեցին մանդատների գրեթե 70%-ը: Պաշտոնական տվյալներով՝ ընտրությունների մասնակցել է ընտրազանգվածի 60-65%-ը: Ընտրվել է 2 հայ պատգամավոր, որոնցից Գևորգ Վարդանը ներկայացնելու էր Թեհրանի և Կյուսիսային, իսկ Ռոբերտ Բեգլարյանը՝ հարավային իրանահայության շահերը:
24. 03. 2008 — ԻԻՀ արտգործնախարար Մ. Մոթաքին հայտարարել է, որ դիմել են ՇՕՍ-ին մշտական անդամակցության համար:
24. 03. 2008 — Դուշանբեում հանդիպել են Տաջիկստանի, ԻԻՀ-ի և Աֆղանստանի արտաքին գործերի նախարարները: Քննարկել են քաղաքական, տնտեսական և մշակութային եռակողմ կապերի խորացման հարցերը: Ֆարսի



լեզվալսմբին պատկանող երեք պետությունները որոշել են բացել միասնական հեռուստատեսային ալիք:

#### ԱՊՐԻՆ

10. 04. 2008 — Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնանկ է արել էկոնոմիկայի նախարար Դավուդ Դանեշջաֆարիին և ներքին գործերի նախարար Մուստաֆա Փուր Մուհամմեդին:
11. 04. 2008 — Իրանն ու Հնդկաստանը կնքել են նավթի արդյունահանման և վերամշակման պայմանագիր՝ չնայած ԱՄՆ-ի արգելակող «հորդորներին»:
14. 04. 2008 — Իրանն ու Հնդկաստանը ստորագրել են երկաթուղային տրանսպորտի ոլորտում համագործակցության համաձայնագիր:
30. 04. 2008 — Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնական այց է կատարել Հնդկաստան: Այցի ընթացքում նա հանդիպել է Հնդկաստանի նախագահ Պրաթիբհա Պատիլի հետ:

#### ՄԱՅԻՍ

13. 05. 2008 — Իրանը և Ադրբեջանը ստորագրել են արձանագրություն՝ նավագնացության և ծովային բեռնափոխադրումների համագործակցության վերաբերյալ:
26. 05. 2008 — Իրանում բացվել է իրանա-վենեսուելական համատեղ պետական բանկը:
28. 05. 2008 — Իրանն ու Սիրիան ստորագրել են ռազմական համագործակցության հուշագիր:
28. 05. 2008 — Ալի Լարիջանին ընտրվել է Իրանի Մեջլիսի նախագահ:

#### ՀՈՒՆԻՍ

09. 06. 2008 — Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալեքին երկրորդ անգամ այցելել է Իրան: Այցի շրջանակներում ստորագրվել է հուշագիր համատեղ պաշտպանության ոլորտում:
13. 06. 2008 — Եվրամիության արտաքին քաղաքականության և անվտանգության գերագույն ներկայացուցիչ Խավիեր Սոլանան երկօրյա այցով ժամանել է Թեհրան, Իրանի ղեկավարության հետ միջուկային ծրագրի շուրջ քննարկումներ իրականացնելու, ինչպես նաև վեցնյակի նորացված առաջարկների փայտեթղ ներկայացնելու համար:

21. 06. 2008 — Միջուկային էներգիայի միջազգային գործակալության ղեկավար Մոհամմեդ էլ-Բարադեյը հայտարարել է, որ Իրանի նկատմամբ ուժ կիրառելու դեպքում ինքը կթողնի իր պաշտոնը:
23. 06. 2008 — ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը ԻԻՀ էներգետիկայի նախարարի տեղակալ Ռասուլ Ջարգյարի հետ ստորագրել է երկու հուշագիր՝ Արաքս գետի վրա հիդրոէլեկտրոկայան կառուցելու համար:

#### ՀՈՒՆԻՍ

02. 07. 2008 — Համաձայն Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ցամաքային հրամանատար Նասեր Արաբ-Բեխթիի՝ Իրանը սկսել է «Tosan» տիպի թեթև տանկերի արտադրության շարք՝ արագ արձագանքման ստորաբաժանումների համար:
09. 07. 2008 — Իրանի ռազմական ուժերը զինավարժության շրջանակներում, հաջողությամբ փորձարկել են «Շահաբ 3» տիպի հրթիռը:
08. 07. 2008 — Իրանի կառավարության ջանքերով հայկական Սուրբ Թադեի եկեղեցին ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակներում՝ որպես համամարդկային արժեք:

#### ՕԳՈՍՏՈՍ

02. 08. 2008 — ԻԻՀ է ժամանել Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը: Ի թիվս տարածաշրջանային հարցերի շուրջ քննարկումների, Ասադը ժամանել էր նաև որպես միջնորդ: Նա ներկայացնում էր Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզիի ուղերձը Իրանի ղեկավարությանը միջուկային ծրագրի շուրջ առաջացած ճգնաժամի վերաբերյալ:
14. 08. 2008 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնական այցով մեկնել է Թուրքիա, այցի ընթացքում քննարկվել են Իրանի միջուկային ծրագրին վերաբերող հարցեր, ինչպես նաև երկկողմանի հարաբերություններ: ԻԻՀ նախագահը հանդիպել է Աբդուլլահ Գյուլի և Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:
28. 08. 2008 — Դուշանբեում տեղի է ունեցել Իրանի և Ռուսաստանի նախագահների հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են երկկողմանի հարաբերությունների տարաբնույթ հարցեր, տարածաշրջանի անվտանգության խնդիրներ:

**ՍԵՊՏԵՄԲԵՐ**

02. 09. 2008 — Երկօրյա այցով Իրան է ժամանել Բոլիվիայի նախագահ Էլո Մորալեսը, որի ընթացքում կողմերը ստորագրել են էներգետիկ ոլորտում համագործակցության համաձայնագիր:
13. 09. 2008 — Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթթաբին մեկօրյա այցով ժամանել է Ադրբեյջան: Քննարկման գլխավոր թեման էր Թուրքիայի կողմից առաջ քաշված «Կովկասի անվտանգության և կայունության պլատֆորմի» ստեղծման հարցը, որից դուրս էր մնում Իրանը:
15. 09. 2008 — ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանը երկօրյա պաշտոնական այցով մեկնել է Իրան:
27. 09. 2008 — ՄԱԿ-ի ԱԽ-ն Իրանի միջուկային ծրագրի նկատմամբ միաձայն ընդունել է բանաձև, որով Թեհրանից պահանջվեց անհապաղ իրականացնել ԱԽ-ի նախորդ բանաձևերը:

**ՇՈՎՏԵՄԲԵՐ**

09. 10. 2008 — Բաքվում ստորագրվել է «Հյուսիս-հարավ» երկաթգծի ծրագիրը, որն անցնելու էր Ղազվին-Ռեշթ-Ասթարա գծով:
21. 10. 2008 — Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման համար Ասիական զարգացման բանկը տրամադրել է 1,5 մլն դոլար: Երկաթգծի կառուցման համար անհրաժեշտ է 1,5-2 մլրդ դոլար և 5 տարի ժամանակ:

**ՆՈՅԵՄԲԵՐ**

05. 11. 2008 — ԻԻՀ նախագահն ընդունել է Կիլիկիայի կաթողիկոս Արամ Առաջինին:
06. 11. 2008 — ԻԻՀ նախագահը շնորհավորական ուղերձ է հղել ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբամային:
23. 11. 2008 — ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի ղեկավար Ա. Բաղդասարյանը երկօրյա պաշտոնական այցով մեկնել է ԻԻՀ:
24. 11. 2008 — Երկար տարիների ընդմիջումից հետո Թեհրան է ժամանել Լիբանանի նախագահը: Միշել Սուլեյմանը ժամանել է Թեհրան Մահմուդ Ահմադինեժադի անձնական հրավերով և երկրում մնացել երկու օր: Հանդիպման ժամանակ կողմերը քննարկել են մերձավորարևելյան խնդիրներ,

ուշադրության արժանացրել երկկողմ հարաբերություններին: Բանակցությունների արդյունքում ստորագրվել է հեզամյա ռազմական համագործակցության պայմանագիր:

**ԴԵԿՏԵՄԲԵՐ**

02. 12. 2008 — Շանհայի համագործակցության կազմակերպության ղեկավար Բոլաթ Նուրգալինը աշխատանքային այցով ժամանել է Թեհրան: Այցի ընթացքում քննարկվել են Իրանի առավել ակտիվ ներգրավվածության մասին, հատկապես հակահարեկչական ու թմրանյութերի դեմ պայքարի ոլորտներում:
03. 12. 2008 — Դոհայում տեղի է ունեցել Պարսից ծոցի Արաբական երկրների համագործակցության խորհրդի գագաթնաժողովը, որին առաջին անգամ մասնակցեց նաև ԻԻՀ-ն՝ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի գլխավորությամբ:
07. 12. 2008 — Էկվադորի նախագահ Ռաֆայել Կորրեան պաշտոնական այցով գտնվում էր ԻԻՀ-ում, որի ընթացքում ստորագրվել են փոխհամաձայնության 12 հուշագիր՝ արդյունաբերության, էներգետիկայի, նավթարդյունաբերության, բանկային գործի, առողջապահության և առևտրի ոլորտների վերաբերյալ:
15. 12. 2008 — Թեհրանում տեղի է ունեցել ԻԻՀ և ՀՀ միջկառավարական հանձնաժողովի նստաշրջան:
23. 12. 2008 — Թեհրանում տեղի են ունեցել Տնտեսական համագործակցության կազմակերպության աշխատանքները:

**2009****ՀՈՒՆՎԱՐ**

14. 01. 2009 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ստորագրել է կառավարության կողմից հաստատված օրինագիծը՝ 15 նոր հատուկ տնտեսական գոտիներ ստեղծելու վերաբերյալ: Դրանք են Սիսթանը և Բելուջիսթանը, Քուրդիսթանը, Հարավային Խորասանը, Ֆարսը, Խորասան-Ռազավին, Արևմտյան Ատրպատականը, Սպահանը, Չհարմահալը և Բախթյարիան, Թեհրանը, Համադանը, Գոլեսթանը և Բուշեհրը:
29. 01. 2009 — ԱՄՆ-ի նոր վարչակազմը Բարաք Օբամայի



անունից Իրանի ժողովրդին ուղղված ուղերձ է պատրաստել: Վերոհիշյալ ուղերձը միտված է բարելավելու իրանամերիկյան հարաբերությունները և հող նախապատրաստել երկու կողմերի ղեկավարների բանակցությունների համար:

### ՓԵՏՐՎԱՐ

01. 02. 2009 — ՀԱՄԱՍ-ի քաղխորհուրդը՝ խալեդ Մաշաայի գլխավորությամբ, ժամանել է ԻԻՀ: Մաշաայը երախտագիտություն է հայտնել ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի խամենեինի՝ Գազայի ժողովրդին և ՀԱՄԱՍ շարժմանը ցուցաբերած քաղաքական և հոգևոր աջակցության համար:
03. 02. 2009 — Իրանն առաջին անգամ երկրամերձ ուղեծիր է հասցրել ազգային «Օմիդ» (Հույս) արբանյակը:
25. 02. 2009 — Զիբուդիի Հանրապետություն ժամանած ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ստորագրել է համագործակցության պայմանագիր, ըստ որի՝ երկու երկրները հանել են վիզային ռեժիմը, ԻԻՀ-ի աջակցությամբ Զիբուտիում պետք է կառուցվի գիտատեխնիկական կենտրոն:
27. 02. 2009 — ԻԻՀ է ժամանել Իրաքի նախագահ Ջալալ Թալբանին: Իրաքի նախագահին ուղեկցում էին էներգետիկայի, ֆինանսների և կառուցապատման նախարարները:

### ՄԱՐՏ

10. 03. 2009 — Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ի. Ալիևը պաշտոնական այց է կատարել ԻԻՀ: Հանդիպման ընթացքում երկու նախագահները ստորագրել են տնտեսության, հարկերի թեթևացման, զբոսաշրջության, կապի, վիճակագրության և հումանիտար ոլորտներին վերաբերող 7 փաստաթուղթ: Ի. Ալիևը մեկնել է ԻԻՀ, որպեսզի մասնակցի մարտի 11-ին Թեհրանում տեղի ունենալիք Տնտեսական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովին:
13. 03. 2009 — ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին պաշտոնական այցով ժամանել է Հայաստան:
20. 03. 2009 — ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, շնորհավորելով ԻԻՀ ժողովրդին Նոբուրուզի (Նոր տարվա) կապակցությամբ, միևնույն ժամանակ դիմել է ԻԻՀ ղեկավարությանը՝ փորձել խնդիրները միասնաբար հարթելու նպատակով:
30. 03. 2009 — Իրանի և ԱՄՆ-ի դիվանագետները կլոր սե-

ղանի շուրջ արդյունավետ քննարկումներ են ունեցել ԱՖՂանստանի հարցի կապակցությամբ:

### ԱՊՐԻԼ

02. 04. 2009 — Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեսը ժամանել է ԻԻՀ: Երկու նախագահները քննարկել են համագործակցության տասնամյա ծրագրեր:
03. 04. 2009 — Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման համար ստորագրվել է նախնական հուշագիր: Հայաստանի կողմից այն ստորագրել է տրանսպորտի և կապի նախարար Գ. Սարգսյանը, Իրանի կողմից՝ ճանապարհների և կոմունիկացիաների նախարար Համիդ Բեիրահանին: Երկաթգծի երկարությունը կազմելու է 470 կմ, որից 410-ը անցնելու է Հայաստանի, իսկ 60-ը՝ ԻԻՀ-ի տարածքով:
06. 04. 2009 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնական այցով ժամանել է Ղազախստան:
09. 04. 2009 — ԻԻՀ նախագահը մասնակցել է Սպահանում ուրանի արդյունահանման գործարանի բացման արարողությանը:
13. 04. 2009 — ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը երկօրյա պաշտոնական այցով մեկնել է ԻԻՀ: Պատվիրակության մեջ էին արտաքին գործերի, էներգետիկայի և բնական պաշարների, կապի և տրանսպորտի, էկոնոմիկայի, սփյուռքի նախարարները և Կենտրոնական բանկի նախագահը: Ստորագրվել է 8 փաստաթուղթ, այդ թվում՝ Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման հուշագիրը, Արաքս գետի վրա կառուցվող հէկ-ի համար ֆինանսավորման համաձայնագիրը:
15. 04. 2009 — «Իրանի ներկայացուցիչները մեծ հաջողությամբ գործել են ՀԱՊԿ-ի շրջանակներում հակաթմրանյութային «Կանալ» գործողությանը», — նշում է կազմակերպության գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժան:
15. 04. 2009 — Պարսից ծոցի իրանական ջրերում հայտնաբերվել է նավթի նոր հանքավայր:
16. 04. 2009 — Իրանի գիտնականները հայտարարել են, որ առաջին անգամ կարողացել են կենդանու կլոնավորել:

### ՄԱՅԻՍ

20. 05. 2009 — Իրանը հաջողությամբ փորձարկել է «Sajjil-2» տիպի «երկիր-երկիր» բալիստիկ հրթիռը, որի թռիչքի եր-

կարությունը հասնում է 2000 կմ: Հրթիռի հաջող փորձարկումը հաստատել է նաև Պենտագոնը:

30. 05. 2009 — Չահեդան քաղաքի մզկիթում ահաբեկչություն կատարելու մեջ մեղադրվող երեք անձինք կախաղան են բարձրացվել հենց մզկիթի մոտակա հրապարակում:

### ՀՈՒՆԻՍ

12. 06. 2009 — Իրանում նախագահական ընտրություններ էին: Հիմնական թեկնածուներն էին՝ Մահմուդ Ահմադինեժադը, Միր Հոսեյն Մուսավին, Մեհդի Քյարոբին և Մոհսեն Ռեզային:
13. 06. 2009 — Իրանում պաշտոնապես հայտարարվել է նախագահական ընտրություններում հաղթողի անունը: Ըստ պաշտոնական տվյալների՝ Մահմուդ Ահմադինեժադը հավաքել էր քվեների 62%-ը, իսկ Միր Հոսեյն Մուսավին՝ 30%-ը:
13. 06. 2009 — Ընդդիմությունը զանգվածային բողոքի ցույց է կազմակերպել, որի ժամանակ տեղի է ունեցել առաջին բախումը ոստիկանության հետ:
14. 06. 2009 — Միր Հոսեյն Մուսավին դիմել է իսլամական խորհրդին, որպեսզի չեղյալ հայտարարեն ընտրությունների արդյունքները, քանի որ, ըստ Մուսավինի, քվեների հաշվարկի ժամանակ տեղի են ունեցել կոպիտ խախտումներ:
15. 06. 2009 — ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին շնորհավորել է վերընտրվելու կապակցությամբ:
16. 06. 2009 — Եկատերինբուրգ է ժամանել ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը, որպեսզի մասնակցի Շահնայի համագործակցության աշխատանքներին: Հենց այդ օրն էլ Ռուսաստանը պաշտոնապես ճանաչել է ԻԻՀ-ի նախագահական ընտրությունների կայացած լինելու փաստը:
29. 06. 2009 — Սահմանադրության պահապան խորհուրդը փակված է հայտարարել նախագահական ընտրությունների թեման՝ ընդունելով, որ կային որոշակի անճշտություններ, սակայն դրանք չեն ազդել ընտրությունների վրա:

### ՀՈՒՆԻՍ

01. 07. 2009 — Հուլիսի 1-ին աշխարհի տարբեր երկրներում տեղի են ունեցել զանգվածային ցույցեր, որի ժամանակ ցուցարարները բողոքել են Իրանի կառավարության պատմիչ գործելակերպի դեմ: Դրանց մասնակցել են ինչպես տեղի

քնակչությունը, այնպես էլ այդ երկրներում սովորող իրանցի ուսանողները:

01. 07. 2009 — Թեհրանի օդանավակայանում ձերբակալվել է Ֆրանսիայի դեսպանատան աշխատակցուհին, ում մեղադրում էին լրտեսության մեջ: 24-ամյա Կլոտիլդա Ռեիսը մինչ այդ շուրջ 5 ամիս ֆրանսերեն էր դասավանդում մայրաքաղաքի համալսարաններից մեկում:
03. 07. 2009 — Իրանում բացվել է լազերային տեխնոլոգիաների գիտահետազոտական կենտրոն
07. 07. 2009 — ՀՀ նախագահի հրամանով ԻԻՀ-ում ՀՀ դեսպան է նշանակվել Գրիգոր Առաքելյանը, ով փոխարինել է Կարեն Նազարյանին:
15. 07. 2009 — Իրանի Ղազվին նահանգում կործանվել է Թեհրանից երևան թռչող T۶-154 ինքնաթիռը, որը պատկանում էր «Caspian airlines» ընկերությանը: 153 ուղևորները և ինքնաթիռի 16 իրազուց բաղկացած անձնակազմը զոհվել են, նրանցից 25-ը Հայաստանի քաղաքացիներ էին, 2-ը՝ Վրաստանի:
16. 07. 2009 — Իրանի Ատոմային էներգիայի կազմակերպության նախագահ, Իրանի նախագահի օգնական Ղոլամոեզ Աղազդեն հրաժարական է տվել: Նախագահը ընդունել է նրա հրաժարականը, սակայն կողմերից և ոչ մեկը մեկնաբանություն չի անում այդ կապակցությամբ: Աղազդեն 1997 թվականից շուրջ 12 տարի ղեկավարում էր Իրանի Ատոմային էներգիայի գործակալության նախագահի պաշտոնը: Նրան այդ պաշտոնում փոխարինեց Ալի Աքբար Մալեհին:
22. 07. 2009 — Շվեդիայի համալսարանները հրաժարվում են իրանցի ուսանողներին միջուկային ֆիզիկայի կամ հրթիռաշինության ծրագրեր ուսումնասիրելու բաժիններում ընդունելուց:

### ՕԳՈՍՏՈՍ

03. 08. 2009 — Հոսեյն իմամ Խոմենիի մզկիթում Մահմուդ Ահմադինեժադը հաստատվել է նախագահի պաշտոնում: Համաձայն ԻԻՀ սահմանադրության հոգևոր առաջնորդը պետք է նախագահին հաստատի իր պաշտոնում:
04. 08. 2009 — 30 տարվա մեջ, առաջին անգամ, պաշտոնական այցով Իրան է ժամանել Օմանի սուլթան Ղարուս բեն Սայիդը: Հանդիպման օրակարգում էին տարածաշրջանային խնդիրներ, ինչպես նաև Հրոմուզի նեղուցի պահպանման հարցերը: Հանդիպման ավարտին երկու երկրները



- ստորագրել են քաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցության վերաբերյալ 7 համաձայնագիր:
05. 08. 2009 — Իրանի Մեջլիսում տեղի է ունեցել նորընտիր նախագահ Մահմուդ Ահմադինեժադի երդմնակալության արարողությունը, որին մասնակցում էին մոտ 100 դեսպաններ և արտասահմանյան քաղաքական գործիչներ:
12. 08. 2009 — Իրանի դատարանը սկսել է լսել Ֆրանսիայի քաղաքացուի գործը, ում նախագահական ընտրություններից հետո մեղադրել են լրտեսության և սադրիչ գործողություններ կազմակերպելու մեջ:
19. 08. 2009 — Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը ժամանել է Իրան: Երկու երկրների ղեկավարները քննարկել են երկկողմ հարաբերությունների խորացման հարցեր:
30. 08. 2009 — Իրանի Մեջլիսը քննարկել է կառավարության նոր կազմը, որի թեկնածուներին առաջադրել է նորընտիր նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Իսլամական Հանրապետության ողջ պատմության ընթացքում՝ առաջին անգամ, կառավարության կազմի թեկնածուներ են առաջադրվել միանգամից 3 կին՝ կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտները ղեկավարելու համար:

#### ՍԵՊՏԵՄԲԵՐ

02. 09. 2009 — ԱԷԿԳ-ի տնօրեն Մոհամմեդ էլ-Բարադեյը հայտարարել է, որ Իրանի միջուկային սպառնալիքն ուժեղացել է:
03. 09. 2009 — ԻԻՀ պատմության մեջ առաջին անգամ կառավարության կազմում ընդգրկվել է կին: Մարցիահ Վահդի Դասթգերդին նշանակվել է առողջապահության նախարար:
09. 09. 2009 — Իրանը վեցնյակին է հանձնել միջուկային խնդրի իր առաջարկների փաթեթը: Իրանի կառավարությունը մանրամասները չի ներկայացրել, պարզապես հայտարարել է, որ միջուկային ծրագրերից զատ, նրանք անդրադարձել են նաև միջազգային մի շարք այլ խնդիրների և ներկայացրել բանակցությունների ու համագործակցության նոր ուղիներ:
14. 09. 2009 — ԵԿ-ի անդամ երկրների 27 արտգործնախարարները Բյուտեսում քննարկել են Իրանի միջուկային ծրագիրը: Քննարկման առարկա է հանդիսացել նաև Իրանի կողմից սեպտեմբերի 9-ին վեցյակին հանձնած առաջարկը:

19. 09. 2009 — ԻԻՀ նախագահը Հոլոքոստը հայտարարել է հորինված, որպեսզի հրեաներին հնարավորություն տրվի ստեղծելու պետություն: Ահմադինեժադի հայտարարությունը քննադատվել է եվրոպական մի շարք երկրների կողմից:
22. 09. 2009 — ԻԻՀ-ի Ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհի հավաստիացմամբ՝ Իրանում ստեղծվել է ուրանի հարստացման ցենտրիֆուգների նոր սերունդ: Այն 10 ցենտրիֆուգից բաղկացած մի կասկաղ է:
24. 09. 2009 — ԻԻՀ նախագահը ՄԱԿ-ում հանդես է եկել ելույթով, որտեղ մեղադրել է Իսրայելին պաղեստինցիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մեջ: Այնուհետև մեղադրանքներ է ներկայացրել նաև Միացյալ Նահանգներին: Նրա ելույթի ժամանակ ԱՄՆ-ի, Իսրայելի և ԵՄ-ի ներկայացուցիչները հեռացել են սրահից:
24. 09. 2009 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը հայտարարել է, որ իրենք պատրաստ են ԱՄՆ-ից գնել հարստացված ուրան բժշկության ոլորտում օգտագործելու համար: Այն անհրաժեշտ է Իրանին մի շարք ղեղորայքների պատրաստման համար, հատկապես քաղցկեղի դեմ պայքարելու համար:
25. 09. 2009 — ԻԻՀ-ն ԱԷԿԳ-ի տնօրեն Մոհամմեդ էլ-Բարադեյին տեղեկացրել է Իրանի տարածքում գործող ուրանի հարստացման երկրորդ գործարանի գոյության մասին:
29. 09. 2009 — Երկօրյա այցով ԻԻՀ է ժամանել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը: Նա հանդիպել է ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ: Քննարկվել են երկկողմ հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ծրագրին:

#### ՆՈՎԵՄԲԵՐ

01. 10. 2009 — Ժնևում տեղի ունեցած վեցնյակի հանդիպման ժամանակ ամերիկյան պատվիրակության ղեկավար Ուիլյամ Բերնսը հանդիպել է ԻԻՀ-ի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Սայիդ Ջալիլի հետ: Սա թերևս դիվանագիտական ամենաբարձր մակարդակի հանդիպումն էր երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից ի վեր:

01. 10. 2009 — Ժնևում տեղի ունեցած քննարկումներից հետո ԻԻՀ ներկայացուցիչները հայտարարեցին, որ երկու շաբաթվա ընթացքում ԱԷԿԳ-ի ներկայացուցիչները կարող են այցելել Իրանի ուրանի հարստացման նոր գործարան, որը գտնվում է Ղոմ քաղաքում:
03. 10. 2009 — ԱԷԿԳ-ի տնօրեն Մուհամմեդ էլ-Քարադեյը ԻԻՀ ղեկավարության հրավերով ժամանել է Թեհրան, որպեսզի քննարկեն ԻԻՀ-ի միջուկային ծրագրերը: Էլ-Քարադեյը հայտարարել է, թե իրենք ապացույցներ չունեն, որ Իրանը ձգտում է ստեղծելու միջուկային զենք:
24. 10. 2009 — ԻԻՀ են ժամանել ՄԱԿ-ի մասնագետների մի խումբ, որոնք պետք է ուսումնասիրություններ կատարեն միջուկային ծրագրի շուրջ: Սեպտեմբերի 26-ին նրանք առաջին անգամ այցելել են Ղոմ քաղաքի մոտակայքում գտնվող ուրանի հարստացման ստորգետնյա գործարան:
26. 10. 2009 — ԻԻՀ է ժամանել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: ԻԻՀ բարձրաստիճան ղեկավարության հետ հանդիպումների ժամանակ քննարկվել են երկկողմ հարաբերությունների խորացման, ինչպես նաև տարածաշրջանային՝ Իրան-Պակիստանյան լարված հարաբերությունների վերաբերյալ հարցեր:
26. 10. 2009 — Պակիստանի անվտանգության ուժերը րոնել են Իսլամական հեղափոխության պահապան խորհրդի 11 ներկայացուցիչ, ովքեր փորձել են հատել Պակիստանի սահմանը «Ջունդալլահ» ահաբեկչական խմբի պարագլուխ Աբդուլա Մալեք Ռիզվիին ձերբակալելու համար:

### ՆՈՅԵՄԲԵՐ

06. 11. 2009 — ԱԷԿԳ-ի տնօրեն Մուհամմեդ էլ-Քարադեյը հայտարարել է, որ Իրանի Ղոմ քաղաքի մոտակայքում գտնվող ուրանի հարստացման օբյեկտը իրենից վտանգ չի ներկայացնում:
08. 11. 2009 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը ժամանեց Ստամբուլ, որպեսզի նոյեմբերի 9-ին մասնակցի ԻԿԿ հերթական գագաթնաժողովին: ԻԻՀ նախագահը հանդես է եկել «ԻԿԿ անդամ պետությունների միջև հարաբերությունների զարգացման և գլոբալ ֆինանսական ճգնաժամը» զեկույցով:
17. 11. 2009 — ԱԷԿԳ-ի տնօրենը իր զեկույցում հստակեց-

րել է, որ 2009 թ. հոկտեմբերի 30-ի տվյալներով Իրանում ցածր հարստացված ուրանի ընդհանուր ծավալը կազմում է 1763 կգ:

19. 11. 2009 — Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն ժամանել է Թավրիզ մի շաբթ հարցերի շուրջ քննարկումներ իրականացնելու համար: Մեկ օր անց նա հանդիպել է ԻԻՀ նախագահի հետ և քննարկել Իրանի միջուկային ծրագրին վերաբերող հարցեր:
22. 11. 2009 — ԻԻՀ նախագահը պաշտոնական այցով մեկնել է Հարավային Ամերիկայի և Աֆրիկայի մի շաբթ երկրներ՝ Վենեսուելա, Բոլիվիա, Բրազիլիա, Սենեգալ և Գամբիա: Ահմադինեժադը վերոհիշյալ երկրների ղեկավարների հետ անցկացրել է քննարկումներ երկկողմանի հարաբերությունների խորացման, ինչպես նաև արձարձվել են տարածաշրջանային խնդիրներ:
25. 11. 2009 — Իրանի սահմանապահները ձերբակալել են բրիտանական առագաստանավի անձնակազմի 5 անդամների, ովքեր սխալմամբ անցել էին իրանական ջրային սահմանը: Առագաստանավորները Բահրեյնից մեկնում էին Դուբայ՝ մասնակցելու միջազգային մրցաշարին: Որոշ ժամանակ անց առագաստանավորներն ազատ արձակվեցին:

### ԴԵԿՏԵՄԲԵՐ

03. 12. 2009 — Իրանի ազգային անվտանգության գերագույն խորհրդի ղեկավար Սայիդ Ջալիլին այցելել է Սիրիա: Այցի ժամանակ նա հանդիպել է Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի և արտգործնախարար Վալիդ ալ-Մուալիմի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են տարածաշրջանային վերջին զարգացումները, ինչպես նաև Իրանի միջուկային ծրագրի շուրջ առաջացած խնդիրները:
03. 12. 2009 — Բրազիլիայի արտգործնախարար Ջելսո Ամորին Սպահան քաղաքում հանդիպել է ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Հանդիպման ժամանակ ԻԻՀ նախագահը Բրազիլիայի հետ հարաբերությունները որակել է որպես «ամեն օր սերտացող ռազմավարական կապ»՝ նշելով, որ «Իրանը մտադիր է բոլոր ոլորտներում զարգացնել իր կապերը Բրազիլիայի հետ»:
04. 12. 2009 — Իրանի ազգային անվտանգության գերագույն խորհրդի ղեկավար Սայիդ Ջալիլին այցելել է Թուրքիա:



Նա Անկարայում հանդիպել է վարչապետ Էրդողանի հետ, քննարկվել են Իրանի միջուկային ծրագրի շուրջ առաջացած խնդիրները:

14. 12. 2009 — Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը մեկօրյա պաշտոնական այցով ժամանել է Թեհրան: Հանդիպման ժամանակ քննարկվել են երկկողմ հարաբերությունների սերտացման հարցեր, ինչպես նաև քննարկումներ են ունեցել Կասպից ծովի իրավական խնդրի շուրջ: Համաձայնության են եկել նաև զազի ոլորտում համագործակցելու վերաբերյալ:
30. 12. 2009 — Իրանի թլորը քաղաքներում տեղի են ունեցել բազմահազարանոց ցույցեր ի պաշտպանություն կառավարության: Ցույցերում վերահաստատվեցին Իմամ Խոմենեյիի գաղափարներին հավատարիմ մնալու սկզբունքը:

## 2010

### ՀՈՒՆՎԱՐ

04. 01. 2010 — ԻԻՀ նախագահը երկօրյա պաշտոնական այցով ժամանել է Տաջիկստան: Իր գործընկերոջ՝ Էմոմալի Ռահմոնի հետ հանդիպումից ու քննարկումներից հետո ստորագրվել է 6 փաստաթուղթ, այդ թվում՝ 3 հուշագիր, որը վերաբերում է էներգետիկայի ոլորտին, ինչպես նաև հավելյալ ֆինանսավորման հատկացումներին «Իսթիկլալ» թունելի աշխատանքներն ավարտին հասցնելու համար:
05. 01. 2010 — ԻԻՀ նախագահը պաշտոնական այցով ժամանել է Թուրքմենստան: Ազգաբաղում Մահմուդ Ահմադինե-ժադը բանակցել է Ղուրբանղուլի Բերդիումուհամեդովի հետ: Կողմերը քննարկել են երկկողմ հարաբերությունների զարգացման ապագան, տարածաշրջանային խնդիրներ, մասնավորապես անդրադարձել են Աֆղանստանին: Արդյունքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, համատեղ կոմյունիկե: Նախագահների մասնակցությամբ բացվել է Թուրքմենստան-Իրան նոր զազատարը: Սա երկու պետությունների միջև երկրորդ զազատարն է, այն ունի 30,5 կմ երկարություն, որով հնարավոր կլինի երկու անգամ ավելի զազ մատակարարել Իրան:
10. 01. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադը խորհրդարանին է ներկայացրել երկրի տնտեսության զարգացման հնգամյա ծրագիրը:

16. 01. 2010 — Նյու Յորքում 5+1 ֆորմատով հանդիպում է տեղի ունեցել, որի ժամանակ քննարկվել են Իրանի միջուկային ծրագրի հարցը: Քննարկման թեման էր Իրանի նկատմամբ նոր պատժամիջոցներ կիրառելու հարցը, սակայն կողմերը համաձայնության չեկան, քանի որ ըստ Ռուսաստանի, դիվանագիտական թլորը միջոցները դեռ օգտագործված չեն:
21. 01. 2010 — ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանն այցելել է Իրան, որի արդյունքում հանդիպել է ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադի, արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիի հետ, քննարկել են տարածաշրջանային խնդիրներ:
25. 01. 2010 — ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին այցելեց Քուվեյթ, Ուզանդա և Քենիա: Քուվեյթ կատարած երկօրյա այցից հետո Լարիջանին այցելել է Ուզանդա՝ մասնակցելու իսլամական պետություններին միջխորհրդարանական վեհաժողովին:
25. 01. 2010 — Երկօրյա պաշտոնական այցով Իրան է ժամանել Մավրիտանիայի նախագահ Մոհամմեդ Վալիդ Աբդել Ազիզը: Քննարկման առարկան էր երկու երկրների հարաբերության խորացման հարցեր:
26. 01. 2010 — Երևան է ժամանել ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին, որպեսզի մասնակցի հայ-իրանական միջկառավարական 9-րդ նիստին: Այցի ընթացքում նա հանդիպել է ՀՀ նախագահին, արտգործնախարարի և Ազգային ժողովի նախագահի հետ: Քննարկվել են էներգետիկայի, տրանսպորտի, առևտրի, արդյունաբերության, միջբնակային ոլորտում հարաբերությունների խորացման հարցեր: Արդյունքում ստորագրվել է երկկողմ համագործակցության հուշագիր:
28. 01. 2010 — ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին ժամանել է Շվեյցարիա, որպեսզի մասնակցի Դավոսի միջազգային տնտեսական ֆորումին:

### ՓԵՏՐՎԱՐ

01. 02. 2010 — Իրանը միակողմանիորեն հանել է Ադրբեջանի հետ վիզային ռեժիմը: Այսուհետ Ադրբեջանի քաղաքացիներն առանց վիզային արտոնագրի կարող են այցելել և մնալ Իրանում մեկ ամիս: Սակայն այս արտոնությունից չեն կարող օգտվել լրագրողները:

02. 02. 2010 — Իրանի մասնագետները ստեղծել են անօդաչու առաջին ուղղաթիռը. այն կշռում է 10 կգ և կարող է տանել 2 կգ բեռ: Այն կարող է թռչել 1 ժամ կամ 1000 կմ:
03. 02. 2010 — Իրանական տիեզերակայանից բաց է թողնվել «Քավեշգյար-3» արբանյակը: Սա թվով 3-րդ հաջող թռիչքն է, սակայն առաջին անգամ է, որ իրանական կողմը տիեզերք է ուղարկում կենդանի օրգանիզմ:
06. 02. 2010 — ՀԼՄ-ների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Իրանում բացվել է հրթիռաշինական երկու նոր գործարան: Արտադրվում է «Ցամաք-օր» տիպի «Qaem» և «Ցամաք-ցամաք» տիպի «Toofan-5» հրթիռները:
08. 02. 2010 — ԻԻՀ նավթի նախարար Մասուդ Միրջազեմին հայտարարել է, որ Իրանի Քերմանշահ նահանգում հայտնաբերվել է նավթով հարուստ հանքավայր: Մտաւոր հաշվարկով՝ այդ հանքավայրում պետք է լինի 475 մլն բարել նավթ, որի ընդհանուր արժեքը հասնում է 85 մլրդ դոլարի: Իսկ Ասալիա նավահանգստից 70 կմ հեռավորության վրա հայտնաբերվել է գազի հանք. ենթադրվում է, որ մոտակա 20 տարում այդ հանքավայրից կստանան 50 մլն խորանարդ մ գազ:
09. 02. 2010 — Իրանի Միջուկային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհի խոսքով՝ Նաթանգի միջուկային կայանում ուրանի հարստացման աստիճանը հասցվել է 20%-ի:
19. 02. 2010 — Իրանում կառուցվել է հայրենական արտադրության առաջին հաճանավը, որը զինված է հրթիռներով և տրուպեդոներով:
25. 02. 2010 — Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը երկօրյա պաշտոնական այցով մեկնել է Դամասկոս: Նա իր գործընկերոջ՝ Բաշար ալ-Ասադի հետ քննարկում է ունեցել տարածաշրջանային վերջին զարգացումների վերաբերյալ: Այցի շրջանակներում ստորագրվել է վիզային ռեժիմը հանելու մասին փաստաթուղթ: Այսուհետ երկու երկրների քաղաքացիները կարող են 90 օր առանց վիզայի ռեժիմի այցելություններ կատարել: Մեկ այլ համաձայնագրով զինվորականները ևս կարող են օգտվել վիզային ազատ ռեժիմից: Մեկ օր անց Ահմադինեժադը հանդիպել է Հեզբոլլահի առաջնորդ շեյխ Սեյիդ Հասան Նասրոլլահի հետ:

27. 02. 2010 — ԻԻՀ-ի անվտանգության ուժերը լուրջ հարված հասցրին երկրի հյուսիսարևմտյան հատվածում գործող Քրդական բանվորական կուսակցության իրանական թևին:

**ՄԱՐՏ**

01. 03. 2010 — Վիեննայում տեղի է ունեցել ԱԷՄԳ-ի խորհրդի նիստը: Հիմնական քննարկվող թեմաներն էին Իրանի միջուկային ծրագիրը և Սիրիայում Միջուկային զենքի չտարածման պայմանագրի իրականացման երաշխիքների հարցը: ԱԷՄԳ-ի տնօրեն Յուկիո Ամանոն Իրանին կոչ է արել առավել սերտ համագործակցել ԱԷՄԳ-ի հետ և վերահաստատել Հավելյալ պայմանագիրը:
01. 03. 2010 — Իրան-պակիստանյան սահմանը չորս ամիս փակ լինելուց հետո, ի վերջո բացվել է: Իրանի սահմանի փակ լինելու պատճառը Պակիստանից ներթափանցած «Ջունդալլահ» ահաբեկչական կազմակերպության ծավալած գործողություններն էին:
09. 03. 2010 — ՀԼՄ-ների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Գերմանիայում ձերբակալվել է ՊԺԱԿ (Քուրդիստանի ազատ կյանքի կուսակցության) (ԲԲԿ-ի իրանական թևն է) ահաբեկչական խմբի առաջնորդ Աբդուլուհաման Հաջիահմեդը: Սակայն մի քանի օր անց գերմանական կառավարությունը նրան ազատ արձակեց:
10. 03. 2010 — Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը մեկօրյա պաշտոնական այցով մեկնել է Աֆղանստան:
11. 03. 2010 — ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հրաման է ստորագրել 1995 թվականից Իրանի համար իրականացվող պատժամիջոցները ևս մեկ տարով երկարացնելու մասին:
21. 03. 2010 — Իրանի, Տաջիկստանի և Աֆղանստանի ջանքերով ստեղծվել է հեռուստատեսային կայան, որը հեռարձակվում է պարսկերենով:
26. 03. 2010 — Իրան են ժամանել Իրաքի, Աֆղանստանի, Թուրքմենստանի և Տաջիկստանի նախագահները, որպեսզի մասնակցեն Նովրուզի տոնակատարությանը: Ադրբեջանը ներկայացված էր արտգործնախարարի մակարդակով: Տոնակատարությունից հետո վերոհիշյալ երկրների բարձրաստիճան ղեկավարները քննարկել են տարածաշրջանային մի շարք հարցեր և ձեռք բերել համագործակցության պայմանավորվածություններ:



## ԱՊՐԻՆ

02. 04. 2010 — ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման հեռախոսազրույց է ունեցել Չինաստանի առաջնորդ Հու Յզին-տյաոյի հետ Իրանի միջուկային ծրագրի և այդ երկրի նկատմամբ պատժամիջոցների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ:
22. 04. 2010 — Իրանի Իսլամական հեղափոխության պահապան խորհուրդը Հորմուզի նեղուցում երեք օր շարունակ իրականացրել է «Մեծ մարզարե 5» զորախաղերը, որին մասնակցեցին օդային, ծովային և ցամաքային ուժերը: Ձորախաղերի ժամանակ ցուցադրվել են արագընթաց հրթիռակիր մոտորանավակներ, ինչպես նաև բաց են թողնվել «երկիր-ծով», «ծով-ծով» տիպի հինգ հրթիռներ:
22. 04. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը երկօրյա այցով ժամանել է Հիմքաբվե, այնտեղից մեկնել Ուզանդա: Նպատակն է ակտիվացնել աֆրիկյան երկրների հետ շփումները: Հիմնական շեշտը դրվել է տնտեսական համագործակցության վրա: Հիմքաբվե կատարած այցի արդյունքում ստորագրվել է համագործակցության երկկողմ համաձայնագիր:

## ՄԱՅԻՍ

03. 05. 2010 — Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը գտնվում էր Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի շտաբ կայանում, որտեղ մասնակցում էր Միջուկային զենքի չտարածման պայմանագրի իրականացման կոնֆերանսին: Այն իրականացվում է հինգ տարին մեկ անգամ: Իրանի նախագահի ելույթի ժամանակ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ներկայացուցիչները հեռացել են նիստերի դահլիճից, քանի որ Ահմադինեժադը ԱՄՆ-ին մեղադրել է միջուկային ծրագրի նկատմամբ ցուցաբերած երկակի ստանդարտների մեջ:
03. 05. 2010 — ԻԻՀ-ի ներքին գործերի նախարար Մուստաֆա Մոհամմադ Նաջարը պաշտոնական այցով ժամանել է Ադրբեջան, հանդիպել իր գործընկերոջ Ռամիլ Ուուրուփի հետ և ստորագրել համատեղ արձանագրություն՝ անվտանգության, համատեղ պաշտպանության, հանցագործության, ահաբեկչության և թմրանյութերի տարածման դեմ համատեղ պայքարի համար:
05. 05. 2010 — Օմանի ծոցում ապրիլի 5–8-ը Իրանի ռազմածովային ուժերը իրականացրել են «Վելայաթ-89» զորա-

խաղեր, որի ժամանակ Իրանը հաջողությամբ փորձարկել է նորաստեղծ «Ֆաջր-5» հրթիռը: Այն սովետական ԵՄ-26 «Սմերչ» տիպի հիթիռի իրանական կրկնօրինակն է:

17. 05. 2010 — Իրանում մեկնարկվել է «15-ի խմբի» գազաթնաժողովը, որի հիմնական թեման էր Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների տնտեսական զարգացման հարցերը: Գազաթնաժողովին մասնակցել են վեց երկրների՝ Իրանի, Ալժիրի, Բրազիլիայի, Հիմբաբվեի, Սենեգալի և Շրի Լանկայի նախագահները: Մյուս պատվիրակությունները գլխավորել էին փոխնախագահները և արտգործնախարարները:
17. 05. 2010 — Թեհրանում 18 ժամ տևած քանակցություններից հետո Իրանի, Բրազիլիայի և Թուրքիայի ղեկավարները եկել են համաձայնության և ստորագրել միջուկային վառելիքի փոխանակման համաձայնագիր: Իրանը համաձայնվել է 1,2 տոննա ցածր հարստացված (3,5%) իր ուրանը հանձնել Թուրքիային՝ պայմանով, որ դրա փոխարեն կստանա 120 կգ 20% հարստացված ուրան:
17. 05. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը և Բրազիլիայի նախագահ Լուիս Իզնասիո Լուլա դա Սիլվան հոդհիպման արդյունքում ստորագրել են երկկողմ համաձայնության ութ պայմանագիր, նավթի, գազի և այլ ոլորտներում ներդրումներ կատարելու ուղղությամբ: Վերջին տարվա ընթացքում Բրազիլիայի և Իրանի միջև առևտրաշրջանառությունը կազմել է մեկ միլիարդ դոլար:

## ՀՈՒՆԻՍ

03. 06. 2010 — ԻԻՀ հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին համաներում է շնորհել 81 ընդդիմադիրներին, ովքեր ձերբակալվել էին նախորդ տարվա նախագահական ընտրություններից հետո ցույցերին մասնակցելու համար:
06. 06. 2010 — ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին ժամանել է Սաուդյան Արաբիա՝ մասնակցելու ԻԿԿ գազաթնաժողովին, որին մասնակցելու էին 57 երկրի ներկայացուցիչներ: Այցի ընթացքում նա հանդիպել է ԻԿԿ գլխավոր քարտուղար Էքմալդդին Իհսանօղլու հետ, կոչ արել ակտիվացնել Գազայի շրջափակումը վերացնելու քայլերը:
07. 06. 2010 — ԻԻՀ նախագահը ժամանել է Թուրքիա՝ մասնակցելու Ասիական երկրների համագործակցությանը նվիրված խորհրդաժողովին: Քննարկվել են տարածաշրջա-

նային խնդիրների լուծման ուղիները, տարածաշրջանային անվտանգության, Ասիական երկրների համագործակցության հարցեր:

08. 06. 2010 — Իրաքի արտգործնախարար Հոշիյար Ջիբարին հայտարարել է, որ արդեն ուղերձ է ուղարկել իրանցի իր գործընկերոջը՝ պահանջելով դադարեցնել իրանական զորքերի առաջխաղացումը դեպի սահման և Իրաքի տարածքում բազաների տեղակայումը:
09. 06. 2010 — ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Իրանի ուրանի հարստացման համար ընդունել է հերթական՝ 1929 բանաձևը: Ի պաշտպանություն փաստաթղթի՝ քվեարկել են 12 անդամ պետություններ. Բրազիլիան և Թուրքիան դեմ են քվեարկել, իսկ Լիբանանը՝ ձեռնպահ:
10. 06. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը պաշտոնական այցով ժամանել է Չինաստան:
17. 06. 2010 — ՉԼՄ-ները տեղեկացել են, որ Միացյալ Նահանգները մեծացնում է ճշշումները Իրանի նկատմամբ, և հավելյալ 30 ընկերությունների ու անձանց անուններ են հայտնվել պատժամիջոցների ցանկում:
18. 06. 2010 — Երևանում սկսվել է հայ-իրանական ֆորումը: Երևան էին ժամանել իրանական 108 ընկերությունների ներկայացուցիչներ մեքենաշինության, շինարարության ոլորտներից:
20. 06. 2010 — Իրանում կախաղան է բարձրացվել «Ջունդալ-յահ» ահաբեկչական խմբի ղեկավար Աբդուլմալեկ Ռիզիին:
23. 06. 2010 — ԻՄՆԱ գործակալությունը, համաձայն Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհի տեղեկատվության, նշել է, որ Իրանը արդեն կարողացել է ուրանի հարստացման աստիճանը հասցնել 20%-ի և այդ պահի դրությամբ Սալեհի խոսքով, նրանք ունեն 17 կգ 20% հարստացված ուրան:

## ՀՈՒՆԻՍ

05. 07. 2010 — ՉԼՄ-ները տեղեկացրել են, որ իրանցի ինժեներների կողմից ստեղծվել է 1,45 մ բարձրությամբ, 45 կգ քաշով մարդանման ոռոտ, որը ստացել է «Սուրենա 2» անունը:
06. 07. 2010 — Իրանի նախագահը մեկօրյա այցով ժամանել է Մալի: Այցի ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերու-

թյունների ամրապնդման ծրագրեր և տարածաշրջանային խնդիրներ: Այցի ավարտին ստորագրվել է համագործակցության հինգ պայմանագիր:

07. 07. 2010 — ՉԼՄ-ների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Եվրամիությունը, անվտանգության նկատառումներից ելնելով, արգելել է իր տարածքի վրայով թռչել Iran Air-ի ինքնաթիռների երկու երրորդին:
08. 07. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադ ժամանել է Նիդերլանդներ, մասնակցել D8 հավաքին (մուսուլմանական զարգացող 8 երկրների հավաքն էր): Քննարկվել են տնտեսական և առևտրային ծրագրերի կարգավորման հարցեր:
15. 07. 2010 — ՉԼՄ-ների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Իրանին վերջապես հաջողվել է բարձրացնել ոսկու մաքրությունը 99,9%: Մինչ այդ ոսկու նման մաքրության տեխնոլոգիայի տիրապետում էր աշխարհի 10 երկիր:
15. 07. 2010 — Միանգամից երկու ահաբեկչական գործողություն է գրանցվել Իրանի Սիսթան և Բելուջիսթան նահանգի Ջահեդան քաղաքի շիական մզկիթներից մեկի մոտ: Չոհվել է 20 մարդ, վիրավորվել 100-ից ավելի քաղաքացի: Ահաբեկչական գործողությունը իր վրա է վերցրել «Ջունդալալա», ի պատասխան իրենց առաջնորդ Աբդուլմալեկ Ռիզիի մահապատժի:
17. 07. 2010 — ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան պաշտոնական այց է կատարել Իրան, այցի ընթացքում նա հանդիպել է իրանցի իր գործընկերոջ և ռազմաքաղաքական ոլորտի այլ ներկայացուցիչների հետ: Այցի շրջանակներում Օհանյանին հյուրընկալել է նաև երկրի նախագահը, և քննարկել են տարածաշրջանային հարցեր:

## ՕԳՈՍՏՈՍ

03. 08. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը մասնակցել է Հարավային Փարս շրջանում բացված նավթաքիմիական երկու գործարանների բացմանը:
03. 08. 2010 — ՉԼՄ-ների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Թավրիզի շուկան ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում: ՄԱԿ-ի պատմության ողջ ընթացքում առաջին անգամ է, որ այդ ցուցակում շուկա է հայտնվում:
04. 08. 2010 — Ալ-Արաբիա հեռուստաալիքի տարածած հա-



ղորդագրության համաձայն՝ Իրանի Համադան քաղաքում ԻԻՀ նախագահի նկատմամբ իրականացվել է մահափորձ: Համաձայն տեղեկատվության՝ անհայտ անձը նոնակը ցանկացել է զցել նախագահի ավտոմեքենայի վրա, սակայն դա նրան չի հաջողվել, և նոնակն ընկել է լրագրողների ավտոբուսի վրա: Սակայն պաշտոնական Թեհրանը հերքել է մահափորձի մասին տեղեկությունը:

05. 08. 2010 — Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովը և Աֆղանստանի նախագահ Համիդ Քարզայը ժամանել են Իրան և հանդիպել նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Երեք երկրների ղեկավարները քննարկել են տնտեսական, առևտրային, էներգետիկայի, հեռահաղորդակցության ոլորտում հարաբերությունների ակտիվացման հարցեր:
16. 08. 2010 — ԻՄԱՆ գործակալությունը տեղեկացրել է, որ 2010 թ. առաջին 4 ամիսների ընթացքում Թուրքիայից, Ռուսաստանից և Արաբական Միացյալ Եմիրություններից Իրանը ձեռք է բերել 22 տոննա ոսկի:
20. 08. 2010 — Շվեյցարիայի կառավարությունը ՄԱԿ-ի ընդունած պատմամիջոցների շրջանակում իրանական հաշիվներից արգելափակել է 1,5 մլն շվեյցարական ֆրանկ (1,4 մլն դոլար):
23. 08. 2010 — Բուշեիրում տեղի է ունեցել ռուսների կողմից ատոմային էլեկտրակայանի մեկնարկի հանդիսավոր արարողությունը:
26. 08. 2010 — Իրանի փոխնախագահ Համիդ Բաղայը «Իրան, կամուրջ դեպի հաջողություն» կոնֆերանսում ելույթ ունենալիս 1915 թ. դեպքերը որակել է որպես Հայոց ցեղասպանություն: Հաջորդ օրը Թուրքիան բացատրություն պահանջեց թե՛ Բաղայից և թե՛ Մոլթաթիից: Բաղայը հերքել է, որ օգտագործել է «ցեղասպանություն» եզրույթը:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

07. 09. 2010 — Արդեն մի քանի ամիս է, ինչ միջազգային հնչեղություն էր ստացել Սաքինե Մուհամմադ-Աջթիանի մահապատժի հարցը, ով մեղադրվել էր ամուսնուն դավաճանելու և այնուհետև նրան սպանելու մեջ: Եվրոխորհրդարանը դիմել էր Իրանի կառավարությանը, որպեսզի մահապատժը փոխարինի այլ պատմամիջոցով:

13. 09. 2010 — Իրանի և Չինաստանի բարձրաստիճան պաշտոնյաները Իրան-Իրաք երկաթգծի կառուցման համաձայնագիր են ստորագրել: Կառուցման ընդհանուր արժեքը կկազմի 2 մլրդ դոլար: Հետագայում Չինաստանը նպատակ ունի այդ երկաթգիծը հասցնելու նաև Սիրիա, Լիբանան, Թուրքիայում էլ՝ մինչև Բոսֆոր: Այդպիսով Չինաստանը, երկաթգծի ցանցով հասնելով իսլամական երկրների սահմանը, կկապվի Եվրոպային: Մետաքսե նոր ճանապարհը, Չինաստանի հաշվարկներով, կնվազեցնի Եվրոպա մատակարարվող ապրանքների գները 5-6%-ով:

15. 09. 2010 — ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանը պաշտոնական այց է կատարել Իրան: Այցի շրջանակներում նա հանդիպել է ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, արտգործնախարար Մանուչեհր Մոլթաթիի և բարձրաստիճան այլ ղեկավարների հետ: Բարձր գնահատելով հայ-իրանական հարաբերությունների արդի վիճակը՝ ՀՀ և ԻԻՀ արտգործնախարարները քննարկել են հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքները: Քննարկել են նաև տարածաշրջանի կայունության պահպանման հարցեր:
18. 09. 2010 — ԻԻՀ նախագահը մի քանի ժամով այցելել է Սիրիա՝ հանդիպելու իր գործընկերոջ՝ Բաշար ալ-Ասադի հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են ինչպես տարածաշրջանում առկա խնդիրները, այնպես էլ երկկողմ հարաբերությունների մակարդակի բարձրացման հարցեր: Մասնավորապես քննարկվել է ԱՄՆ-ի բանազնաց Ջորջ Միտչելի Սիրիա կատարած այցի արդյունքների մասին:
19. 09. 2010 — ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հանդիպել է Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ: Հանդիպման ժամանակ Պան Գի Մունը կոչ է արել ԻԻՀ նախագահին արդյունավետ համագործակցություն սկսել վեցյակի հետ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: ԻԻՀ նախագահը Նյու Յորքում էր, որպեսզի մասնակցեր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 65-րդ վեհաժողովին, որտեղ հանդես եկավ ելույթով:

## ՇՈՎՏԵՄԲԵՐ

02. 10. 2010 — Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը մեկօրյա պաշտոնական այցով ժամանել է Թեհրան: Նա իրան-

- ցի իր գործընկերոջ հետ քննարկեց տարածաշրջանային խնդիրներ, մասնավորապես անդրադառնալով Իրաքում ծավալվող զարգացումներին, Իրանի նկատմամբ իրականացվող պատժամիջոցներին, Իսրայելի և Պաղեստինի խնդրին: Հանդիպման ընթացքում երկու նախագահները ստորագրել են հուշագիր ազատ առևտրի և արդյունաբերական համագործակցության մասին: Այցի շրջանակներում Բաշար Ասադը հանդիպել է նաև ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեի հետ:
08. 10. 2010 — ՀՀ է ժամանել ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին իր գործընկերոջ՝ Հովիկ Աբրահամյանի հրավերով:
13. 10. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը երկօրյա պաշտոնական այցով մեկնել է Լիբանան: Այցի շրջանակներում ստորագրվել է համագործակցության 17 փաստաթուղթ: Երկու կողմերը ցանկություն ունեն համագործակցելու էներգետիկայի, առևտրի, շինարարության, գիտահետազոտական, կապի, նավթագազային և այլ ոլորտներում: Այցի վերջին օրը ԻԻՀ նախագահը հանդիպել է «Հեզբոլլահի» գլխավոր քարտուղար Հասան Նասրոլլահի հետ:
14. 10. 2010 — Առաջին անգամ՝ 36 տարվա ընթացքում, OPEC-ի նավթ արտահանող 12 երկիր Իրանի ներկայացուցչին՝ նավթարդյունաբերության նախարար Մոհամմադ Ալի Նոթաբին, նշանակել են OPEC-ի ղեկավար: Նա ղեկավարել է 2011 թվականից:
14. 10. 2010 — ԻԻՀ-ի էներգետիկայի նախարար Մաջիդ Նամջուն իր գործընկերոջ՝ Արմեն Մովսիսյանի հրավերով ժամանել է ՀՀ, որպեսզի քննարկեն իրենց ոլորտում երկու երկրների հաջող համագործակցության հարցեր: Այցի ընթացքում ստորագրվել են երկկողմ համաձայնագրեր և հուշագրեր, այդ թվում նաև Արաբի վրա Մեդրի հէկ-ի կառուցման համաձայնագիրը:
19. 10. 2010 — ԻԻՀ է ժամանել Վենեսուելայի նախագահ Հուգո Չավեսը, այցի նպատակն էր խորացնել Թեիրանի և Կարակասի միջև հարաբերությունները:
24. 10. 2010 — Ենթոյա այցով Իրան է ժամանել Բոլիվիայի նախագահ Էվո Մոռալիսը: Այցի ընթացքում ստորագրվել են համագործակցության մի շարք համաձայնագրեր: Մոռալի-

սի նպատակն է մեծացնել իրանական ներդրումների չափը Բոլիվիայում: Այցի ընթացքում ստորագրվել է 5 համաձայնագիր:

25. 10. 2010 — Երկօրյա այցով Իրան է ժամանել ՀՀ պատվիրակությունը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին կառավարության աշխատակազմի ղեկավարը, էներգետիկայի, էկոնոմիկայի, կրթության և գիտության, առողջապահության, գյուղատնտեսության և սպիտուցի նախարարները: Այցի ընթացքում ստորագրվել են երկկողմ պայմանագրեր ԻԻՀ և ՀՀ առևտրի, էկոնոմիկայի նախարարների միջև: Սակայն կողմերը համաձայնության չեկան «Ազատ առևտրի մասին»:

### ՆՈՅՆԵՐԵՆ

03. 11. 2010 — ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքին պաշտոնական այց է կատարել Վրաստան: Այցի նպատակն էր ստորագրել վիզային ռեժիմի վերացման փաստաթուղթ, որի համաձայն՝ երկու երկրների քաղաքացիներ 45 օր կարող են առանց վիզայի փոխայցելություններ կատարել:
17. 11. 2010 — ԻԻՀ նախագահը պաշտոնական այցով ժամանել է Ադրբեջան: Այցի արդյունքում ստորագրվել է տրանսպորտի և էներգետիկայի վերաբերյալ երկու հուշագիր: Նույն օրը ԻԻՀ նախագահն այցելել է շահիդների պուրակ՝ հարգանքի տուրք մատուցելու:
17. 11. 2010 — Ադրբեջանում անցկացվել է Կասպից ծովին նվիրված 3-րդ գագաթնաժողովը, որին մասնակցել են ԻԻՀ-ի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի նախագահները: Գագաթնաժողովում քննարկվել են Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը:
23. 11. 2010 — ՀԼՄ-ները տեղեկացրել են, որ Գամբիան խզել է իր դիվանագիտական, քաղաքական և տնտեսական հարաբերությունները Իրանի հետ: Գամբիայի իշխանությունները պահանջել են Իրանի դիվանագետներին լքել երկրի տարածքը 48 ժամվա ընթացքում: Դրա միակ պատճառը կարող էր լինել Նիգերիայի հատուկ ծառայության աշխատակիցների կողմից առգրավված ապօրինի զենք ու զինամթերքով բեռնված նավը: Ըստ նրանց՝ դա իրանական զինամթերք էր, որի վերջնական հասցեն պետք է Գամբիան լիներ: Հարկ է նշել, որ ԻԻՀ-ն արտգործնախարար Մանու-



չեիր Մոթաքին պաշտոնապես հայտարարել էր, որ ԻԻՀ-ն ոչ մի կապ չունի այդ զենքի հետ:

27. 11. 2010 — Առաջին անգամ պաշտոնական այցով ԻԻՀ է ժամանել Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին: Նրան ուղեկցել են արտաքին գործերի և տրանսպորտի նախարարները:
29. 11. 2010 — Իրանի հարավ-արևելքում գտնվող Սերահս քաղաքում ԻԻՀ-ի և Թուրքմենստանի նախագահները մասնակցել են զազատարի իրանական հատվածի բացման արարողությանը: Այս խողովակով Իրան էր մատակարարվելու թուրքմենական գազը:

### ԴԵԿՏԵՄԲԵՐ

01. 12. 2010 — ՀՀ է այցելել ԻԻՀ մաքսային ծառայության ղեկավար Արդեշիր Մոհամադը՝ իր պատվիրակությամբ: Այցի շրջանակներում ստորագրվել են մի շարք համաձայնագրեր, այդ թվում՝ տեղեկությունների արդյունավետ փոխանակման վերաբերյալ: Կողմերը համաձայնվել են հեշտացնել սահմանի հատման գործընթացը, սակայն պետք է ուժեղացնեն վերահսկողությունը, որպեսզի խուսափեն մաքսանենգության դեպքերից:
01. 12. 2010 — Դեկտեմբերի 1–2-ին Հայաստանում է տեղի ունեցել հայ-իրանական թվով 7–րդ համատեղ հյուպատոսական նստաշրջանը, որի ընթացքում քննարկվել են իրավական, հասարակական, արձանագրային, ինչպես նաև վիզային վերաբերող հարցեր:
06. 12. 2010 — Իրանի և վեցնյակի միջև վերսկսվել են բանակցությունները՝ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Վերջին նման քննարկումը տեղի էր ունեցել 14 ամիս առաջ, որի ժամանակ պաշտոնական Թեհրանը հրաժարվել է իրականացնել բանակցությունների արդյունքում ձեռք բերած համաձայնությունները, ինչը և բանակցությունները տարան փակուղի:
14. 12. 2010 — ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադն առանց որևէ հիմնավորման աշխատանքից ազատել է ԻԻՀ արտգործնախարար Մանուչեհր Մոթաքինին իր զբաղեցրած պաշտոնից, ով այդ պահին պաշտոնական այցով գտնվում էր Սենեգալում: Նա այդ պաշտոնում էր 2005 թվականից: Ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Ատո-

մային էներգիայի կազմակերպության ղեկավար Ալի Աքբար Սալեհիին: Տարվա ընթացքում իրանական ՋԼՄ-ները հաղորդագրություններ էին տարածում, համաձայն որի, եթե Իրանի նկատմամբ կրկին իրականացվեն պատժամիջոցներ, ապա Մանուչեհր Մոթաքին կազատվի զբաղեցրած իր պաշտոնից: Վերջին պատժամիջոցը Իրանի նկատմամբ ընդունվեց հունիսին:

15. 12. 2010 — Աշուրա տոնակատարության ժամանակ Չաբահար քաղաքի Իմամ Հուսեյնի շիրիական մզկիթում իրականացվել է ահաբեկչական գործողություն: 38 մարդ զոհվել է, 60-ը՝ վիրավորվել: Այս ահաբեկչության պատասխանատվությունը իր վրա է վերցրել «Ջուդալախ» ահաբեկչական խումբը:
15. 12. 2010 — Ատոմային էներգիայի կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Մոհամադ Ահմադին:
18. 12. 2010 — Ալի Աքբար Սալեհին պաշտոնապես հաստատվել է ԻԻՀ արտաքին գործերի նախարարի պաշտոնում:
23. 12. 2010 — Ստամբուլում տեղի է ունեցել Տետեսական համագործակցության կազմակերպության 11-րդ նիստը, որին մասնակցել են կազմակերպության անդամ երկրների նախագահները կամ կառավարության ղեկավարները: Ստամբուլում հանդիպել են ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը և Թուրքիայի վարչապետը: Քննարկել են երկկողմ հարաբերությունների մակարդակի բարձրացման, տարածաշրջանային և միջազգային մի շարք հարցեր:

## ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՒՀ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ  
ՀԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՊՊԵՐՏ

Ներկայում շատ է խոսվում իրանամերիկյան կամ իրանախորայելական հավանական բախման մասին: Նման պատերազմը չի բացառվում: Շատերին է հետաքրքրում ռազմական պոտենցիալների համեմատությունը և հավանական սցենարների զարգացումը, եթե լինեն մարտական գործողություններ: Իհարկե, ռազմական գործողությունների որևէ սցենարի զարգացումը կանխատեսելը շատ դժվար և անշնորհակալ գործ է, սակայն պոտենցիալների որոշակի համեմատություն անել հնարավոր է:

Եթե լինի նման պատերազմ, այն, ամենայն հավանականությամբ, կլինի օդածովային մասսայական հարվածների ձևով, ինչպիսին մենք ականատես ենք լինում հիմնականում ԱՄՆ-ի կողմից վերջին 20 տարում: Ցամաքային ուժերի մասնակցությունը նման մարտական գործողություններին կարող է լինել խիստ սահմանափակ, հիմնականում որոշ հատուկ ստորաբաժանումների գործողություններ: Եթե հաշվի առնենք, որ այստեղ գլխավոր խնդիրներից մեկը լինելու է Հորմուզի նեղուցի փակումը, չեն բացառվում որոշակի հատուկ գործողություններ, ինչպիսիք եղան «Prime Chance», «Praying Mantis» և այլ գործողությունները 1987-1989 թթ., երբ ամերիկյան հատուկ ջոկատայինները, նավատորմի և օդուժի հատուկ կանխարգելիչ հարվածներով մեծ վնաս պատճառեցին Իրանին, Հորմուզի նեղուցի շրջանում գրավեցին նավթահանման աշտարակը և այլն<sup>1</sup>:

Փորձենք հասկանալ, թե ինչ ռազմական ներուժ ունի Իրա-

նը նման հավանական պատերազմի համար: Ինչպես նշեցինք, նման պատերազմի մեջ հիմնականում ներգրավվում են օդուժը, ծովուժը, ՀՕՊ զորքերը, լայն կիրառություն են գտնում հատուկ գործողությունները, ՌէՊ ուժերը և կապը, շատ է կարևորվում հետախուզությունը: Այլ զորատեսակների ներգրավվածությունը կրում է խիստ սահմանափակ բնույթ կամ իսպառ բացակայում է: Իրանն ունի մոտ 350 միավոր MiG-29, Cy-24, F-4, F-5, F-14, F-7 և այլ տեսակի մարտական ինքնաթիռներ<sup>2</sup>, որոնք, սակայն, արդեն ժամանակակից համարվել չեն կարող, իսկ ամերիկյան ինքնաթիռները, որոնք քանակով ընդհանուրի կեսից ավելին են, բավականին հնացած են և տեխնիկական որոշակի խնդիրներ ունեն: Չի բացառվում նաև դրանց հատուկ խափանումը արտադրող երկրի կողմից: Դրան հակառակ՝ միայն Իսրայելն ունի մոտ 360 միավոր բարձրակարգ F-15, F-16 տեսակի կործանիչներ, որոնք հիանալի տեխնիկական վիճակում են, և, առհասարակ, իսրայելական օդուժը աշխարհում առաջին տեղում է իր մարտական փորձով և պատրաստությամբ: Իրանական օդուժը տեխնիկապես գրեթե ի վիճակի չէ հարվածելու Իսրայելին, քանի որ Ա տեխնիկական, և կազմակերպչական, և մասնագիտական լուրջ խնդիրներ կան: Այն դեպքում, երբ իսրայելական օդուժի համար սա մեծ խնդիր չէ: Մինչև 1500 կմ շառավղով, ինչը կազմում է Իսրայելից Իրանի տարածքի խորքերը, իսրայելական օդուժը կարող է գերճշգրիտ հարվածներ հասցնել Իրանին: Տեխնիկական խնդիրներից գատ, Իրանի համար անհաղթահարելի են նաև հարևան ոչ բարեկամ երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Բահրեյնի տարածքները: Այն դեպքում, երբ Իսրայելին այս երկրները կարող են օդային տարածք տրամադրել: Իհարկե, այստեղ կարևոր դեր ունի նաև ՀՕՊ-ը, որը, սակայն, այնքան էլ իզոլ չէ Իրանի դեպքում: Ճիշտ է, իրանական բանակում կան սակավաթիվ ռուսական և չինական համեմատաբար ժամանակակից համարվող զենիթահրթիռային համալիրներ, ինչպիսիք են C-300-ի չինական տարբերակը կամ Top-ը<sup>3</sup>, սակայն դրանք, ինչպես նշեցինք, սակավաթիվ են, բացի դրանից էլ,

<sup>1</sup> David B. Crist. U.S.–Iranian Military Clashes in the Persian Gulf in the 1980s – The Inside Story. July 13th 2009. <http://www.thecuttingedgegenews.com/index.php?article=11451&pageid=37&pagename=Page+One.html>

<sup>2</sup> The Military Balance 2010, IISS, Nuffield Press, p. 253.

<sup>3</sup> Иран получил щит Купив у России зенитно-ракетные комплексы пятого поколения «Тор-М1», 26. 01. 2007. <http://farsiiran.narod.ru/analitics/tor.htm>



խրայելական ՌՕՈւ-ն դրանց հետ պայքարի փայլուն փորձ ունի, ինչը ապացուցվեց նաև իսրայելահունական զորավար-ժույթունների ժամանակ, երբ իսրայելական ՌՕՈւ-ն, հիմնականում շնորհիվ ՌԷՊ-ի և հմուտ ղեկավարման, հաղթահարում էր հենց նույն համալիրների պաշտպանությունը<sup>4</sup>: Իհարկե, որոշակի կորուստներ կարող են լինել: Կարծում ենք, ավելորդ է արդեն նշել, որ իրանական բանակը լրջորեն զիջում է իսրայելականին ՌԷՊ-ի մակարդակով, հետախուզության, ղեկավարման համակարգերով և այլն: Իսրայելի համար այստեղ գլխավոր խնդիրը կարող է լինել գերճշգրիտ միջոցների պակասությունը: Նման դեպքերում առաջնային ոչնչացման են ենթակա օդանավակայանները, միջուկային օբյեկտները, կապի, տրանսպորտի կարևոր հանգույցները և ղեկավարման կետերը: Իրանի տարածքում կետային հարվածներին ենթակա կարող են լինել նման ավելի քան 100 կարևորագույն թիրախներ, որոնց անհրաժեշտ կլինի հասցնել մի քանի հարվածներ. ընդհանուր ավելի քան 2000 մարտական թռիչք, որից 500-600-ը՝ հարվածային նպատակով: Դրանց համար անհրաժեշտ կլինեն ոչ պակաս քան 500 միավոր ժամանակակից օդ-երկիր տեսակի հրթիռներ, որոնք թանկարժեք են: Ընդ որում՝ երբեմն նման թիրախները կարող են լինել խորը գետնի տակ, նման նշանակետերի ոչնչացման համար Իսրայելն անհրաժեշտ միջոցներ չունի: Այստեղ Իսրայելն առանց ԱՄՆ-ի օգնության դժվար թե գործը գլուխ բերի: Այսինքն՝ իսրայելա-իրանական օդուժների համեմատությունը փաստում է, որ Իրանը այստեղ կարող է պարտություն կրել: Ծովուժն այս դեպքում կարևոր գործոն չէ և գրեթե մեծ դեր չի կարող խաղալ: Իհարկե, այստեղ ի հայտ է գալիս Իրանի գլխավոր խաղաքարտը՝ բալիստիկ հրթիռները, որոնք երկար տարիներ է հատուկ ստեղծվում են Իսրայելին հասնելու համար: Սակայն տեղեկացնենք, որ այստեղ ևս մեծ առաջընթաց չկա: Իրանյան «Շահաբ-3» դասի բալիստիկ հրթիռները, որոնք կարող են հասնել Իսրայելի տարածք, քանակով շատ չեն (խոսվում է մինչև 5 տասնյակի մասին<sup>5</sup>), տեխնիկապես մեծ հուսալիություն չունեն, իսկ ոչ միջուկային մարտական մասը շատ մեծ է

<sup>4</sup> Израиль и Греция провели тайные военные учения, <http://www.sem40.ru/index.php?newsid=224184> 13. 12. 2011

<sup>5</sup> The Military Balance 2010, p. 252; Сколько времени осталось до удара по Ирану?, 20. 01. 2012. <http://www.modernarmy.ru/new/47>

գերճշգրիտ չէ: Այսինքն, եթե անգամ դրանք արձակվեն, մասսայական չեն լինելու, արձակումից հետո ոչ բոլորը կարող են տեղ հասնել, հասնելուց կարող են մեծ շեղումներ ունենալ, իսկ հարվածելուց էլ մեծ վնասներ չեն պատճառի: Այստեղ արդեն մի քանի տասնյակ մարդկանց մահը ոչինչ չի փոխի: Այս «եթեների» շարքին ավելացնենք նաև որ Իսրայելն այսօր միակ պետությունն է աշխարհում որի տարածքը լիովին փակված է հակահրթիռային պաշտպանությամբ, այսինքն իրանական տեղ հասած հրթիռների մեծամասնությունը նաև կարող է խոցվել մինչև 30 կմ բարձրության և 100 կմ հեռավորության վրա: Նրանք ի վիճակի են խոցել մինչև հարյուր հրթիռներ, որոնց կարող են հայտնաբերել արդեն արձակման պահից:

Եթե պատերազմի դրոշակակիրը լինի ԱՄՆ-ն, ապա պայմանները լիովին կփոխվեն: Ամեն ինչ ավելի վատ ընթացք կունենա Իրանի համար: Ամերիկյան նավատորմը տարածաշրջանում կարող է կուտակել 5-րդ և 6-րդ նավատորմի մինչև 4-5 ավիակիրային խումբ, որը նշանակում է մոտ 400 մարտական թռչող սարք և մոտ 50-60 տարատեսակ ժամանակակից նավ, որոնց վրա կարող են լինել նաև մինչև 1000-1200 «BGM-109 Tomahawk» տեսակի թևավոր հրթիռներ: ԱՄՆ-ն տարածաշրջանի շատ երկրներում ունի ռազմաբազաներ: Բահրեյնում է գտնվում ամերիկյան 5-րդ նավատորմի գլխավոր կայանատեղը, Սաուդյան Արաբիայում է գտնվում օդատիեզերական ռազմագործողությունների տարածաշրջանային կառավարման կենտրոնը: Այս բազաներում ԱՄՆ-ն կարող է առավելագույնը 48 ժամում կուտակել մինչև 2000 մարտական ինքնաթիռներ և նույնքան թևավոր հրթիռներ: Էլ չենք նշում ամերիկյան B-1, B-2 և B-52 ռմաբակծիչների մասին, որոնք հարվածներին կարող են մասնակցել ԱՄՆ-ից կամ Հնդկական օվկիանոսի Դիեգո-Գարսիա ռազմաբազայից: ԱՄՆ-ին այս գործողությունների ժամանակ կարող են միանալ նաև այլ դաշնակիցներ, ինչից հարաբերակցությունը շատ չի փոխվի: Նման ուժերի համար արդեն իրանական մոտ 100 կարևորագույն թիրախները կխոցվեն ավելի հեշտությամբ: Խնդիր չեն լինի նաև խորը գետնի տակ տեղակայված բազաները, որոնք ռմաբակծվում են հատուկ խորքային և գերծանր ուռմբերով: Իրանը տեսականորեն Հորմուզի նեղուցը փակելու հնարավորություն ունի, սակայն եթե հաշվի առնենք, որ ամերիկյան նավատորմն արդեն այս-

տեղ ներկայություն ունի, դա գրեթե անհնար է: Որոշ փորձագետներ պնդում են, որ ամերիկյան «Nimitz» դասի ավիակիրներն իրենց մոտ 300 մ երկարությամբ մեծ են և նման փոքր նեղուցում խուսանավել չեն կարող, հետևաբար սահմանափակ գործողությունների են ընդունակ: Սա չի համապատասխանում իրականությանը. նախ Հորմուզի նեղուցը բավականին մեծ է, հետո նման նավերը հիմնականում շարժվելու կարիք չունեն, իսկ ուղեկցող նավերը՝ հաճախակի, ականակիրները, ֆրեգատները և սուզանավերը, քանակական և տեխնիկական այնպիսի գերազանցություն կարող են ապահովել, որ իրանական նավատորմի գործողությունները, մեղմ ասած, կչեզոքացվեն: Խոսվում է նաև իրանական սուզանավերով ամերիկյան ավիակիրները խորտակելու մասին: Անգամ 533 մմ-ոց տորպեդների մի քանի հարվածներով նման նավերին հնարավոր չէ խորտակել<sup>6</sup>: Մենք չենք ցնցոցիք, որ միևնույն է, այստեղ ևս գլխավոր դերակատարն օդուժն է ինչելու, իսկ տվյալ դեպքում համեմատություններն ավելորդ են:

Իհարկե, նման ուժերով օդածովային հարվածներին Իրանն աղեկվատ ոչինչ գրեթե չի կարող հակադրել, այդպես է եղել Իրաքում, Աֆղանստանում, Հարավսլավիայում և այլն: Նման գործողությունները կարող են տևել մի քանի օրվանից մինչև մեկ-երկու ամիս: Սակայն առաջին անգամ այս կայծակնային ու ճշգրիտ հարվածները կարող են վերաճել այլ պատերազմի, որը, անկախ ԱՄՆ-ի կամ Իսրայելի կամքից, կտեղափոխվի տարածաշափաղան այլ հարթություններ:

Պատասխան գործողությունները կարող են լինել շատ ցավոտ տարածաշրջանի, ինչպես նաև համաշխարհային տնտեսության համար: Եթե Իսրայելին մասսայական հրթիռային հարված հասցնելը ղժվար խնդիր է, ապա անմիջական հարևան երկրներին նման հարված հասցնելը մեծ բարդություն չէ, քանի որ Իրանը ունի մինչև 500 կմ հեռահարության «Շահաբ-2» և այլ հրթիռների մեծ քանակ<sup>7</sup>: Մենք արդեն նշել ենք, որ Իրանը ի վիճակի է լրջորեն նպաստելու սառնեցված կամ նոր տեղային խնդիրների վերակսմանը (Քրդական խնդիր, Արցախյան հիմնախնդիր և

այլն): Սակայն ամեն ինչ կարող է լինել շատ ավելի ծանր: Մասնավորապես պետք է հաշվի առնենք, որ Իրաքը, Պակիստանը և Աֆղանստանը մեծ սահմաններ ունեն Իրանի հետ: Չի բացառվում, որ այդ երկրներում Իրանի անմիջական ներգրավվածությամբ սկսվեն մեծածավալ մարտական գործողություններ, անգամ կարող է լինել իրանական բանակի ներխուժում: Չնոռանանք, որ բանակն առաջնային ռեզերվի հետ միասին կազմում է մոտ 1 մլն զորք, իսկ Բասիջ և այլ ստորաբաժանումներում կան տասնյակ հազարավոր նվիրյալ մահապարտներ: Պայթյունների միջոցով մահապարտները կարող են ապակայունացնել ողջ տարածաշրջանը, որտեղ կենտրոնացած է աշխարհի նավթագազային պաշարների զգալի մասը: Հորմուզի նեղուցում Իրանի համար ռազմական տեսանկյունից ամենաանպատասխան գործողություններն անգամ դադարեցնելու են նավթահանումը այդ տարածքով: Պատերազմը նաև կարող է վերածվել մեծագույն էկոլոգիական աղետի. նման փորձ արդեն կա:

Այս պատերազմի դեպքում ակամայից բոլոր հարևան երկրներն էլ կարող են հայտնվել հարվածի տակ: Այդ հարցը չի կարող չանհանգստացնել տարածաշրջանի երկրներին, այդ թվում նաև մեզ: Իրանի հարավային հարևանները, որոնք լավ հարաբերություններ ունեն ԱՄՆ-ի հետ, այս մասին վաղուց են մտածել: Պատահական չէին Սաուդյան Արաբիայի կողմից ամերիկյան ՀՕՊ և հակահրթիռային պաշտպանության մեծաքանակ Patriot և THAAD համալիրների ձեռքբերումները: Այս համատեքստում է նաև հարկավոր դիտարկել Ադրբեջանի կողմից երկու՝ «С-300 ПМУ-2» համալիրների ձեռքբերումը: Սակայն ամենահետաքրքիրը Ռուսաստանի և Միջինասիական երկրների քայլերն են: ՌԴ-ն ակտիվորեն ուժեղացնում է իր կասպիական նավատորմը, այդ քայլերին են դասվում նման փակ ծովի համար բավականին հզոր և մեծ «Татарстан» և «Дагестан» հրթիռային նավերի ներմուծումը: Կասպից ծովի համար չափազանց հզոր է նաև ափամերձ պաշտպանության «Бастион» համակարգը, որի «Яхонт» հականավային հրթիռները կարող են արձակվել ողջ ծովի երկայնքով ու լայնքով: Հատուկ նշենք, որ նման հրթիռային համակարգերի կարիք Ռուսաստանը շատ տեղերում ունի, սակայն դրանք շատ սակավ են: Ոչ մի ծովում կամ օվկիանոսում ոռուսական նավատորմերը նորագույն զենքերի նման քանակ չեն ստանում:

<sup>6</sup> Чем похожи намикадзе и П-700 "Гранит"?, 30. 01. 2012, <http://topwar.ru/10606-schem-pohozhi-namikadze-i-p-700-granit.html>.

<sup>7</sup> Anthony H. Cordesman, Khalid R. Al-Rodhan, The Gulf Military Forces in an Era of Asymmetric War Iran. June 28, 2006. Washington, DC. Center for Strategic and International Studies Arleigh A. Burke Chair in Strategy.



Հետաքրքիր են նաև 2011 թ. սեպտեմբերին ՌԴ-ի, Ղազախստանի, Տաջիկստանի և Ղրղըզստանի կողմից անցկացված համատեղ «ԱԷԽՐ-2011» զորավարժությունները: Այս զորավարժությունների ժամանակ հետ մղվեց մերձկասպյան հարավարևելյան հատվածի վրա պայմանական հակառակորդի ծովային և ցամաքային հարձակումը: ՌԴ-ն զգուշանում է Իրանի շուրջ ստեղծված իրադրությունից և դաշնակիցների հետ միասին պատրաստվում է անցանկալի զարգացումների, իսկ Իրանը չի թաքցնում, որ պատերազմի դեպքում կարող է դիմել կտրուկ քայլերի և զգալիորեն ապակայունացնել տարածաշրջանը: Երբ բոլորը նշում են, որ Իրանին հաղթելը հեշտ չէ, իհարկե, խոսքը նոր սերնդի արագ պատերազմներին դիմակայելու մասին չէ: Սակայն Իրանը շատ մեծ ներուժ ունի՝ խառնելու աշխարհի հզորների խաղաքարտերը:

## **ԹՈՒՐԷԻԱՅՈՒՄ ԵԱՏՕ-Ի ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐԶ**

**ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ ՆԱՏՕ-Ի ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀՀՊ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԱԴԻՈՏԵՂՈՐՈՇԻՉ ԿԱՅԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

2010 թ. նոյեմբերի 19-20-ը Լիսաբոնում կայացած ՆԱՏՕ-ի գագաթնաժողովում ընդունվեց դաշինքի նոր ռազմավարական հայեցակարգը, որով հավանություն տրվեց ՆԱՏՕ-ի եվրոպական միասնական հակահրթիռային պաշտպանության (այսուհետ՝ ՀՀՊ) համակարգի ստեղծմանը<sup>1</sup>: Չնայած իր առաջ քաշված նախապայմաններին՝ Թուրքիան հավանություն տվեց և միացավ այդ ծրագրին: Իսկ նախապայմանների առաջադրումն ուղղակի մարտավարական հնարք էր, որով Թուրքիան փորձում էր մեծ հաշվով մեղմել հատկապես իրանական կողմի անհանգստությունն ու ի ցույց դնել տարածաշրջանային գործընթացներում իր «հետևողականությունը»: Այս առումով բավական հետաքրքիր էր փետրվարին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոզ Ռասմուսսենի հարցազրույցներից մեկում կատարած այն հայտարարությունը, որ Թուրքիան ինքն է ցանկացել, որ ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության (այսուհետ՝ ՀՀՊ) տարրեր տեղակայվեն իր տարածքում<sup>2</sup>:

2011 թ. սեպտեմբերի 2-ին Թուրքիայի ԱԳՆ-ն տարածեց հաղորդագրություն այն մասին, որ Թուրքիայի տարածքում նախատեսվում է տեղակայել ՆԱՏՕ-ի ՀՀՊ ռադիոտեղորոշիչ կայան (այսուհետ՝ ՌՏԿ)<sup>3</sup>: Սեպտեմբերի 14-ին Թուրքիան ու ԱՄՆ-ն

<sup>1</sup> Missile Defense and NATO's Lisbon Summit, <http://fpc.state.gov/documents/organization/154176.pdf>.

<sup>2</sup> Füze kalkanını Türkiye istemiş!, Radikal, 11.02.2012.

<sup>3</sup> NATO, Türkiye'ye radar kuracak, <http://www.cnnturk.com/2011/turkiye/09/02/nato-turkiyeye.radar.kuracak/627953.0/index.html>.



ստորագրեցին հուշագիր թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման մասին<sup>4</sup>: Թուրքական ՋԼՄ-ների համաձայն՝ 2011 թ. վերջին արդեն ՌՏԿ-ն տեղակայվել է Քյուրեջիքում և 2012 թ. հունվարից սկսել գործել<sup>5</sup>:

ՆԱՏՕ-ի եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի մաս կազմելը վերջին տարիների ՆԱՏՕ-Թուրքիա ռազմաքաղաքական համագործակցության ամենակարևոր և էական քայլերից էր: Թուրքիայի միանալն այդ համակարգին և նրա համաձայնությունն իր տարածքում տեղակայելու ռադիոտեղորոշիչ կայան, կարելի է համարել վերջին 10 տարվա ժամանակահատվածում ամենակարևոր զարգացումը: Հարկ է նկատել, որ վերջին տարիներին ինչպես ՆԱՏՕ—Թուրքիա համագործակցությունը, այնպես էլ ԱՄՆ—Թուրքիա հարաբերությունները թևակոխել էին որոշակի անվտանգության հարթություն: Հատկապես ՆԱՏՕ-ի ու Անկարայի միջև հարաբերությունների խաթարման առումով էական դարձավ իրաքյան պատերազմը, երբ 2003 թ. մարտին Թուրքիան մերժեց ՆԱՏՕ-ին՝ իր տարածքն օգտագործել Իրաքի դեմ պատերազմում: 2003 թ. հուլիսին Իրաքի Սուլեյմանիյա քաղաքում ամերիկյան ուժերի կողմից թուրքական հատուկ նշանակության ուժերի 11 զինծառայողների կալանավորման դեպքը Թուրքիայի ԶՈՒ ԳՇ պետ Հ. Օզքյոքը բնորոշեց որպես թուրքական և ամերիկյան ԶՈՒ-ի միջև վստահության ճգնաժամ՝ նշելով, որ չի կարծում, թե դա ուղղակի տեղային մի միջադեպ է: Այդ իրադարձությունները, չնայած կային ավելի խորքային պատճառներ, շրջադարձային էին ինչպես թուրք-ամերիկյան հարաբերությունների, այնպես էլ թուրքական ռազմաքաղաքական դեկադարության նոր ռազմաքաղաքական հայեցակարգի ու մոտեցումների որդեգրման առումով: 2008 թ. օգոստոսի վրաց-ռուսական պատերազմից հետո թուրքական կողմը մերժեց ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի ռազմածովային ուժերին վրաստանին մարդասիրական օգնություն տրամադրելու նպատակով սնծովյան նեղուցներով Սև ծով մտնել:

Տարբեր փորձագետներ ու վերլուծաբաններ, իրենց ուսումնասիրություններում վերջին տարիների Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության հետ կապված, նշել են, որ Անկա-

րայի ռազմաքաղաքական շահերն այլևս չեն համընկնում ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ՆԱՏՕ-ի հետ: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը միտված էր որոշակիորեն հավասարակշռելու ՆԱՏՕ-ի հետ իր հարաբերություններն՝ այլ ուժային կենտրոնների հետ հարաբերությունների զարգացմամբ:

Լիսաբոնյան գագաթնաժողովն ու եվրոպական ՀՀՊ համակարգին Թուրքիայի միանալը ցույց տվեցին, որ չնայած Անկարայի անկախ արտաքին քաղաքականության փորձերին, այդ երկիրը դեռևս գտնվում է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական ազդեցության տակ և, համեմատյալ դեպք, չի կարող էականորեն շեղվել նրանց իսկ ռազմաքաղաքական ուղեգծից: Ակնհայտ է, որ այս քայլով Թուրքիան մի շարք կարևոր «փոխհատուցումներ» է ստացել նրանցից: Անկարան իր անմտյան դաշնակիցներին հասկացրել է, որ եվրոպական ՀՀՊ-ին միանալով, կարող է լուրջ խնդիրներ ունենալ Ռուսաստանի ու հատկապես Իրանի հետ, այդ համատեքստում գնում է «բավական վտանգավոր քայլի», ուստի դրա դիմաց պետք է Թուրքիան փոխհատուցվի: Վերջին ամիսների թուրք-ամերիկյան հարաբերությունների դինամիկան, մերձավորարևելյան տարածաշրջանում թուրքական ակտիվությունը վկայում են այն մասին, որ Թուրքիան Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի կողմից ստացել է գործողությունների որոշակի ազատություն: Եթե դիտարկում ենք վերջին շրջանում Թուրքիայի գերակտիվությունը՝ նրա ներգրավվածությունը մերձավորարևելյան զարգացումներում, նկատում ենք, որ Թուրքիայի հիմնական նպատակը Մերձավոր Արևելքում որոշում կայացնող տերության կարգավիճակի ձեռքբերումն է: Իր հետապնդած շահերն ու նպատակները Թուրքիան փորձում է զուգորդել Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի շահերի հետ՝ մինևույն ժամանակ փորձելով օգտագործել տարածաշրջանում վերջիններին լծակները: Որոշակի լծակներ, թելադրանքներ կամ հավանություններ ստանալով Արևմուտքից՝ Թուրքիան փորձում է առաջ տանել իր աշխարհաքաղաքական խաղը:

Թուրքիան, իր տարածքում ՀՀՊ ՌՏԿ-ի տեղակայման հետ կապված, դժվարին կացության մեջ հայտնվեց Վաշինգտոն—Մոսկվա—Թեհրան եռանկյունու հետ իր հարաբերություններում: Այն փորձում է խուսաձակել այդ հարաբերություններում: Չնայած թուրքական իշխանությունների հավաստիացումներին՝ ակնհայտ է, որ այդ համակարգերն առաջին հերթին պայմա-

<sup>4</sup> Turkey, US sign agreement on NATO radar deployment, <http://www.todayszaman.com/news-256744-turkey-us-sign-agreement-on-nato-radar-deployment.html>

<sup>5</sup> NATO radar system in Turkey up, running, <http://www.hurriyetdailynews.com/nato-radar-system-in-turkey-up-running.aspx?PageID=238&NID=11474&NewsCatID=338>

նավորված են իրանական գործոնով, քանի որ այլ հավանական սպառնալիք այդ առումով չկա: Ռուսական և իրանական կողմերն արդեն հայտնել են իրենց անհանգստությունները, և Թուրքիան ստիպված է քացատրություններ ու հստակ երաշխիքներ տալ, սակայն դժվար թե Անկարան համոզի կարող է լինել: Պատահական չէ նաև այն, որ իրանական կողմի պաշտոնական հայտարարություններից հետո թուրք-իրանական սահմանին նախաձեռնվել են լայնամասշտաբ ռազմաօդային զորավարժություններ, ինչը կարելի է դիտարկել որպես Իրանի անհանգստության ու զգոնության ուղերձի դրսևորում: Այնուամենայն է, որ Թուրքիան Իրանի համար տարածաշրջանում չի հանդիսանում վստահելի գործընկեր, իսկ ռուս-թուրքական հարաբերությունները պայմանավորված են առավելապես տնտեսական շահերով, որոնց հարաբերություններում կան խորքային հակասություններ ու աշխարհաքաղաքական մրցակցություն: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է և, չնայած այդ երկրի ռազմաքաղաքական ինքնուրույնության փորձերին, այդ երկիրը դեռևս գտնվում է Արևմուտքի ռազմաքաղաքական ազդեցության տակ և էապես չի կարող շեղվել դրանից:

ՆԱՏՕ-ի ՀՀՊ համակարգին միանալուց և հատկապես թուրքական տարածքում ՌՏԿ-ի տեղակայման համաձայնությունից հետո թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունը որոշակի զարգացման միտումներ սկսեց ցույց տալ: Թուրքիան դեռևս ռազմական տեխնոլոգիաների ու սպառազինության ձեռքբերման հարցում զգալիորեն կախված է ԱՄՆ-ից, ուստի թուրքական կողմը ամերիկյան նոր սպառազինության ձեռքբերման խնդիրներ բարձրացրեց:

Արդեն իսկ հոկտեմբերին թուրքական ՋԼՄ-ներում հայտնվեցին տեղեկություններ, որ Թուրքիան մի քանի կարևորագույն սպառազինության տեսակների հարցով դիմել է ԱՄՆ-ին: Ըստ «Hurriyet Daily News»-ի՝ Թուրքիայի տարածքում ՆԱՏՕ-ի միասնական հակահրթիռային պաշտպանության համակարգի՝ ՌՏԿ-ի տեղակայումը նոր խթան կհանդիսանա Թուրքիային արդիական սպառազինությամբ մատակարարելու համար: Դրա տեղակայման որոշումն սկսել է օգուտներ տալ Թուրքիային ժամանակակից ամերիկյան սպառազինության ձեռքբերման համար, և ԱՄՆ-ն այս համատեքստում խոստացել է այդ երկրին տալ արդիական «H-1W Super Cobra» ռազմական ուղղաթիռներ՝

ընդզինյալների դեմ պայքարի համար<sup>6</sup>: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանը սեպտեմբերի 30-ին հայտարարել էր, որ ամերիկյան կողմը համաձայնել է Թուրքիային փոխանցել 3 միավոր «Super Cobra» ռազմական ուղղաթիռ: Թուրքիայի մի շարք ռազմական վերլուծաբաններ համարել են, որ այդ քայլը որոշակի «պարզևտրություն» է Թուրքիային՝ իր տարածքում ՌՏԿ-ի տեղակայման որոշումն ընդունելու կապակցությամբ, սակայն համարում են, որ դա դեռևս շատ քիչ է՝ համեմատած Թուրքիայի ռիսկերի հետ: Նրանք ակնկալում էին, որ ամերիկյան կողմն ավելի «արդյունավետ» քայլեր իրականացնի ժամանակակից ռազմական տեխնիկայի մատակարարման առումով:

Սեպտեմբերին ամերիկյան «The Washington Post» պարբերականը գրեց, որ ԱՄՆ-ի վարչակազմը ըննարկում է Թուրքիային կիրառման նպատակով ամերիկյան «Predator» անօդաչու թռչող սարքերի տրամադրման հարցը՝ ՔՔԿ-ի զինյալների դեմ պայքարում՝ նշելով, որ Թուրքիան ներկայում ամենաշատը հենց նման համակարգերի կարիքն ունի<sup>7</sup>: Արդեն նոյեմբերին թուրքական ՋԼՄ-ները տեղեկատվություն տարածեցին, որ 4 միավոր «Predator» ԱԹՄ-ները Իրաքից փոխադրվել են Թուրքիա՝ տեղակայվելով Ինչիրլիքի ռազմաքաղաքում: Ըստ ամերիկյան ու թուրքական ՋԼՄ-ների՝ Թուրքիան ցանկանում է ԱՄՆ-ից ձեռք բերել նաև «Reaper» ժամանակակից հարվածային ԱԹՄ-ներ, որոնք իրենց հնարավորություններով ու սպառազինվածությամբ զգալիորեն գերազանցում են «Predator»-ներին:

Նոյեմբերին հայտնի դարձավ, որ ԱՄՆ-ն համաձայնել է Թուրքիային փոխանցել «F-16» ռազմական ինքնաթիռների ծրագրային ապահովման ծածկագրերը, ինչն աննախադեպ քայլ էր, քանի որ ԱՄՆ-ն մինչև օրս ոչ մի երկրի չի տրամադրել դրանք<sup>8</sup>: Թուրքական կողմը սրանով իսկ հնարավորություն է ստանում իր ՌՕՈՒ-ի «F-16» ինքնաթիռներին ինքնուրույն հարմարեցնելու սեփական արտադրության սպառազինությունն ու կրակի կառավարման համակարգերը, և հենց այդ գործում էլ կներգրավվի թուրքական «Aselsan» ռազմաարդյունաբերական ընկերությունը:

<sup>6</sup> Radar deal triggers benefits in weaponry for Turkey, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=radar-deal-triggers-benefits-in-weaponry-for-turkey-2011-10-09>

<sup>7</sup> U.S. considering Ankara's request to base Predators in Turkey to fight a Kurdish group in northern Iraq, [http://www.washingtonpost.com/world/national-security/us-considering-ankaras-request-to-base-predators-in-turkey-to-fight-a-kurdish-group-in-northern-iraq/2011/09/09/gJQASR1fK\\_story.html](http://www.washingtonpost.com/world/national-security/us-considering-ankaras-request-to-base-predators-in-turkey-to-fight-a-kurdish-group-in-northern-iraq/2011/09/09/gJQASR1fK_story.html)

<sup>8</sup> 'Predator'lar görecek ama vurmayacak, Radikal, 15. 11. 2011

<sup>9</sup> F-16 kodlari Türkiye'ye verilecek, Bugün, 13. 11. 2011



Բացի այդ՝ թուրքական կողմը կարող է արդեն ստանձնել այլ երկրների վերոնշյալ ինքնաթիռների արդիականացման գործը, ինչպես, օրինակ՝ Պակիստանի:

Վերջին շրջանում ԱՄՆ-ի կողմից ժամանակակից սպառազինության մատակարարումն ու ռազմական համագործակցության զարգացման միտումներն առաջին հերթին Թուրքիայի տարածքում ռադարի տեղակայման համաձայնության «պարզևատրում էր» թուրքական կողմին:

Ռազմական առումով Թուրքիայի տարածքում նման գեր-ժամանակակից ՌՏԿ-ի տեղակայումը նաև Թուրքիայի պաշտպանական հնարավորությունների մեծացմանն ուղղված քայլ է: Թուրքական ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ նշված էր, որ այդ համակարգի տեղակայումը նպաստելու է ինչպես Հյուսիսատլանտյան դաշինքի, այնպես էլ ազգային պաշտպանական համակարգի հզորացմանը: Մինչև հիմա թուրքական բանակում մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության հակաօդային պաշտպանության (այսուհետ՝ ՀՕՊ) և ՀՀՊ համալիրներ: Ներկայումս Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության «Rapier», «Stinger», սեփական արտադրության Atilgan, միջին հեռահարության արդիականացված «I-Hawk», «Nike Hercules» ՁՀՀ-ները<sup>10</sup>: Սեփական ՀՕՊ հեռահար համակարգի ստեղծման ուղղությամբ 2006 թ. հունիսին վարչապետ Ռ. Թ. Էրդողանի նախագահությամբ գումարված Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց երկրի ՀՕՊ-ն ուժեղացնելու համար սկսել արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը: Թեև դեռևս վերջնական որոշում չի կայացվել, այդուհանդերձ արդեն ակնհայտ է, որ ռուսական կամ չինական համալիրների ձեռքբերումը Թուրքիայի կողմից քիչ հավանական է, քանի որ նաև տեխնիկական մասով ինտեգրացված դաշտում գործելու հետ կապված խնդիրներ կառաջանան: Թուրքիան արդեն իսկ չի կարող անտեսել ամերիկյան համալիրները, և Թուրքիայի տարածքում ՌՏԿ-ի տեղակայումից հետո, ամենայն հավանականությամբ, թուրքական ընտրությունը կկանգնի հենց ամերիկյան տարբերակների վրա: Բացի այդ՝ առկա է նաև քաղաքական գործոնը: Դեռևս հուլիսին թուրքական ՋԼՄ-ները տեղեկատվություն հրապարակեցին, որ ՆԱՏՕ-ն զգուշացրել է Թուրքիային՝

ձեռնպահ մնալ ռուսական կամ չինական համալիրների ձեռքբերումից, հակառակ պարագայում՝ ՆԱՏՕ-ն կխուսափի Թուրքիայի հետ կիսել բախտիկ հրթիռների հետ կապված հետախուզությունը, եթե վերջինս սեփական հակաօդային ու հակահրթիռային պաշտպանության համար ընտրություն կատարի ռուսական կամ չինական համակարգերի միջև<sup>11</sup>: Արևմուտքի մի շարք պաշտոնյաներ ու փորձագետներ նշում են, որ ռուսական կամ չինական ՀՕՊ համալիրներն անհամատեղելի են ՆԱՏՕ-ի համակարգի հետ, ուստի նրանք կգործեն առանձին և չեն միացվել ՆԱՏՕ-ի միասնական համակարգին: Չնայած Արևմուտքի հորդորներին ու նաև ճնշումներին՝ Թուրքիան հրաժարվել է սեփական ՀՕՊ համակարգի համար հայտարարված մրցույթից հանել ռուսական ու չինական ընկերություններին:

Թուրքիայում տեղակայված «AN/TPY-2» ՌՏԿ-ն ունի է 2000 կմ դիտարկման շառավիղ և հնարավորություն ունի վերահսկելու ինչպես Թուրքիայի ողջ տարածքը, Իրանի տարածքի զգալի մասը, այնպես էլ Հարավային Կովկասը, Ռուսաստանի հարավային շրջանները, Կենտրոնական Ասիայի արևմտյան հատվածը, Մերձավոր Արևելքի մի որոշ հատվածը: Այն կարող է իրականացնել հետախուզում, տեղորոշում և տեղեկատվության փոխանցում ՀՀՊ այլ բաղադրիչների: Մալաթիայի Քյուրեջիջ շրջանում տեղակայված ՌՏԿ-ն իրանական սահմանից գտնվում է մոտ 500-600 կմ հեռավորության վրա: Իրանը ներկայում իր սպառազինության մեջ ունի մեծ քանակությամբ օպերատիվ-մարտավարական հրթիռներ, որոնք կարող են հասնել մինչև Մալաթիա և Դիարբեքիր: Դիարբեքիրում են տեղակայված թուրքական ՌՕՈՒ-ի 2-րդ մարտավարական հրամանատարությունը և խոշոր ավիացիոն ռազմաբազան: Իրանի նկատմամբ ռազմական գործողությունների պարագայում առաջնային հրթիռային հարվածի տակ են հայտնվելու Պարսից ծոցում, Թուրքիայում և արաբական մի շարք երկրներում գտնվող ամերիկյան ռազմաբազաներն ու ռազմական ենթակառուցվածքները: Թուրքիայի տարածքում գտնվող ՌՏԿ-ն Իրանի կողմից ռազմական հակահարվածի առաջնային թիրախներից է դառնալու: Թուրք փորձագետները այս առումով նշել են, որ Իրանի կողմից խմբային հրթիռարձակումների պարագայում բավական դժվար կլինի որսալ բոլորը, մասնավորապես հաշվի առնելով

<sup>10</sup> The Military Balance 2009, IISS, Published by Routledge, London 2009, pp. 155-157.

<sup>11</sup> NATO warns Turkey against buying Chinese, Russian air defense systems, http://www.hurriyetdailynews.com/n.php?n=nato-warns-turkey-against-buying-chinese-russian-air-defense-systems-2011-07-25

այն, որ կալանիչ հրթիռները տեղակայվելու են հիմնականում միջերկրածովյան շրջանում:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող եք փաստել, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի կարևոր անդամներից է և դաշինքի կողմից դեռևս կարևորվում է այդ երկրի աշխարհաքաղաքական նշանակությունը: ՆԱՏՕ-ի ՀՀՊ ծրագրին մաս կազմելն ու իր տարածքում ՌՏԿ համակարգի տեղակայումը կբարձրացնեն Թուրքիայի ռազմաքաղաքական նշանակությունը թե՛ դաշինքի և թե՛ ԱՄՆ-ի համար: Բացի այդ՝ այսուհետ թուրք-ամերիկյան ռազմական համագործակցությունն ավելի կգարգանա, և Թուրքիան կօգտվի ամերիկյան նորագույն սպառազինության մատակարարումներից: Այս գործարքով Թուրքիան իր տարածաշրջանային քաղաքականության մեջ ստացել է ռազմաքաղաքական հավակնությունների իրագործման ու գործողությունների որոշակի «ազատություն»:

ԳՐԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

### ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՌՏԿ-Ի ՀԱՐՑՈՒՄ

Պետություններն իրենց անվտանգ են զգում, երբ գոնե ապահովում են իրենց թվացյալ անվտանգությունը:

1946 թ. սկսված սառը պատերազմը 1990 թ. կարծես թե ավարտվեց, սակայն վստահաբար կարելի է փաստել, որ այն պարզապես վերափոխվեց: 1949 թ. ստեղծված ՆԱՏՕ-ն ուներ հստակ առաքելություն՝ պայքարել ԽՍՀՄ-ի ծավալապաշտական քաղաքականության դեմ ու քայքայել այն ներսից: Բայց ԽՍՀՄ-ի փլուզումն անգամ իրավիճակն էապես չփոխեց, այս դեպքում մրցակցության մեջ ներքաշվեց Ռուսաստանը:

1991 թ. դեկտեմբերին ԱՄՆ-ն և Ռուսաստանի Դաշնությունը վերանայելով իրենց նախկին քաղաքականությունը, ռազմական մրցավազքը դադարեցնելու վերաբերյալ որոշում կայացրին, այնուհետև պայմանագիր կնքվեց միջուկային զենքի քանակը կրճատելու մասին: Սակայն Միացյալ Նահանգները չշտապեց իրականացնել իր խոստումը: Ավելին, օգտվելով աշխարհի միաբևեռ լինելուց, վերջին 10-15 տարում ստեղծեց ռազմական այնպիսի զինանոց, ինչը առաջ մղեց նրան՝ հետևում թողնելով աշխարհի մյուս գերտերություններին:

Բայց Ռուսաստանը դեռ ունի զենքի մի շարք տեսակներ ու այնպիսի քանակ, որ անհանգստացնում է ԱՄՆ-ին և ողջ եվրոպային: Այդ կապակցությամբ արևմտյան տերությունները որոշեցին Ռուսաստանի Դաշնության հարևանությամբ ստեղծել հակաօդային պաշտպանության վահան, որը հնարավորություն կտա տեղորոշելու Ռուսաստանից դուրս եկող հրթիռները և ընդհանրապես Ռուսաստանում իրականացվող շարժերը: Այս ծրագրերը դեռևս քննարկվում էին 1990-ականների վերջերին, ըստ որի՝ այդ կայանները պետք է հսկեին ռազմավարական կարևոր օբյեկտները, իսկ 2002 թ. աշխատանքներ իրականացվեցին, որպեսզի կարողանան պաշտպանել նաև բնակելի տարածքները:



21-րդ դարի առաջին տասնամյակում սկսվեցին այդ կայանների տեղադրման վայրերի քննարկումը, պայմանագրերի ստորագրումը: Այնպիսի տպավորություն էր, որ Ռուսաստանի հարևան երկրները, որոնք ՆԱՏՕ-ի անդամ են, «մրցավազքի» մեջ էին մտել, թե որ երկրին նախապատվությունը կտրվի: Նրանց նման ձգտումը բացատրելի էր. որտեղ կտեղադրվեր կայանը, այդ երկիրը կստանար իրական աջակցություն թե՛ ՆԱՏՕ-ից, թե՛ ԱՄՆ-ից և առավել պաշտպանված կզգար հնարավոր վտանգների դեպքում:

2008 թ. հուլիսի 8-ին Պրահայում Չեխիայի և ԱՄՆ-ի արտգործնախարարների միջև ստորագրվեց պայմանագիր, ըստ որի՝ այդ տարածքում պետք է տեղադրվեր Հակահրթիռային պաշտպանության կայան<sup>1</sup>, իսկ օգոստոսի 20-ին Վաշինգտոնում ստորագրվեց Լեհաստանի և ԱՄՆ-ի միջև Հակահրթիռային պաշտպանության կայանի հիմնարար պայմանագիրը<sup>2</sup>: 2009 թ. սեպտեմբերի 17-ին հակահրթիռային պաշտպանության կայանների նոր ճարտարապետության մասին արդեն խոսեց ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման<sup>3</sup>: Հատկանշական է, որ Օբաման «հակահրթիռային պաշտպանության կայանների նոր ճարտարապետության մասին» խոսելիս հիմնական շեշտը դնում էր Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող վտանգի վրա. «Նախագահ Քուլը իրավացի էր, որ Իրանի բախտիկ հրթիռների ծրագիրը վտանգավոր բնույթ է ստանում: Ահա դրա համար է, որ ես կարգադրել եմ ծավալել ուժեղ պաշտպանական համակարգ, որը հեշտորեն ադապտացիայի կենթարկի 21-րդ դարի վտանգները»<sup>4</sup>:

Չենք կիսում ինչպես Ջ. Քուլ Կրոսերի, այնպես էլ Բարաք Օբամայի Իրանի բախտիկ հրթիռների վերաբերյալ կարծիքները: Իրականում կարծում ենք, որ ԱՄՆ-ում շատ լավ պատկերացնում են, որ Իրանի հրթիռաշինությունը այն մակարդակին չի հասել և մոտակա ժամանակներս էլ դժվար թե հասնի, որ վտանգ ներկայացնի Եվրոպայի համար, էլ չենք խոսում Միացյալ Նա-

հանգների մասին: Սա պարզապես մի առիթ է, որպեսզի սըղոնն իրենց իրական նպատակները, այն է՝ Ռուսաստանը բոլոր կողմերից շրջափակել հակահրթիռային կայաններով:

2010 թ. նոյեմբերին Լիսաբոնում տեղի ունեցած ՆԱՏՕ գազաթանժողովի ժամանակ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ղեկավարները որոշեցին տեղի դեղին հակահրթիռային պաշտպանության ներքո, որի նպատակը կլինի կոլեկտիվ անվտանգության ապահովում<sup>5</sup>: Այսպես արդեն 2011 թ. սեպտեմբերի 13-ին Ռումինիայի արտգործնախարար Թեոդոր Բակոնսկին և ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Վաշինգտոնում ստորագրեցին պայմանագիր, ըստ որի՝ Ռումինիայի տարածքում պետք է տեղադրվի հակահրթիռային պաշտպանության կայան<sup>6</sup>:

Այս ճարտարապետության տրամաբանական շարունակությունը պետք է լիներ նաև Ռուսաստանի հարավում ևս նման կայանի տեղադրումը: Լիսաբոնյան գազաթանժողովի ժամանակ վճռվեց Թուրքիայում տեղադրել հակահրթիռային պաշտպանության կայան: Սա մեծ դժգոհություն առաջացրեց ինչպես Իրանում, այնպես էլ Ռուսաստանում:

2011 թ. «AN/TPY-2» կայանը վճռվեց տեղադրել Մալթոյա նահանգի Քյուրեջիք գյուղում, որը Իրանից գտնվում է 550 կմ հեռավորության վրա: Հատկանշական է, որ Թուրքիան պնդեց, որպեսզի իր տարածքում տեղակայվելիք ՀՀՊ ՌՏԿ-ի կայանի տեղադրման վերջնական պայմանագրում չնշվի կոնկրետ երկրից եկող վտանգի մասին. այս դեպքում, կարծում ենք, Թուրքիան փորձեց հարվածի տակ չդնել ինչ թուրք-իրանական և ինչ էլ առավել ևս թուրք-ռուսական անլա հարաբերությունները: Սա այն դեպքում, երբ Ա էրդողանը, Ա Դավութթոլուն բազմիցս խոստացել են, որ իրենց տարածքից ոչ մի տեսակի սպառնալիք չի լինի հարևան երկրներին:

Իրանի Իսլամական Հանրապետությունը բավական սուր արձագանքեց Թուրքիայի տարածքում տեղակայվող ՀՀՊ ՌՏԿ-ին, և ինչեցին մի շարք կոշտ հայտարարություններ:

Հեղափոխական գվարդիայի գերագույն իրամանատարը հայտարարեց, որ Իսլամական Հանրապետությունը կզրոհի Թուրքիայի տարածքում տեղադրվելիք ՀՀՊ կայանի վրա, եթե ԱՄՆ-ն

<sup>1</sup> Czechs and US sign missile defence system agreement, The Telegraph, 19 Sep 2008, <http://www.telegraph.co.uk/news/worldnews/europe/czechrepublic/2990578/Czechs-and-US-sign-missile-defence-system-agreement.html>

<sup>2</sup> Poland and US sign missile defence deal, The Guardian Wednesday 20 August 2008, <http://www.guardian.co.uk/world/2008/aug/20/poland-usa>

<sup>3</sup> The White House, Office of the Press Secretary, Remarks by the President on Strengthening Missile Defense in Europe, September 17, 2009, [http://www.whitehouse.gov/the\\_press\\_office/Remarks-by-the-President-on-Strengthening-Missile-Defense-in-Europe/](http://www.whitehouse.gov/the_press_office/Remarks-by-the-President-on-Strengthening-Missile-Defense-in-Europe/)

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Противоракетная оборона, Last updated: 17-Oct-2011, [http://www.nato.int/cps/ru/natolive/topics\\_49635.htm](http://www.nato.int/cps/ru/natolive/topics_49635.htm)

<sup>6</sup> Ballistic Missile Defense Agreement Between the United States of America and Romania, Fact Sheet Office of the Spokesperson, US Department of State, Washington, DC, September 13, 2011, <http://www.state.gov/r/pa/prs/ps/2011/09/172258.htm>

և Իսրայելը հարված են Իրանի ռազմավարական օբյեկտներին<sup>7</sup>: ԼՍԱՌ–ՏԱՍՍ–ի հաղորդմամբ՝ Մահմուդ Ահմադինեժադը հետազոտաթերթով հայտարարել է, որ «Այդ ռադարը նպատակ ունի պաշտպանելու սիոնիստական վարչակարգը: Իսրայելին անհրաժեշտ են երաշխիքներ Իրանի դեմ պատերազմական գործողությունների ժամանակ, որպեսզի մեր հրթիռները չհասնեն օկուպացված տարածքներ»<sup>8</sup>:

Հարկ է նշել, որ Իսրայելը նման սարք ձեռք էր բերել դեռևս 2008 թ. և կարող է հեշտությամբ իրականացնել իր անվտանգությունը:

Իրանը խիստ անհանգստացած է ստեղծված իրավիճակով և պաշտոնական մակարդակով մի շարք հայտարարություններ է արել: Անգամ հայտարարել է, որ, եթե, ի վերջո, ռադարը տեղակայվի Իրանի սահմանին, ապա Թուրքիան կարող է մոռանալ քրդական հարցում Իրանի աջակցության մասին<sup>9</sup>: Իսկ Քրդական շարժման մեջ նոր զարգացումներ են տեղի ունենում, նկատվում են PKK և PJAK–ի<sup>10</sup> միավորման միտումներ առանձին հարցերի նկատմամբ: Հատկանշական է, որ Իրանի ղեկավար շրջանակներում հնչեցին հայտարարություններ, ըստ որի՝ Իրանը լուծել է իր համար քրդական խնդիրը, իսկ Թուրքիայի համար այն դեռևս արդիական է, և եթե Թուրքիան շարունակի նման ոգով, ապա չի ստանա Իրանի աջակցությունն այս ոլորտում<sup>11</sup>:

2011 թ. նոյեմբերին Իսլամական հեղափոխության պահապան խորհրդի օդային ուժերի հրամանատար Ամիր Ալի Հաջիզադեն հայտարարեց. «Եթե մեզ սպառնան, առաջին նշանակետը կլինի Թուրքիայում տեղակայված ԼԱՏՕ–ի ՀՀՊ կայանը, հետո թիրախում կհայտնվեն այլ տարածքներ»<sup>12</sup>:

Ուշադրության են արժանի նաև իրանական մամուլում հայտնված այն նյութերը, ըստ որի՝ Իրանը, Ռուսաստանը և Չինաստանն ի պատասխան ԼԱՏՕ–ի այս քայլերի, որոշել են հա-

մատել կառուցել նմանատիպ հակահրթիռային պաշտպանական վահան: Սակայն այս տեղեկատվությունն արագ հերքվեց Ռուսաստանի կողմից: ԼԱՏՕ–ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Ռոզոզինը հայտարարեց, որ «հակահրթիռային վահանի ստեղծումը պահանջում է դաշնակցային հարաբերություններ: Իրանը մեր հարևանն է և գործընկերը, բայց նա մեր ռազմական դաշնակիցը չէ, քանի որ չի մտնում ՀԱՊԿ–ի մեջ»<sup>13</sup>:

Եզրակացնենք. կարծում ենք, որ վերոհիշյալ ՀՀՊ վահանը ստեղծվում է ԼԱՏՕ–ի հովանու ներքո և ԱՄՆ–ի ամնիջական նախաձեռնությամբ՝ առաջին հերթին Ռուսաստանից պաշտպանվելու համար: Պարզապես պետք էր տալ մեկ այլ երկրի անուն, որը վերջին տարիներին քննադատվում է հատկապես միջազգային հանրության կողմից, որին բազմիցս մեղադրել են ահաբեկչության հովանավորման մեջ: Մի խոսքով՝ պարզապես շահարկվում է Իրանի անունը:

Սակայն Իրանում կարծես թե առաջին արձագանքն էր այդպես կոչող ու հակասական: Արդեն 2012 թ. Իրանի տոնայնությունը փոխվեց Թուրքիայում տեղադրվող ռադարի կապակցությամբ: Իրանի ԱԳՆ Աբբաս Սալեհին նշեց, որ ԵվրոՊոս ռադարը Թուրքիայում իրենց համար խնդիր չի դառնա: Նա հիշեցրեց ԱՄՆ–ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի ելույթն առ այն, որ «Ռադարը տեղադրվում է ի պաշտպանություն Իսրայելի, մասնավորապես՝ Իրանից եկող հրթիռային հնարավոր սպառնալիքի դեմ»: «Մենք նշանակություն չենք տալիս Քլինթոնի խոսքերին: Մենք հավատում ենք թուրքական առաջնորդների խոսքերին: Չեն կարծում, որ այդ ռադարը կդառնա խոչընդոտ Իրանի համար, և վստահ են, որ Թուրքիան սիոնիստական վարչակարգի ձեռքին չի դառնա գործիք: Մենք չէինք ցանկանում, որ Թուրքիայում կառուցվեր այդպիսի ռադար, բայց ընդունվեց նման որոշում», — նշել է Սալեհին<sup>14</sup>:

Կարծում ենք, Իրանի դիրքորոշման փոփոխությունը մեծապես կապված է նաև միջազգային հանրության դիրքորոշման կոչությունների հետ: Իրանը զգում է, որ գնալով իր մեկուսացումը շատ ավելի օրակարգային է դառնում և նոր խնդիրներ հարևանների հետ, այն էլ այս պահին, երբ Եվրամիությունը արգելանք է դրել Իրանի նավթի վրա, ու այն հարևանի, որ Իրանից գնում է նավթի 30%–ը, իրապես պետք չեն:

<sup>7</sup> Турция—новая мишень для иранских ракет, 26.11.2011, [http://mignews.com/news/disasters/world/261111\\_205907\\_21619.html](http://mignews.com/news/disasters/world/261111_205907_21619.html)

<sup>8</sup> Президент Ирана раскритиковал решение Турции о размещении на ее территории радаров НАТО, 05.10.2011, <http://www.itar-tass.com/c96/239926.html>

<sup>9</sup> Иран грозит оставить Турцию наедине с курдской проблемой из-за установки американского радара, <http://www.regnum.ru/news/polit/1442881.html>

<sup>10</sup> «Քրդստանի ազատ կյանք» կուսակցություն, որը գործում է Իրանում (Partiya Jiyana Azad a Kurdistanê– (PJAK).

<sup>11</sup> Иран грозит оставить Турцию наедине с курдской проблемой из-за установки американского радара, 07.09.2011, <http://www.regnum.ru/news/polit/1442881.html>

<sup>12</sup> Iranian experts observe malfunctions in NATO radar system in Turkey, Tehran Times, Last Update: 13 February 2012, <http://tehrantimes.com/politics/95421-iranian-experts-observe-malfunctions-in-nato-radar-system-in-turkey>

<sup>13</sup> Рогозин отрицает переговоры о создании системы ПРО Россией, Ираном и Китаем, <http://www.nr2.ru/policy/350368.html>

<sup>14</sup> Иран заявил, что радар ЕвроПРО в Турции не станет для него проблемой, <http://www.itar-tass.com/c12/319999.html>



## ՇԵՂԻՆԱԿՆԵՐ

### **Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է քաղաքական իսլամի ու քեմալիզմի պատմությամբ, ինչպես նաև Թուրքիայի արտաքին քաղաքականությամբ:

### **Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության և ներքաղաքական խնդիրների ուսումնասիրությամբ:

### **Անուշ Հովհաննիսյան**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Զբաղվում է Թուրքիայի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրներով, տարածաշրջանային քաղաքականությամբ, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հարցերով:

### **Լևոն Հովսեփյան**

Աշխատում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում որպես գիտաշխատող: Զբաղվում է Թուրքիայի պաշտպանության ու անվտանգության, ինչպես նաև արտաքին քաղաքական խնդիրների ուսումնասիրությամբ:

### **Արծրուն Հովհաննիսյան**

Ռազմական փորձագետ է: Զբաղվում է տարածաշրջանային ռազմաքաղաքական հիմնախնդիրների ու զարգացումների ուսումնասիրությամբ:

## AUTHORS

### **Vahram Ter-Matevosyan, PhD**

is a Senior Research Fellow at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of his research include the problems of Political Islam, Kemalism and Turkish foreign policy.

### **Gohar Iskandaryan, PhD**

is an Assos. Prof. and Senior Research Fellow at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include the problems of domestic politics and foreign relations of Islamic Republic of Iran.

### **Anush Hovhannisyan**

is a Senior Research Fellow at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include the problems of modern history and regional policy of Turkey, also problems of Armenian genocide.

### **Levon Hovsepyan**

is a Research Fellow at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of his research include the problems of defense and security sector, foreign policy of Turkey.

### **Artsrun Hovhannisyan**

is specializing in the field of defense analysis. Main topics of his research activities deal with the problems of military-political and regional issues.

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x100 1/16:  
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ:

•  
ՏՊԱԳՐՎԵԼ Է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-Ի ՏՊԱՐԱՆՈՒՄ  
0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28  
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am  
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am